

ՆԻԿՈԼԱՅ ԳՈՎԳԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅՈՒՆ ԳԵՂԱՍԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԱԲԱԿԱՆ ԴԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ**



ԵՐԵՎԱՆ 2004

Հրատարակվում է Հայոց ցեղասպանության  
90-ամյակի առթիվ Հայոց ցեղասպանության 90-ամյակին  
սկիզբած միջոցառումների կազմակերպման  
Պետական հանձնաժողովի որոշմամբ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NIKOLAY HOVHANNISYAN

THE ARMENIAN GENOCIDE IN  
THE INVESTIGATING LIGHT OF THE  
ARABIC HISTORICAL SCIENCE



---

YEREVAN 2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

943, 925 «1915»

ՆԻԿՈԼԱՅ ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

A II  
90043



ԵՐԵՎԱՆ 2004

# Գիրքը հրատարակվել է պետական աջակցությամբ

ՀՏԴ 941(479.25)

ԳԱԴ 63.3(2Գ)

Հ 854

Տպագրվում է ՀՀ ԳԱՍ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Արշակ Փոլազյան  
պատմ. գիտ. դոկտոր

Դովիաննիսյան, և. Չ.  
Գ 854 ԳԱՏՈՑ ՏԵՂԱՍԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔՆ-  
ՆԱԿԱՆ ԼՈՒՅԱԽ ԼԵՐՔՈՒ/– Եր.: Ծանգակ–97, 2004.– 208 էջ:

Այլապատկերում նվիրված է արարելան պատմագրության մեջ 1916 թ. Կարոց ցեղասպանության հարցերի քննարկմանը, որը հայտնի չէ ընթերցող լայն հասարակությանը, անգամ մասնագիտական մեղ շրջաններին. Լուսարանվում են արարական պատմագիտության կողմից Կարոց ցեղասպանության աներադասելու դրուպատմանը և սրվում է այդ էթնոագնություն նվիրված արարական պատմագիտական գրականության դասարանումը:

Դերմանը հանգամանույնն աներադասում է արարական պատմագիտության մեջ սեղ գրան անմախի ստանգրայն հարցերի լուսարանությամբ, ինչպես արարական հետազոտությունների կողմից Կարոց ցեղասպանության պատմությունի ռ բնույթի բացահայտումը, նրա լուսանացման մարտնեղ և մեխանիզմները: Դատուկ նշվում է այն պարագան, որ արար պատմագրաններն են շրջանառության մեջ դրել Արևմտցից՝ Կայսառամուտայուն ներջ՝ այն հանարելու XX դարի մարդկության պատմության տի էջ: Մեղադրում է, որ արարական պատմագիտությունը Օսմանյան կայսրությանը դիտում է որպես բարդերի և կոտորածների կրիթ, որը կիրառվում էր ոչ միայն հայերի, այլև արարների, հույների, ալոսների, սլավոնների և Եգիպտական նրա ոչ բուրջ մարդկությունների նկատմամբ: Կարոց հարցերից է նաև Օսմանյան կայսրության քանակական բնույթի բացահայտումը՝ խառնուրդի բուրջների «գերազանցության» քանակական սեռաների վրա, որը հանույն կերպով հերքվում է արարական պատմագիտության կողմից:

Դատուկ բարություն է դարձվում հայ պարականներն արարների ցրաբարուն մարդկությանն ուղերթանը ցեղասպանության ոմոյակ մասնաններում:

Անմագրությունը հարցնադրված է հայ մարդկության պատմության մասնագիտներին, արարագիտներին, քուրթագիտներին և ընդհանրապես արևելագիտներին, միջազգայնագիտներին, ցեղասպանագիտներին, բուսանդներին և բուրջ նրանց, ուն հետազոտում են պատմության հարցերը:

Հ 0503020913 2004 թ.  
0063(91)–2004

ԳԱԴ 63.3(2Գ)

ISBN 99930-2-980-7

© Դովիաննիսյան և., 2004 թ.  
© Ծանգակ–97, 2004 թ.

Նվիրում եմ 1915 թ. Հայոց եղեւնի բոլոր նահապետների հիշատակին, բոլոր առարքիների Հայ ազգիկներին, որոնց չթողեցին Հարսնանալ, և բոլոր Հայ ազաներին, որոնք այս աշխարհից Հեռացան անմորուս:

Նվիրում եմ բոլոր ազնիվ արարներին, որոնք 1915 թ. մղձավանդային օրերին ազնիվութուն և Համարձակութուն ունեցան՝ օգնության մեռք մեկնելու Հայ գաղթականներին՝ նրանց բաժին Հասած Գողգոթայի հանապարհին:

Հեղինակ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄ-  
ՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ԱՐԳԵԼԱՓՈՎ-  
ՍԱՆ ՓՇԱԼԱՐԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սինչև 1965 թվականը Հայոց ցեղասպանությունը, թեմատիկ առումով, պատկանում էր այն հիմնախնդիրներին, որոնց ուսումնասիրության վրա խորհրդային Միությունում արգելք՝ տաքու էր դրված: Նա, պատկերավոր ասած, գտնվում էր փշալարերով պատված գաղափարական արգելափակման գոտում: Իսկ նման գոտիներով նախկին խորհրդային Միությունը բավականին հարուստ էր:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը չէր մտնում խորհրդային Հայաստանի ակադեմիական ինստիտուտների և քաղծրագույն ուսումնական հաստատությունների գիտահետազոտական ծրագրերում, չէր խրախուսվում և չէր ստանում համապատասխան ֆինանսավորում: Ուստի այդ հույժ կարևոր թեման գիտական ուսումնասիրության ոլորտից տեղափոխվել էր հայերի քննադատական գրույցների և մասնավոր լրտոյից խոսակցությունների բնագավառը: Դա էլ քիչ քան չէր, թեզ կուզ այն առումով, որ այդ յուրօրինակ ուղիով ցեղասպանության թեման պահպանում էր իր ներկայությունն ու կարևորությունը հայ իրականության մեջ և հայերի մի սերնդից փոխանցվում հաջորդ սերնդին: Այդ գործում քաջառիկ էր հայ ցեղասպանության վերապրողների առաքելությունը, որոնք կենդանի պահեցին այդ մեծ ողբերգության շունչը, չթողեցին որ այն հանգչի կամ վերածվի մի սովորական երևույթի:

Բնականաբար, հարց է ծագում, թե որոնք էին Հայոց ցեղասպանության ուսումնասիրության վրա խորհրդային իշխանությունների կողմից

դրված փականքի պատճառները: Դրանք մի քանիսն են, սակայն մենք այստեղ կառանձնացնենք դրանցից միայն երկուսը, որոնք, մեր կարծիքով, ունեն առանցքային նշանակություն:

Առաջին պատճառը պետք է փնտրել թուրք-խորհրդային հարաբերությունների բնույթի մեջ, որը մենք կանվանեինք տարօրինակ, անքնական, անսկզբունքային և անզամ անբարոյական:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում գալու՛ իշխանության գլուխ՝ բոլշևիկյան ղեկավարությունը Լենինի, Տրոցկու, Ստալինի, Ջինուվսի և այլոց գլխավորությամբ Թուրքիայի նկատմամբ գրավեց մի տարօրինակ քաղաքականություն, որը առաջացրել էր քաղաքագետների և դիվանագիտության մեջ թրծված գործիչների տարակուսանքը: Երանք բարեկամական հարաբերություններ հաստատեցին արյունարբու սուլթաններին և դաժանությամբ նրանց ոչնչով չզիջող երիտթուրքերին հաջորդած Թուրքիայի նոր ղեկավարների հետ, որոնց գլուխ էր կանգնած Մուստաֆա Թեմալը, որը ժամանակին նույնպես եղել էր «Իթքիհաղ վե Թերակի» կամ երիտթուրքերի կուսակցության անդամ, օսմանյան սուլթանական քանակի գեներալ, որի շարքերում նա ծառայել էր մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը և Օսմանյան կայսրության կործանումը:

Թվում էր, թե այդ պարագան պետք է ետ պահեր արդարության դրոշի ներքո հանդես ելող բոլշևիկյան ղեկավարությանը կամ զոնե ստիպեր նրան զգուշություն ցուցաբերել քեմալականների՝ այդ նախկին երիտթուրքական ու սուլթանական գործիչների նկատմամբ, որոնց ձեռքերը նույնպես մինչև արմունկները թաքախված էին Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների՝ ասորիների, արաբների, հույների և սլավոնական ժողովուրդների արյան մեջ, և որոնք նույնպես մասնակից էին եղել Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության կազմակերպմանն ու իրագործմանը:

Բայց նրանք այդպես չվարվեցին: Տարված լինելով համաշխարհային հեղափոխության անիրատես գաղափարներով՝ ռուսական բոլշևիկյան ղեկավարությունը քեմալական Թուրքիային կարևոր տեղ հատկացրեց սոցիալիստական հեղափոխությունն արտահանելու իր քաղաքականության մեջ, նրան դիտարկելով որպես Արևելքում հեղափոխության իրագործման առաջակետ՝ Ֆորպոստ: Այդ ոչնչով չիժմանալոված տեսակետը պատճառ հանդիսացավ, որպեսզի ռուսական նոր ղեկավարությունն անդրկովկասյան, միջինասիական և մերձավորարևելյան





այդ թեզին, և, ընդհակառակը, արգելվում էր ամեն մի խոսք, հողված կամ մեծնազրություն, եթե նրանք չէին համապատասխանում խորհրդային այդ «հիմնադրույթին»: Խորհրդային գրաքննությունն ի դեմս ամենազոր Գլավլիտի վերին աստիճանի աշակերտ ու անողոք էր այդ հարցում և որևէ վրիպում թույլ չէր տալիս:

Չայոց ցեղասպանությունը կամ ավելի լայն առումով Չայկական հարցն այս անգամ դարձավ «ԼեՆին-Քեմալ քարեկամության» զոհը: Չայտարարվեց և հայ պատմագրությանը պարտադրվեց այն տեսակետը, թե «Չայկական հարցն արդեն լուծված է» և իբր թե այն «լուծել է» խորհրդային իշխանությունը: Իսկ նա այդ հարցը «լուծել» էր շատ տարօրինակ ու անբնական տարբերակով: Նա ոչ միայն համաձայնվել էր, որ Արևմտյան Չայաստանն ամբողջությամբ, երզրումի, Սվասի, Խաղբերդի, Բիթլիսի, Կանի և Դիարբաքրի վիլայաքներով հանդերձ մնա քեմալական Թուրքիայի տիրապետության տակ, այլև Արևելյան Չայաստանի Կարսի մարզը և Սուրմալուի շրջանը զիջել էր քեմալական Թուրքիային, իսկ Դարաբաղն ու Նախիջևանը հանձնել պատմության մեջ առաջին անգամ 1918 թ. քաղաքական բառերաբեմում հայտնված թուրքական երկրորդ պետությանը՝ Ադրբեջանին: Դրանից հետո այլևս խոսք չէր կարող լինել Չայոց ցեղասպանության մասին, քանի որ Չայկական հարցն ու Չայոց ցեղասպանությունը միևնույն մեղալի երկու կողմերն են: Նրա մի կողմում հայկական բնօրրանի կամ հայկական տարածքների հարցն է, իսկ մյուս կողմում՝ սեփական բնօրրանում հայերի բնաջնջման կամ ցեղասպանության հարցը:

Եվ պարահորսը կայանում է նրանում, որ անգամ Ի. Ստալինի մահից հետո խորհրդայի ղեկավարությունը չփոխեց իր դիրքորոշումն այդ հարցում: Խորհրդային քննակալը, խորհրդային-թուրքական հարաբերությունների ճարտարապետը, մահացավ 1953 թ. մարտին, տակայն նույն թվականի մայիսին կրկին ԽՄԳՄ արտաքին գործերի մինիստրի պաշտոնը զբաղեցրած և տասնամյակներ շարունակ Ի. Ստալինի աջ թևը հանդիսացած Վ. Մոլոտովը շտապեց պաշտոնապես հայտարարել և Թուրքիային հանգատացնել, որ Չայաստանը տարածքային ոչ մի պահանջ չունի Թուրքիայի նկատմամբ, որի սահմաններում է գտնվում Արևմտյան Չայաստանը և Արևելյան Չայաստանի մի մասը: Դա չտեսնված նվեր էր Թուրքիային, որին խորհրդային Միության ղեկավարությունն ազդանշան էր ուղարկում առ այն, որ Թուրքիան Ստալինի մահ

հից հետո անգամ անհանգստանալու որևէ հիմք չունի, քանի որ խորհրդային կողմից նրան տարածքային պահանջներ չի ներկայացվելու:

Իսկ դա նշանակում էր, որ ցեղասպանության վրա դրված տաբուն կահպանվելու էր և այդ թեման ուսումնասիրողների համար մնալու էր փշալարերի մյուս կողմում:

Չայոց ցեղասպանության վրա դրված տաբուի երկրորդ զլխավոր պատճառը կայանում էր նրանում, որ խորհրդային իշխանությունը Չայոց ցեղասպանությունը դիտում էր որպես «հայկական նացիոնալիզմը» մշտապես սնող մի վտանգավոր աղբյուր, որի ակունքներն լիզմը» մշտապես սնող մի վտանգավոր աղբյուր, որի ակունքներն «անհրաժեշտ էր փակ պահել: Խորհրդային «տեսաբանների» կարծիքով, թույլատրել գրադվել Չայոց ցեղասպանության հարցերի ուսումնասիրության մը՝ նշանակում էր խրախուսել հայկական նացիոնալիզմը և նրա գոյության ու ծաղկման համար ստեղծել պարարտ միջավայր: Իսկ դա հակասում էր խորհրդային պաշտոնական գաղափարախոսությանը, չնայած այն հանգամանքին, որ Չայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը ոչ մի կապ չուներ նացիոնալիզմի և նրա բորբոքման հետ:

Չայոց ցեղասպանությունը մեծ ողբերգություն ապրած ժողովրդի բազմադարյան պատմության քաղկագուցիչ մասն է կազմում և նրա ուսումնասիրությունը միանգամայն բնական էր, քանի որ համաշխարհային պատմության մեջ դեռևս չի արձանագրված մի դեպք, որ որևէ ժողովուրդ կամուփին հրաժարվի իր պատմությունից: Սակայն խորհրդային դեկալարությունը, Մոսկվայում նստած «հանճարեղ» առաջնորդները, որոնց քաղաքականության մեջ «չի կարելին», բռնությունը, արգելքը և պարտադրանքը ամենառեական տարրերն էին, հեռու էին նման նրբույթյուններն ընթրեելուց: Նրանք գտնում էին, որ Չայոց ցեղասպանության թյուններն խոսելը, առավել ևս պրոպագանդելը նշանակում էր յուրատեմասին խոսելը, առավել ևս պրոպագանդելը նշանակում էր յուրատեմասին խոսելը, առավել ևս պրոպագանդելը նշանակում էր յուրատեմասին խոսելը, առավել ևս պրոպագանդելը նշանակում էր յուրատեմասին խոսելը: Իսկ հայկական ազգայնամոլության դրսևորում, որն իր հերթին կարող էր վնասել խորհրդային-բուլղարական «քարեկամական» հարաբերություններին:

Սիս այսպիսի մտեցման արդյունքում Չայոց ցեղասպանության լեզաչ ուսումնասիրությունը հայտնվեց արգելված թեմաների ցանկում: Դրա հետևանքով Չայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում հայոց պատմագրության մեջ 1920-1950-ական թվականներին հաստատվեց մի ժամանակաշրջան, որը կարելի է կոչել «պարտադրված լուսյան շրջան»:

Այստեղ խոսքը գնում է խորհրդային պատմագրության մասին: Ցեղասպանության ուսումնասիրության վրա դրված արգելքը չէր տարածվում և չէր էլ կարող տարածվել սփյուռքահայ և արտասահմանյան անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, ինչպես նաև արաբական պատմագրության վրա: XX դարի երկրորդ կեսում անեց նրանց հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության խնդիրների նկատմամբ, որը կապված էր նաև գիտական նոր ուղղության՝ ցեղասպանագիտության ծնավորման հետ: Այդ բնագավառում իրենց գնահատելի ներդրումն ունեցան արաբ պատմաբանները:

Սակայն Հայոց ցեղասպանությունը, չնայած խորհրդային իշխանությունների սահմանած տարուին, այդ ամբողջ պատմական ժամանակաշրջանում, այդուհանդերձ, պահպանեց իր կանոթ նշանականությունն ու առաջատար տեղը հայ ժողովրդի պատմական ինքնագիտակցության, ազգային ինքնության և նրա ազգային իրավունքների ու օրինական պահանջատիրության համակարգում՝ սպասելով ավելի նպաստավոր պայմանների՝ դուրս ժայթքելու և ստիպելու, որ հայ ժողովրդի պատմության այդ հիմնախնդիրը գիտականորեն արծարծվի հրապարակավ և առանց որևէ սահմանափակման:

\*\*\*

1965 թվականը շրջադարձային եղավ խորհրդային Միությունում և Հայաստանում Հայոց ցեղասպանության հրապարակային ճանաչման և ուսումնասիրության առումով: Երա վրա դրված տարուն վերացվեց, և նա վերադարձավ իր օրինական դաշտը: Դա կապված էր այն փոփոխությունների հետ, որոնք 1950–1960–ական թվականներին աստիճանաբար տեղի ունեցան խորհրդային Միության, այդ թվում և խորհրդային Հայաստանի քաղաքական–հասարակական կյանքում և զաղափարախոսության բնագավառում: Եկատի ունեցք Ի. Ստալինի մահը, անհատի պաշտամունքի քննադատությունը, բռնությունների վրա հիմնված ստալինյան ներքին դաժան և արտաքին ագրեսիվ քաղաքականության պսակագերծումը, խրուչչովյան ձնհալ կոչված ազատականացման չիբերայիզացիայի քաղաքականությունը, և այլ դրական տեղաշարժեր, որոնք խանդավառությամբ ընդունվեցին խորհրդային Միության քոլոր ժողովուրդների կողմից: Երկրում հաստատվեց նոր, համեմատաբար տանելի բարոյական–քաղաքական մթնոլորտ, մար-



Այդ բոլորի անմիջական արդյունքը եղավ այն, որ բացվեցին դռները Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրության առջև: Այդ օրվանից նա դարձավ հայագիտության և արևելագիտության գերակա ուղղություններից մեկը Հայաստանում: Հանրապետությունում լայն ծավալ ստացավ Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրությունը:

Ցեղասպանության ուսումնասիրության կարևոր կենտրոնի վերածվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը, որտեղ թուրքագետների հետ միասին հետազոտական լուրջ աշխատանքներ սկսեցին նաև արաբագետները: Ի տարբերություն այլ մասնագիտությունների ներկայացուցիչների, որոնք հիմնական ուշադրությունը սեռեցին ռուսական, անգլիական, ֆրանսիական, գերմանական, ամերիկյան և այլ աղբյուրների ուսումնասիրության վրա, որը, հասկանալի է, շատ կարևոր էր և անհրաժեշտ, արաբագետներն իրենց ուսումնասիրության առարկա դարձրեցին արաբական աղբյուրները և արաբական պատմագրությունը, որն անսպասելի արդյունքներ տվեց: Նա հետազոտողի առջև բացեց բոլորովին նոր, մինչ այդ անհայտ աշխարհ, որն ընդլայնեց մեր պատկերացումները Հայոց ցեղասպանության մասին, քաջահայտեց բոլորովին նոր շերտեր՝ կապված նրա ծրագրավորման, իրականացման, իրագործման մեխանիզմների, ծավալների ու հետևանքների հետ:

Այդ տարիներին տողերիս հեղինակը գլխավորում էր ԳԳ ԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժինը և Հայոց ցեղասպանության նկատմամբ արաբական երկրների պատմաբանների, քաղաքական և հասարակական գործիչների, կուսակցությունների, միությունների ու ընկերությունների դիրքորոշման հարցը դարձավ Արաբական երկրների բաժնի գիտահետազոտական աշխատանքների անձնակարևոր բնագավառներից մեկը, որը շարունակվում է մինչև օրս:

Առաջին ոչ մեծ ծավալի հոդվածը, որը նվիրվեց արաբների դիրքորոշմանը Հայոց ցեղասպանության նկատմամբ, պատկանում էր տողերիս հեղինակի գրչին, որը հրատարակվեց «Սովետական Հայաստան» ամսագրի 1965 թ. մարտի համարում՝ «Արաբ ժողովրդի ասպանցակությունը» խորագրի ներքո<sup>1</sup>: Նրանում քննարկվում էր երիտթուրքերի քաղաքականությունը Հայոց ցեղասպանության կազմակերպման և կի-

<sup>1</sup> Ն. Գոլիանիայան, Արաբ ժողովրդի ասպանցակությունը, «Սովետական Հայաստան», էր., 1965, № 3:

րաժման հարցում և ցույց տրվում այն ազնիվ կեցվածքը, որ արաբները գրավեցին հայ գաղթականների նկատմամբ՝ օգնության ձեռք մեկնելով իրենց տարածքներով անցնող հայ տարագիրներին:

Այդ հողվածը լայն արձագանք գտավ Սփյուռքում և անմիջապես տպագրվեց նաև Քեյրութում լույս տեսնող «Էջեր գրականության և արվեստի» ամսագրում, որի խմբագիրը և հրատարակիչը սփյուռքահայ հայտնի մտավորական և գրող Արմեն Դարյանն էր<sup>2</sup>:

Այդ քուռն և հուզիչ օրերին մեր հաջորդ հողվածը տպվեց դարձյալ «Սովետական Ֆայաստան» ամսագրում, որն այդ օրերին վերածվել էր «Սովետական Ֆայաստան» խոսակողին: Այն նվիրված էր արաբ հասա-հայ մտավորականության խոսակողին: Այն նվիրված էր արաբ հասա-հայ մտավորական և քաղաքական գործիչ Ֆայեզ էլ Դուսեյնի «Տարրերը Ֆայաստանի մեջ» գրքին, որը լույս էր տեսել դեռևս 1916 թ., և որը պատկա-տանի էր Ֆայոց ցեղասպանությանը նվիրված առաջին սակավ աշխա-տությունների քննի, որի շնորհիվ համաշխարհային հասարակայնու-թյան ավելի լայն խավեր իրազեկ եղան հայերի նկատմամբ նրիտոր-թյան կիրառած ոճրագործությանը<sup>3</sup>:

Եվ այսպես, Ֆայոց ցեղասպանության լուսաբանությանը նվիրված արաբ պատմագրության ուսումնասիրության սկիզբը Ֆայաստանում արդեն դրված էր:

Վերոնշյալ հողվածներին հաջորդեցին մեր մի շարք աշխատու-թյուններ, որոնք լույս տեսան նաև արաբական երկրներում արաբե-րեն<sup>4</sup>:

Քննարկվող հիմնախնդրի տեսակետից առանձնահատուկ նշանա-կություն ունեցան երկու աշխատություն:

Առաջին՝ 1999-ական թվականներին Արևելագիտության ինստի-տուտի գիտաշխատողները մախապատրաստեցին մի կոլեկտիվ մե-տադրություն, որը չուներ իր նախադեպը: Գեղինակների այդ խումբն ուսումնասիրության առարկա դարձրեց քուրքական, ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, գերմանական և արաբական պատմագրու-թյունը Ֆայոց ցեղասպանության մասին, որը լույս տեսավ ռուսերեն

2 «Էջեր գրականության և արվեստի», Քեյրութ, 1995, No 5:

3 Գեղանցիկ, Արևմտահայ մտավորականները (Ֆայեզ էլ Դուսեյնի «Տարրերը Ֆայաստանի մեջ» գրքի մասին), «Սովետական Ֆայաստան», եր., 1995, No 4:

4 No 11 և Գեղանցիկ, Արևմտահայ մտավորականները և արաբների մարտահարկությունը, «Սո-Սաֆիր», Քեյրութ, 24/IV 1980: Լույսի՝ Ֆայ-տարրերի քուրքական կյանքը, «Սո-Ֆայ», Գաշե, 1980, No 11-12: Լույսի՝ 1915 թ. ցեղասպանությունը արաբների պատմության մեջ, «Ասդա Արաբստո», Քեյրութ, 1992, No 6 և այլն:

1993 թ.<sup>5</sup> «Հայաստանի նոր պատմությունը արտասահմանյան արդի հեղինակների աշխատություններում» խորագրով: Առաջին անգամ փորձ արվեց ամփոփել արտասահմանյան հեղինակների մտածելակերպը և նրանց կողմից տրված գնահատականները Հայոց ցեղասպանությանը: Այդ կոլեկտիվ մեմագրության արաբական պատմագրությանը վերաբերող գլուխը՝ «Արաբական պատմագրությունը Հայաստանի նոր պատմության մասին», գրվել է մեր կողմից<sup>6</sup>: Դա որոշ իմաստով նախորդ տարիներին այդ բեմայի՝ ուղղությամբ մեր կատարած աշխատանքների հանրագումարն էր:

Երկրորդ աշխատությունը, որը մեր հետազոտությունները հանրագումարի բերելու առումով նույնպես փուլային նշանակություն ունեցավ, դա անգլերեն 2002 թ. հրատարակած մեր «Հայոց ցեղասպանությունը. Հայասպանություն» մեմագրությունն էր<sup>6</sup>, որի առանձին հատվածներ նվիրված են Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական պատմագիտության հարցերին: Այդ հարցերի լուսաբանությանն առանձին գլուխ է հատկացված նաև մեր «Արաբական երկրների պատմության» երկրորդ հատորում<sup>7</sup>:

Այսպիսով՝ քառասուն երկար և ճիգ տարիների ընթացքում մեր ուշադրության կենտրոնում է եղել հայոց 1915 թ. ցեղասպանության նկատմամբ արաբական պատմագիտության մտածելակերպի ուսումնասիրությունը: Արաբ հեղինակների քննական մտածելակերպը Հայոց ցեղասպանության հիմնահարցերին, նրանց փորձերը խորամուխ լինել XX դարի այդ մեծագույն ոճրագործության պատճառների ու քննարկի մեջ, որը նրանք հետազոտել են Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ սուլթանական և երիտթուրքական կառավարողների ռասայական քաղաքականության համատեքստում, այս հույժ կարևոր հիմնախնդիրների լուսաբանությունը հանդիսացել է մեզ համար գերակա նշանակություն ունեցող գիտական ուղղություն, որին մենք հատկացրել ենք մեր գիտական գործունեության չորս տասնամյակը:

Լախորդ տարիներին կատարված աշխատանքները և կուտակումները մեզ հնարավորություն տվեցին ընդհուպ մոտենալ մեր վաղուց փայլալայած ծրագրի իրագործմանը՝ ընթերցողի սեղանին դնել մի մե-

5 H. Оганесян, Арабские историографы новой истории Армении — Новая история Армении в трудах современных зарубежных авторов, т. 1, Ер., 1993.

6 Nikolay Hovhannisyan, The Armenian Genocide, Armenocide, Yerevan, 2002.

7 Լ. Պոլխանժյան, Արաբական երկրների պատմություն, 3. II. Օսմանյան տիրապետության շրջան. 1516—1918, Երևան, 2004:



Նագրական ուսումնասիրություն, որն ամբողջապես նվիրված լինել է 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբ հետազոտողների ստեղծած հարուստ և ինքնատիպ գիտական ժառանգության, նրա նշանակության և կարևորության բացահայտմանը:

Ֆակատագրին շնորհապարտ ենք, որ մեզ այդ երջանիկ հնարավորությունն ընձեռվեց Հայոց Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին:

A II  
90043



## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱ- ԴԱՌԱԼՈՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒ- ԹՅԱՆ ՍՈՏԻՎԱՅԻՆ

**1915** թ. Հայոց ցեղասպանությունը կամ Մեծ եղեռնը իրագործվեց Օսմանյան կայսրությունում և նրա կազմակերպիչն ու կիրառողը եղավ 1908 թ. իշխանության գլուխ եկած «Իթթի-հադ վե Թերակի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը, որն ավելի շատ հայտնի է «երիտասարդ թուրքեր» կամ «երիտթուրքեր» հորջորջումով: Այդ կուսակցությունը հանդիսացավ օրինական ժառանգորդը դարերի ընթացքում օսմանյան սուլթանների կիրառած դաժան քաղաքականության, որի նպատակն էր բռնության մեջ պահել հայերին և կայսրության մյուս թուրք ոչ թուրք ժողովուրդներին, և ոչնչի առջև կանգ չառնել պահպանելու կայսրության տարածքային ամբողջականությունը: Ակնհայտ է այն զենետիկական կապը, որ գոյություն ունի սուլթանների և երիտթուրքերի քաղաքականության միջև՝ հանդեպ կայսրության ոչ թուրք ժողովուրդների, միայն մի տարրերությամբ, որ վերջիններս ավելի դիվային մեթոդներ կիրառեցին այդ հրեշավոր քաղաքականությունն իրականացնելու ճանապարհին: Երիտթուրքերը և նրանց ղեկավար հանցախումբը Թալեաթի, Էնվերի և Ջեմալի գլխավորությամբ հանդիսացան «Հայկական հարցը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով լուծելու» տեսադրույթի կիրառողները, որը դեռևս 1884 թ. բանաձևել էր Օսմանյան կայսրության ստորագամ վարչապետ Սաիդ Քուլուկ փաշան, որը, այնուհետև, իր քաղականության հիմքում դրեց սուլթան Աբդուլ Համիդ II: Այդ արյունաբորու սուլթանն իր կառավարման 33 տարիների ընթացքում (1876–1909 թթ.) փորձում էր անշեղորեն կենսագործել այդ տեսադրույթը և, քայլ առ քայլ, հայերի պար-

քերաքար ջարդերի ու կոտորածների միջոցով, ծտում էր հասնել իր վերջնական նպատակին, սակայն չհասցրեց: Նրա անավարտ գործի շարունակողները հանդիսացան երիտթուրքերը, որոնք հայերին ֆիզիկապես վերացնելու քաղաքականությունը քարծրացրեցին պետական քաղաքականության մակարդակի, որը հիմք է տալիս Օսմանյան կայսրությունը տիպաբանորեն դասել ցեղասպան (գեոցիդային) պետությունների շարքը:

Ահա այս և հարակից այլ հարցերն են դարձել արաբական պատմագիտության քննարկման առարկա:

Բնականաբար, հարց է ծագում, քե ինչու են արաբ հեղինակները՝ պատմաբանները, քաղաքագետները, միջազգայնագետները, տնտեսագետները, անգամ լրագրողները, անդրադարձել Գայոց ցեղասպանության հիմնախնդիրներին և այդքան մեծ տեղ հատկացրել նրան ինչպես ուսումնասիրություններում: Այլ կերպ ասած, որն է դրա մոտիվացիան, շարժառիթը կամ դրդապատճառը:

## **ԴԱՍԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Արաբական պատմագրությունը հարուստ է Գայաստանի և հայ ժողովրդի պատմական տարբեր դարաշրջանների և հիմնախնդիրների ուսումնասիրության ավանդույթներով և նրա կողմից Գայոց ցեղասպանությանն անդրադառնալը բնավ էլ առաջին դեպքը չէ, ուստի և պատմագրությանն անդրադառնալը բնավ էլ երկու ժողովուրդների պատմական հակառակ է: Դա պայմանավորված է երկու ժողովուրդների պատմական դարավոր կապերով և մի շարք պատմաաշխարհագրական ու քաղաքական գործոններով:

Արաբները և հայերը պատկանում են միևնույն աշխարհագրական տարածաշրջանին՝ Մերձավոր Արևելքին, և ըստ էության հանդիսանում են եթե ոչ անմիջական, ապա մերձավոր հարևան ժողովուրդներ: Դարեն ի վեր նրանց միջև գոյություն են ունեցել տարաբնույթ շփումներ, հաստատվել քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ, որոնք երբեմն շատ ինտենսիվ բնույթ են կրել, հատկապես այն ժամանակ, երբ նրանց քաղաքական ճակատագրերը սերտորեն միախլուսված են եղել միմյանց հետ: Դա մասնավորապես բնորոշ է եղել պատմական այն դարաշրջաններին, երբ գոյություն են ունե-

ցել անկախ հայկական և արաբական պետություններ, կամ էլ երբ նրանց հայտնվել են միևնույն պետական կազմավորումների մեջ: Այդպես է եղել մ.թ.ա. I դարում, երբ արաբական մի շարք երկրներ՝ Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Միջագետքը և այլ տարածքներ, ընդիուտ միմյն էզիպտոսը, մտան Տիգրան Մեծի հայկական կայսրության մեջ<sup>8</sup>: Այդ մասին նշվում է նաև արաբական պատմագրության մեջ, մասնավորապես Ուսման աբ-Թուրքի «Էջեր հայ ազգի պատմությունից» աշխատության «Տիգրան Մեծ թագավորը Ղամասկոսում» և «Տիգրան Մեծ թագավորը Հալեբում» ենթաբաժիններում<sup>9</sup>: Եւ ընդգծում է, որ Հայաստանն իր փառքի զագաթնակետին հասավ Տիգրան Մեծի դարաշրջանում, երբ նրա տարածքներին միացվեցին այլ երկրներ և «նրա տիրապետությունը հյուսիսում տարածվեց մինչև Բաիր Ղազվին (Կասպից ծով — Ն. Գ.), արևմուտքում մինչև Կապադովկիա, արևելքում մինչև Խրաքի սահմանները, իսկ հարավում նրա տիրապետությունը տարածվեց մինչև հրեաների պետությունը, այն բանից հետո, երբ նա նվաճեց Փյունիկիան և Սիրիան»<sup>10</sup>:

Այդ մասին գրել են նաև Ֆուադ Հասանը Հաֆիզը, Մրվան ալ-Մուդավարը և այլ արաբ հեղինակներ:

Իսկ VII-IX դարերում Հայաստանը Արաբական խալիֆայության մասը կազմեց<sup>11</sup>:

Արաբների և հայերի ցաղաքական ճակատագրերը կրկին միահյուսվեցին, երբ արաբները XVI դարում, սկսած 1516 թվականից, իսկ հայության արևմտյան հատվածը XVII դարում՝ 1639 թ., հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում, ընկան միևնույն սուլթանական լծի տակ:

Արաբ-հայկական կապերի հարուստ պատմությունն իր արտացոլումն է գտել արաբական դասական պատմագրության մեջ IX դարից՝ նրա ձևավորումից ի վեր: Արաբ պատմիչները՝ Բալազուրին, Թարադին, Մասուդին, Մաքրիզին, Իբն Սսիրը, Իբն Շադդադը, Աբուլ Ֆիդան և շատ ուրիշներ, ինչպես նաև աշխարհագիրները՝ Իսբախրին, Իբն Հավթալը, Յակուտ ալ-Համավին, Իբն Բատուտան և այլք, մեզ հասած իրենց ձե-

8 Գ. Մանանդյան, Քենսլան պետություն հայ ժողովրդի պատմության, Գ. Ա. եր., 1984/1:

9 Ուսման աբ-Թուրք, Ասֆահար մե թարիքի ալ-ումմա ալ-սլեյմնիյա — էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960, էջ 56-57 (Արաբալեզու աշխատություններն առաջին անգամ տրված են հայերեն տառադարձությամբ, իսկ պնդիտն՝ հայերեն թարգմանությամբ — Լ. Գ.):

10 Լույս տեսած էջ 58:

11 Ե. Պովիսնովսկայ, Արաբական երկրների պատմություն, Գ. I. Արաբներ VII դարի մինչև 1516 թ., եր., 2002:

Օսգիր մատյաններում և ճանապարհորդական ուղեգրություններում մշտապես անդրադարձել են հայկական բեմային, միջնադարյան Հայաստանի պատմությանը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ նրանցից ոմանք, ինչպես Յակոբ ալ-Համավին կամ Իբն Բատուտան ճղել են Հայաստանում և գրի առել իրենց տեսածն ու լսածը:

Դրանք կարևոր աղբյուրներ են, որոնք զայիս են հարստացնելու հայագիտության աղբյուրագիտական հիմքը և նպաստում հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության դաշտը:

Սակայն դա միակողմանի չի եղել: Մինչ այդ, սկսած VII դարից, իսլամի առաջացումից և արաբական պետության կազմավորումից, արաբական բեմային անդրադարձել են և արաբների, նրանց կրոնի, պատմության, կենցաղի, նվաճողական քաղաքականության և հայ-արաբական հարաբերությունների մասին արժեքավոր տեղեկություններ են քուրկան հարաբերությունների մասին արժեքավոր տեղեկություններ են քուրկան հայ պատմիչները՝ Մեթոսը, Ղևոնդը, Թովմա Արծրունին, Հովհաննիս Դրասխանակերտցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին և այլն հայ մատենագիրներ:

Արաբական պատմագրության այդ ավանդույթները, որի սկզբնավորողները նրան արաբական դասական պատմագրության հիմնադիր վորողները, շարունակվեցին հետագա դարերում, ընդհուպ մինչև մեր օրերը: Կարելի է հավաստել, որ ավելի քան տասնմեկ դար արաբ պատմիչների ու պատմաբանների հետաքրքրությունը Հայաստանի, հայերի, միջնորդական պատմության ու մշակույթի, այսինքն՝ հայկական բեմայի նկատմամբ ոչ միայն չի նվազել, այլև, ընդհակառակը, XX դարում, մասնավորապես նրա երկրորդ կեսին և XXI դարի սկզբներին ավելի է ուժեղացել:

Փաստորեն կարող ենք ասել, որ այսօր մեր աչքի առջև ձևավորվում է արաբական հայագիտությունը, որն իր պատվավոր և օրինական տեղն է գրավում համաշխարհային հայագիտության շարքերում:

Արաբ պատմաբանները, պահպանելով արաբական պատմագրության ավանդույթները, Հայաստանի պատմությունն ուսումնասիրելիս թրան ավանդույթները, Հայաստանի սովորաբար անդրադառնում էր Հայաստանի պատմագրությունը սովորաբար անդրադառնում էր Հայաստանի պատմագրության, և դա՛ այն պարզ պատճառով, որ տանին որպես մեկ ամբողջության, և դա՛ այն պարզ պատճառով, որ Հայաստան աշխարհն ինքն այդպիսին էր: Ժամանակակից արաբ պատմաբանները Հայաստանի և հայ ժողովրդի նոր պատմությունն ուսումնասիրելիս շեշտն ավելի շատ դնում են նրա մի հատվածի՝ Արևմտյան Հայաստանի վրա, որը բացատրվում է երկու հանգամանքով: Առաջին՝

սկսած 1639 թ., Հայաստանը դադարեց միասնական լինելուց և բաժանվեց Արևելյան Հայաստանի, որը մտավ Պարսկաստանի կազմի մեջ, և Արևմտյան Հայաստանի, որը Օսմանյան կայսրության մաս կազմեց: Երկրորդ՝ ստեղծված պայմաններում, արաբ ուսումնասիրողները նախապատվությունը տալիս են Արևմտյան Հայաստանին, որը նվաճվել էր Օսմանյան կայսրության կողմից, որի մի մասն էին կազմում նաև արաբական երկրները, որոնք թուրքերի կողմից նվաճվել էին ավելի վաղ՝ 1516 թ.: Գետնաբար՝ Արևմտյան Հայաստանի պատմությունը նրանց համար ավելի մոտ է, իսկ նրա խնդիրներն էլ նրանց համար ավելի հասկանալի:

Այսպիսով, երբ արաբ պատմագիտության կողմից Հայոց ցեղասպանության հարցերի ուսումնասիրությանը մոտենում ենք արաբական բազմադարյան պատմագրության ավանդույթների տեսանկյունից, կամ էլ քննարկում ենք այդ ավանդույթների շրջանակներում, ապա ակնհայտ է դառնում արաբական ժամանակակից պատմագիտության մոտիվացիայի օրինաչափ լինելը:

## ՆԵՐՔԻՆ ԿԱՍ ԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՐԺԱՄԻԹԸ

Հայկական հարցին և ցեղասպանությանը արաբ հեղինակների անդրադասումալը մի ուրիշ դրդապատճառ էլ ունի, որը մենք կանվանեինք ներքին կամ արաբական շարժառիթ:

Անկախություն վերագտած և իրենց ազգային ինքնիշխան պետությունները ստեղծած արաբ ժողովուրդների մոտ ծնավորվում է իրենց ազգային պատմագիտությունը, որը նորովի է մոտենում իրենց ազգային պատմական խնդիրների ուսումնասիրությանը և անցյալի հանգուցային հարցերի լուսաբանությանը: Տեղի է ունենում արաբների պատմության զանազան փուլերի ու հիմնահարցերի արժեքների վերազնուհատում և նոր մոտեցումների դրսևորման հիմքի վրա ծնավորվում է ազգային հայեցակարգ արաբների պատմության վերաբերյալ: Դա քնական գործընթաց է, որը նկատվում է նախկինում օտար, գաղութային լծի տակ գտնված և իրենց անկախությունը նվաճած համարյա թուր ժողովուրդների մոտ:

Արաբները փորձում են հասկանալ իրենց պատմության մութ ծալքերը, որոնց մեջ առաջնահերթ տեղ է զբաղվում գտնել այն հարցի պա-



ուղղութեամբ: Ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, առաջին հերթին Չայնական հարցում օսմանյան կառավարության քաղաքականության ուսումնասիրությունը, կօզնի նրանց՝ արաքական, սեփական պատմության ավելի խոր ու բազմակողմանի հետազոտությանը, մանավանդ նրանք համոզված են, որ երիտթուրքերն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծրագրել էին հայերի հետ միասին ոչնչացնել նաև արաքներին՝ որպես էթնոս:

Դրանով է պայմանավորված նաև արաքների կողմից հայերի և կայսրության մյուս ժողովուրդների՝ ասորիների ու հույների, արքուլիամիդյան և երիտթուրքական շրջանի պատմության հարցերի ուսումնասիրության յուրահատկությունը, որը տարբերվում է նախորդ դարաշրջանների մոտեցումից:

Եթե արաքական դասական կամ միջնադարյան պատմագրությունը ներառում էր Չայաստանի պատմության բոլոր հարցերը՝ քաղաքականություն, մշակույթ, տնտեսություն, կրոն, կենցաղ և այլն, ապա ժամանակակից արաք պատմագրությունն այդ սկզբունքը չի պահպանում: Նրան ավելի շատ հետաքրքրում է հայերի քաղաքական և իրավական դրությունն Օսմանյան կայսրությունում, օսմանյան սուլթանների և երիտթուրքերի ազգային քաղաքականությունը հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, հայկական ջարդերի պատճառները և այլն: Նման մոտեցումն ամենայն հավանականությամբ պետք է բացատրել այն հանգամանքով, որ վերոհիշյալ հարցերը հավասարապես վերաբերում էին նաև արաքներին, որոնք նույնպես նմաբովում էին օսմանյան կառավարողների հալածանքներին ու բռնություններին, ինչպես հայերը, հույները, ասորիները, քուլդարները, սերբերը և մյուս ժողովուրդները: Նրանք գտնվում էին նույնպիսի իրավազուրկ պայմաններում, ինչպես վերոնշյալ ժողովուրդները, չնայած նրանց մուսուլման լինելու հանգամանքին:

Օսմանյան կառավարողների ներքին և ազգային քաղաքականության ուսումնասիրությունը հայկական իրականության օրինակով, պետք է, ըստ արաք պատմաբանների և քաղաքագետների մտահղացման, օգնի իրենց ավելի հիմնավոր կերպով բացահայտելու այդ քաղաքականության պանթուրքիստական, ռասայական էությունը:

Այսպիսով Չայոց ցեղասպանության և, ընդհանրապես, XIX դարի վերջին քառորդի և XX դարի առաջին քսանամյակի հայերի պատմու-



քյան ուսումնասիրությունը կոչված է օգնելու արաբների՝ ավելի խորը հասկանալու նույն ժամանակաշրջանի իրենց սեփական պատմությունը:

Արաբական պատմագիտությունը Հայոց ցեղասպանության, դրան նախորդած և հաջորդած շրջանների պատմության մեջ, փնտրում է իրեն հուզող հարցերի պատասխանը:

Եվ կարծում ենք, որ նա, մթերողովական առումով, սխալված չէ իր ընտրության մեջ:

## ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ

Արաբները քերես միակ ժողովուրդն են, որ ազգովին ականատես են եղել առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի են կատարված մեծ ողբերգությանը: Նրանք դա չեն մոռացել, որը դրոշմվել է նրանց հիշողության մեջ: Ուստի և Հայոց ցեղասպանության լուսաբանությանը նվիրված արաբական պատմագիտության շարժառիթների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արաբների պատմական հիշողության պարագան: Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբ-հիշողության պարագան: Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբ-հիշողության պարագան հիշողությունը խթանիչ ազդակ է հանդիսանում՝ ունեցի պատմական հիշողությունը խթանիչ ազդակ է հանդիսանում՝ ուսումնասիրելու XX դարի այդ առաջին ոճրագործությունը և արաբական պատմագիտությանը հատուկ երանգ է տալիս, քարժրացնելով նրա արժեքը, որի շնորհիվ արաբական պատմագիտությունն առանձնանում և հատուկ տեղ է գրավում Հայոց ցեղասպանությանը նվիրված մյուս ազգերի ու ժողովուրդների աշխատությունների շարքում՝ չկրկնելով նրանցից և ոչ մեկին:

Կարող են առարկել, որ քաջի արաբներից, Հայոց Մեծ եղեռնի ա-կանատեսներ են եղել նաև թուրքերը, քրդերը և չերքեզները: Այո, դա կանատեսներ են սակայն մի «փոքր» տարրերությամբ: Նրանք «ականատես-այդպես է, սակայն մի «փոքր» տարրերությամբ: Նրանք «ականատես-ներ» են եղել որպես հայկական կոտորածների դերակատարներ, որի ժամանակ կատարված դժբաբաշխաման համաձայն՝ թուրքերը եղել են ժամանակակից դերակատարները, իսկ քրդերը և չերքեզները՝ նրանց գլխա-վոր օգնականները: Սակայն դա չի նվազեցնում քրդերի և չերքեզների հանցանքն ու մեղքի բաժինը:

Արաբներն ականատեսներ եղան ականալից: Իսկ դա կապված է նրանց հանցամանքի հետ, որ երիտթուրքերի ծրագրերի համաձայն՝ հայե-րի մի մասին կոտորելու էին իրենց նստավայրերում, իսկ մի մասին էլ

բռնի տեղահանելու էին արաբական երկրներ այն հույսով, որ նրանց արյունոտ գործի շարունակողները կլինեն սիրիական և իրաքյան անապատները և մուսուլման արաբները: Եվ նրանք այդպես էլ վարվեցին՝ համապատասխան այդ մշակված և հաստատված ծրագրի:

Եվ անհայտ տեղահանության պատճառով հայ զաղթականների քարավաններ հայտնվեցին արաբական երկրներում՝ անցնելով արաբների տարածքներով, անապատներով, նրանց գյուղերի ու քաղաքների միջով, սարսափահար արաբ բեդվինների ու ֆելլախների այքերի առաջ: Չայոց Գողգոթայի վկաները հանդիսացան Դեյր ազ-Զորի, Ռասուլ-Այնի, Մեսքենեի, Չալեբի, Մոսուլի, Բաքուբայի, Բաղդադի, Նահրալ-Ռեմարի, Շատտալ-Արաբի ավերին փռված արաբական բազում բնակավայրերի բնակիչները: Դրանք հայերի համար սոսկ աշխարհագրական անուններ չեն, այլ նրանց ողբերգության խոստում վկաները:

Մական արաբներն անտարբեր և անկարեկից ականատեսներ և դիտորդներ չեղան: Նրանցից շատ-շատերը, արհամարհելով թուրքական խստագույն հրամանները, որով մահվան սալաոնալիքի տակ արգելվում էր որևէ օգնություն ցույց տալ արաբական տարածքներով անցնող հայոց քարավաններին, համարձակորեն իրենց օգնությունն էին առաջարկում հյուծված, սովահար ու հիվանդ հայերին՝ փրկելով նրանցից շատ-շատերի, մանավանդ երեխաների կյանքը: Դրա դիմաց մեծաթիվ ազնիվ արաբներ թուրք դահիճներին վճարել են իրենց կյանքով:

Անհայտ իրողությունը, զարհուրելի տեսարանները, անպաշտպան հայերի մահվան դատապարտված լինելը, թուրքական մուլեոանդ ամբոխի դահճային քստմնելի արաբքը, այս բոլորը խոր հետք է թողել արաբների, ականատեսների, հասարակ մարդկանց ու պաշտոնյաների, մտավորականների ու բեդվինների պատմական հիշողության մեջ: Դրա ազդեցությունն այնքան խորը և անմոռաց է եղել, որ այն բոլորը, որը կուտակվել ու համապատասխան նստվածք է տվել արաբների հիշողության մեջ, այսօր մեզ՝ հայերիս է վերադարձվում այդ քարի ու ազնիվ ժողովուրդի պատմաբանների ուսումնասիրություններով, որոնք նվիրված են օսմանյան կառավարողների ռասայական և մարդատյաց ազգային քաղաքականության ուսումնասիրությանն ու Չայոց ցեղասպանության հարցերի լուսաբանությանը:

Այս պարագան Չայոց Մեծ եղեռնին անդրադառնալու արաբական ժամանակակից պատմագրության մեջ իր նախադեպը չունեցող շարժառիթներից մեկն է:



րուհիների հարցասիրությանը և բավարարել նրանց հետաքրքրությունը նրանց համար ոչ երկրորդական համարվող այդ խնդրի հանդես:

Սիա այս պարագան նույնպես խթանել է, որ արաբ հետազոտողներն անդրադառնան հայկական կոտորածներին ու Հայոց ցեղասպանությանը, այսինքն՝ նրանք անդրադառնում են հարզի արմատներին, քանի որ առանց այդպիսի մտեցման, հնարավոր չէր տալ սպառիչ պատասխաններ: Ելնելով դրանից՝ նրանք գտնում են, որ արևմտահայերի առաջին ալիքը արաբական երկրներ գաղթեց 1894–1906 թթ., երբ սուլթան Աբդուլ Համիդ II–ը սանձազերծեց հայկական կոտորածները Կոստանդնուպոլսում, Սաաունում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում:

Սակայն արաբական երկրներում հայերի հիմնական զանգվածի հաստատվելու գլխավոր պատճառը, ինչպես նշում են արաբ հեղինակները, 1915 թ. ցեղասպանությունը և դրա ընթացքում օսմանյան դահիճների կողմից կիրառած հայերի բռնի տեղահանման քաղաքականությունն էր: Չեռնաբար, եզրակացնում են արաբ պատմաբանները, հայերը կամավոր կերպով չեն լքել իրենց հայրենիքը և հաստատվել արաբական երկրներում: Նրանց հաստատվելը արաբական այս կամ այն երկրում օսմանյան իշխանությունների հալածանքների, բռնությունների ու քարոզերի քաղաքականության արդյունք էր, որը նրանք հետևողականորեն կիրառել են հայերի նկատմամբ, և որը նրանք կիրառում էին նաև արաբների նկատմամբ: Ահա սա է, որ նրանք փորձում են քաջատրել արաբական նոր սերունդներին: Եվ այդ պատճառով է, որ նրանք՝ հայերը, արաբական երկրներում արժանացան քարյացակամ վերաբերմունքի, օգնության ու աջակցության, ինչպես արաբական քնակչության, այնպես էլ արաբական իշխանությունների կողմից:

Այդ հարցերին հանգամանորեն իրենց աշխատություններում անդրադարձել են Ֆուադ Հասան Հաֆիզը, Մրվան ալ–Մուդավաթը, Մատուդ Դահիլը, Ադնան աս–Սայիդ Գուսեյնը և այլ արաբ հեղինակներ, իսկ Ա. Հարունանին արաբական երկրներում ազգային փոքրամասնություններին նվիրված իր ախատության մեջ առանձին բաժին է հատկացրել հայ համայնքներին<sup>12</sup>:

Այսպիսով՝ ամփոփելով կարելի է ասել, որ արաբական պատմագիտության կողմից Հայոց ցեղասպանության հարցերին անդրադառնալը

12 A. Hourani, *The National Minorities in the Arab World*, London, 1947.

միանգամայն պատճառաբանված և անհրաժեշտ մոտեցում է: Դա ոչ թե առանձին հեղինակների սիրողական մակարդակով կատարված գործ է, այլ մշակված և գիտակցված գիտական ուղղություն, որը բխում է նախ և առաջ բուն արարական պատմության հարցերն ավելի խոր, բազմակողմանի ու համոզիչ հետազոտելու և լուսաբանելու պատմական անհրաժեշտությունից:

Սակայն տեղի է ունեցել հետաքրքիր երևույթ: Հայոց ցեղասպանությանն անդրադառնալը օգնում է արարական պատմության ավելի հիմնավոր ուսումնասիրությանը, որն իր հերթին մեծապես օժանդակում է Հայոց ցեղասպանության ավելի խորագնին քննարկմանը:

Դրանում է կայանում այս ֆենոմենի առանձնահատկությունը և կարևորությունը:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԱ-  
ԲԵՐՅԱԼ ԱՐԱՔ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՇԽԱ-  
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

**Օ** անթությունը արարական պատմագիտությանը և արար ինդի-  
նակների Չայոց ցեղասպանությանը նվիրված աշխատություն-  
ներին բերում են այն համոզման, որ դրանք իրենց բնույթով, քննարկվող  
հարցերի առումով և ծավալներով տարբերվում են միմյանցից: Սակայն  
այդ տարբերությունը չի վերաբերում Չայոց ցեղասպանության ընդհա-  
նուր գնահատականին: Չայոց ցեղասպանության գնահատականի հար-  
ցում, նրա պատճառների, բնույթի, կատարողների, հանցագործների ու  
պատասխանատուների հարցերում, նրանք ընդհանուր առմամբ միա-  
կարծիք են և, ըստ մեզ, միանգամայն ճիշտ դիտքերից են լուսաբանում  
այդ հիմնահարցերը: Ուրեմն, այդ տարբերությունը վերաբերում է միայն  
ու միայն արար գիտնականների աշխատություններում Չայոց  
ցեղասպանությանը հատկացված տեղին, ծավալին, քննարկվող հարցե-  
րի շրջանակներին, օգտագործված աղբյուրներին ու զրականությանը,  
հարցերի լուսաբանության խորությանը և նմանատիպ այլ խնդիրների:  
Այդ առումով, նրանք աշխատությունները կարելի է քաժանել երեք խմբի:

**ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՒՔ ԱՄԲՈՂՉՈՒԹՅԱՄԲ  
ՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԼՎԻՐՎԱԾ ԵՆ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ**

Աշխատությունների այս կամ առաջին խումբը բնե թվաքանակով  
ամենաշատը չէ, սակայն քննարկվող հարցերի առումով, խորությամբ և



բյուճը, որը բացառիկ աղբյուր է Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար: «Ես տեսա ու լսեցի վատահեղի աղբյուրներից, — գրում է նա, — այն բուրբը, ինչ կատարվում էր հայերի հետ»<sup>13</sup>:

Գտնվելով Պիարբաքրում՝ նա տեսնում է հայ գաղթականների թշվառ քարավանները, որոնք թուրքական արյունախում գինվորների ուղեկցությամբ գալիս էին Էրզրումից, Խարբեռլից, Քիթլիսից, Վանից և այլ վայրերից: Լա իր տեսածը լրացնում է հավաստի տեղեկություններով, որ ձեռք է բերում աշիրաթների առաջնորդներից, որոնք լավատեղյակ էին երիտթուրքերի քաղաքականությանը, ծրագրերին և գիտեին, թե ինչ հրեշավոր դեպքեր են կատարվում հայերի հետ վիլայաթներում, գավառներում և ճանապարհների վրա: Հենվելով այդ հավաստի տեղեկությունների վրա՝ նա գրում է. «Ովքեր կկարդան այս գիրքը, պետք է իմանան, որ այն, ինչ գրված է, ճշմարտություն է, դա միայն քիչ մասն է այն մեծ զագանությունների, որ գործադրում էին թուրքերը հայ ազգի իրավունքների նկատմամբ»<sup>14</sup>:

Հեղինակին հաջողվում է Պիարբաքրից անցնել Բասրա, ապա Բոմբեյ, Հնդկաստան, որտեղ և ավարտում է իր աշխատությունը 1916 թ. հուլիսի 21-ին և նույն տարին էլ լույս ընծայում: Պետք է ենթադրել, որ հետաքրքրությունը այդ գրքի նկատմամբ մեծ է եղել, քանի որ այն 1917–1918 թթ. թարգմանվում և հրատարակվում է նաև ֆրանսերեն և անգլերեն:

Աշխատությունը լույս է տեսել տարբեր վերնագրերով: Արաբերեն, ինչպես նշել ենք, վերնագրված է «Ջարդերը Հայաստանի մեջ»: Այս գիրքը թարգմանվել և հրատարակվել է հայերեն նույն վերնագրով՝ ավելացնելով «ակամատեսի վկայություններ» բառերը<sup>15</sup>: Ֆրանսերեն այն լույս է տեսել «Մի արաբ մուսուլմանի վկայությունը հայերի անձնության և կոտորածների մասին» վերնագրի ներքո<sup>16</sup>:

Այս գրքի՝ նման հաջողության զաղտնիքներից մեկը կայանում է նրանում, որ նա հանդիսանում է ակամատեսի վկայություններ և ձեռք է բերել սկզբնաղբյուրի նշանակություն:

13 Ջաեզ ալ-Պոսեյն, Մազաթի ին Արմենիա — «Ալ-Ասաթիթ ալ-Արաբիյա հալլա ըսթիմա իրադար ալ-Արման» — Ջալդերը Հայաստանի մեջ — Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության ողբերգության մասին, Բեյրութ, 1968, էջ 48:

14 Լա ին տեղում:

15 Ջաեզ ալ-Պոսեյն, Ջալդերը Հայաստանի մեջ (ակամատեսի վկայություններ), Կաթեր, 1960:

16 P. el-Ghossain, Temoignage d'un Arabe musulman sur l'innocence et le massacre des Arméniens, Bombay, 1917.



Տիպաբանորեն դասակարգման այս խմբին են պատկանում արաբ հայտնի պատմաբան, մասնագետների շրջանում մեծ հեղինակություն վայելող Մուսա Պրենսի երեք աշխատությունները, որոնք իրենց բովանդակությամբ և Հայոց ցեղասպանության հարցերի լուսաբանության առումով լրացնում են մեկը մյուսին: Առաջինը ֆրանսերեն հրատարակված նրա «Մի անպատիժ ցեղասպանություն. Արմենոցիդ» ստեղծված նրա (մոտ 600 էջ) աշխատությունն է<sup>17</sup>, որը նա գրել է 1967–1973 թթ.: Ուշագրավ է, որ նա իր աշխատանքները սույն ուսումնասիրության վրա, ինչպես ինքն է մատնանշում, սկսել է 1967 թ. ապրիլի 24–ին, այսինքն՝ այն օրը, որը հայերը համայն աշխարհում նշում են որպես Հայոց ցեղասպանության սկիզբ:

Կա այդ աշխատության ավելի սեղմ տարբերակը, որը հեղինակը հատուկ պատրաստել է ներկայացրել է Հանցագործության կանխման միջազգային II կոնգրեսին, որը կայացել է 1967 թ. հուլիսի 10–14–ը Փարիզում<sup>18</sup>:

Եվ, վերջապես, ֆրանսերեն գրված այս երկու աշխատությունների հիմնական բովանդակությունը և գլխավոր հարցադրումներն իրենց արտացոլումն են գտել 1996 թ. արդեն արաբերեն հրատարակված «Հայերի կոտորածները, հանցագործություն մարդկության դեմ» աշխատության մեջ<sup>19</sup>:

Մուսա Պրենսի այս աշխատությունները կարևոր նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար: Նրանում քննության առարկա են հանդիսանում այնպիսի հանգուցային հարցեր, ինչպես, արմենոցիդը համիդյան ռեժիմի ժամանակ, երիտրուղբերը և արմենոցիդը, բուրբերի, գերմանացիների, ավստրիացիների և ԱՄՆ-ի երկրների պատասխանատվությունը, արմենոցիդի հետևանքները և այլն:

Անկայն Մուսա Պրենսի ամենամեծ և, մեր կարծիքով, ամենակարևոր ներդրումը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում կայանում է նրանում, որ նա առաջինն էր, որ գեներցիդի ազդեցությունը շրջանառության մեջ դրեց «Արմենոցիդ»՝ «Հայասպանու-

17 Moussa Prince. Un génocide impuni. L'Armenocide. Lebanon, 1975.  
 18 Moussa Prince. Un génocide impuni. L'Armenocide. Introduction, Paris le Cadre des crimes contre l'humanité. Avec la collaboration de Marie-Angèle M. Prince, 1967, Heidelberg Press, Lebanon.  
 19 Մուսա Քրենս, Մարազար ալ-Մոսա, Ջառախ դիտա ալ-Ֆուսայիյա — Հայերի կոտորածները, 1996: [Արաբերենում «մարազար» բառը նշանակում է «բարբեր», «կոտորածներ», սակայն ստուգաբանված է նաև «ցեղասպանություն» իմաստով — և. Յ.]

թյուն» եզրը, որը միանգամայն ճիշտ կերպով, բազմակողմանիորեն և ամբողջականորեն է արտացոլում Հայոց ցեղասպանության կամ հայասպանության եռությունը, քնույթը, քնորոշ գծերը և առանձնահատկությունները:

Հայոց ցեղասպանության հարցերի քննարկմանը, կարելի է ասել, մի ամբողջ շարք է նվիրել լիբանանցի պատմաբան և քաղաքական գործիչ Ասլիհ Ջահր աղ-Ղինը: Նա այդ հարցը քննարկում է նախ և առաջ թուրանիզմի, օսմանյան իշխանությունների կողմից հայերի և արաբների թոնի թուրքացման և պանթուրքիզմի քաղաքականության համատեքստում: Դրան է նվիրված նրա «Հայերը և արաբները թուրանիզմի և սիոնիզմի միջև»<sup>20</sup> աշխատությունը, որտեղ նա համապատասխան զուլխներ է հատկացրել երիտթուրքերի և արաբների, հայերի և երիտթուրքերի փոխհարաբերությունների քննությանը: Իմաստային առումով այդ խնդրին է հարում նրա մեկ այլ աշխատությունը, որտեղ նա հայ-արաբական հարաբերությունները քննարկում է հայերի և արաբների ճակատագրերի միասնական լինելու տեսանկյունից՝ ելնելով այն բանից, որ նրանք, ինչպես նշել ենք, երկար ժամանակ զտնվել են միևնույն օսմանյան տիրապետության տակ<sup>21</sup>: Նրա այս ուսումնասիրություններին քնորոշ է XIX դարի վերջերի և XX դարի սկզբների հայերի և արաբների պատմության հանգուցային հարցերի համատեղ քննությունը, որը, անշուշտ, բարձրագնում է նրանց գիտական նշանակությունը:

Ասլիհ Ջահր աղ-Ղինի աշխատությունների մեջ իր կարևորությամբ առանձնանում է նրա ծավալուն ուսումնասիրությունը, նվիրված օսմանյան իշխանությունների քաղաքականությանն Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշմանը, որն ընդգրկում է բավականին մեծ ժամանակահատված՝ XIX դարի վերջին քառորդից մինչև XX դարի առաջին քառորդը<sup>22</sup>: Նա այստեղ Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը քննարկում է իր ամբողջության մեջ և դիտարկում այդ երկու երևույթները իրենց փոխկապակցության մեջ: Գեղիճակի դա-

20 Ասլիհ Ջահր աղ-Ղին, Այսպես զա ալ-արաբ թուրանիզա զա սիոնիզա — Դեպքը և առաջնորդ թուրանիզմն և սիոնիզմի միջև, Քեյրեք 1994:

21 Ասլիհ Ջահր աղ-Ղին, Այսպես ալ-արաբիա ալ-արաբիա զա ալ-մադիթ ալ-մուշարաթ — Արաբա-հայկական բարեկամությունը և միասնական ճակատագիրը, Քեյրեք, 1994:

22 Ասլիհ Ջահր աղ-Ղին, Արաբա ալ-թուրանիզա ալ-օսմանիա իի Արևմտյա ալ-Գարբիա զա մազլիժ ալ-Լուճա ալ-դուլաբիա միժա-Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և միջազգային ուժերի դիրքորոշումը նրա հանդեպ, Քեյրեք, 1996: Այս աշխատությունը նրա ոչկոտորակ դիտարկման է, որ նա սրբազանել է 17 944 Արևելադիտարկյալ ինտելեկտուալ գիտական խելերթյուն և արժանացել իր հայրենի ցեղական աստիճանին:



լույս տեսնող «Արև» ամսագրի խմբագիրն է, որի էջերում հանդես են գալիս եզրափակող ակադեմիկոս պատմաբանները, քաղաքական և մշակութային գործիչներն իրենց ուշագրավ հոդվածներով՝ նվիրված հայոց պատմության, գիտության ու մշակույթի զանազան հարցերին և հայ-առարական պատմամշակութային հարաբերություններին:

2002 թ. լույս տեսավ նրա նոր աշխատությունը, որտեղ նա քննարկում է Հայկական հարցը, նրա զագացումներն ու փոխակերպումները 1878 թ. Քեռիլի կոնգրեսից մինչև 1923 թ., մինչև Լոզանի կոնֆերանսը<sup>26</sup>: Այս հետաքրքիր ուսումնասիրությունը քաղկացած է երեք մասերից՝ «Համիդիականները և հայերը. 1878–1909 թթ.», «Իթթիհադականները և հայերը. 1909–1918 թթ.» և «Քեմալականներն ու հայերը. 1919–1923 թթ.»։ Քաժիմների վերնագրերն արդեն հուշում են քննարկող հարցերի շոքանակները և ժամանակագրական սահմանները: Մեզ համար, քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից, հատկապես առանձնահատուկ նշանակություն ունեն առաջին երկու մասերը, որտեղ մանրամասն քննարկվում են Հայկական հարցի առաջացումը և նրա շահարկումը միջազգային ուժերի կողմից, 1894–1896 թթ. հայկական կոտորածները, թուրանիզմի ծագումը և զարգացումը, հայկական ցեղասպանությունը որպես ողբերգություն և այլն: Նա իր ուսումնասիրության հիմքում դրել է իր իսկ կողմից մնակերպված հետևյալ անտարկելի միտքը. ցեղասպանությունը, որ իրականացրին օսմանյան իշխանությունները արդուլիամիդյան, երիտթուրքական և քեմալական դարաշրջաններում ընդդեմ հայ ազգի, արվեց հիմնելու համար թուրանական մի պետություն՝ հիմնված «մեկ ազգ և մեկ կրոն» սկզբունքի վրա<sup>27</sup>:

Ձեռնատիկ առումով ուրույն տեղ է գրավում Ադնան աս-Սայիդ Յուսեյնի «Ինքնորոշման իրավունքը. Հայկական հարցը որպես օրինակ» աշխատությունը<sup>28</sup>: Յեղիմակը նախընտրել է Հայկական հարցը և դրա հետ կապված Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրել և քննարկել միջազգային իրավունքի, առաջին հերթին ազգերի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից: Նա հենց այդ տեսանկյունից է քննարկում և գնահատում այնպիսի հիմնախնդիրներ, ինչպես Հայկական հարցը և մեծ տերությունների շահերը, Սան Ստեֆանոյի պայմանագիրը, Քեռիլ-

26 Մուսամմադ Քիֆայ ալ-Իմամ, Ալ-Կադիա ալ-արճանիա Ֆի դավաթի ալ-սամանիա, 1878–1923 — Ղազևան հարցը օսմանյան պետության մեջ, 1878–1923, Կաթիբ, 2002:

27 Նույն տեղում, էջ 9:

28 Ադնան աս-Սայիդ Յուսեյն, Գալ քուլտիբի ալ-մաթիա, Ալ-Կադիա ալ-արճանիա նուսուզաթան — Ինքնորոշման իրավունքը: Ղազևան հարցը որպես օրինակ, Քեյրոս, 1966:



Սակայն նա պարունակում է քավականին հետաքրքիր Առաջաբան, որը պատկանում է արաբ պատմաբան Ումար Դուկակի գրչին, որը վերնագրակած է «Արաբները և հայերը»: Այստեղ նա մեծ տեղ է հատկացնում պատմաագիտական հարցերին և նշում, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամենց արաբների հետաքրքրությունը հայերի և նրանց պատմության վերաբերյալ: Նա առանձնացնում է հայոց նոր և նորագույն պատմության, այդ թվում և ցեղասպանության հարցերին անդրադարձած արաբ հեղինակների աշխատությունները, այդ թվում Ֆայեզ ալ-Դոսեյնի, Ասադ Դադիրի, Մրվան ալ-Մուդավարի, Ֆուադ Գասան Գաֆիզի և արաբ այլ հեղինակների գործերը, ու կատարում արժեքավոր կոմենտարներ<sup>31</sup>:

Ումար Դուկակին հայ-արաբական հարաբերությունները դիտարկելով փոխադարձ կապակցության մեջ, անդրադառնում է նաև հայ պատմաբանների աշխատություններին, որոնց նվիրված են արաբների պատմությանը, և քաղժր գնահատում այդ գործերը: Նա հատկապես ընդգծում է «Նիկոլայ Գովհաննիսյանի, Արամ Տեր-Ղևոնդյանի, Երվանդ Քասունու» և այլոց աշխատությունները<sup>32</sup>, ցանկանալով ջուրջ տալ արաբ ընթերցողին, որ ոչ միայն արաբներն են գրում հայերի պատմության վերաբերյալ, այլև հայերն են իրենց աշխատություններն անբողջությամբ նվիրում արաբների առջև կանգնած հիմնախնդիրների լուսարարությանը:

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՐ ԳԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայոց ցեղասպանությանը նվիրված արաբ պատմաբանների աշխատությունների դասակարգման սանդղակի երկրորդ աստիճանը գրավում են արաբ պատմաբանների այն աշխատությունները, որոնք նվիրված են ընդհանրապես հայոց պատմության ուսումնասիրությանը և որոնց շոգանակներում նրանք քննարկում են նաև Հայոց ցեղասպանության հիմնահարցերը:

31 Նույն տեղում, էջ 21–28:

32 Դադիր ի պատմական հանրագիտությունում, էջ 25:



Մրվան ալ-Մուդավարն այդ բոլոր նշելուց հետո շեշտում է, որ «կարևոր է համարել մեծ տեղ տալ Գայկական հարցին»<sup>38</sup>: Ընդ որում, այդ հարցը, ինչպես նշում է հեղինակը, նա քննարկում է երկու հարթության վրա: Առաջինը՝ իր իսկ խոսքերով ասած՝ տեղական հարթության վրա, որի տակ նա հասկանում է այն ժամանակաշրջանը, երբ հայերը գտնվում էին Օսմանյան կայսրության կազմում՝ XIX դարում և XX դարի սկզբներին, և ենթարկվում էին օսմանյան կառավարության բռնություններին ու հալածանքներին, և, երկրորդը, միջազգային հարթության վրա, երբ Գայկական հարցը քննարկվում է միջազգային օրենքներին համապատասխան:

Այս արժեքավոր զրքի հեղինակն առանձնացնում է մի կարևոր հաճախմանը ևս, որը սկզբունքային նշանակություն ունի: Ես քննարկում է հայ-արաբական հարաբերությունները, շեշտելով նրանց դիրքորշման միասնական լինելը՝ նրանց նկատմամբ օսմանյան կայսրական քաղաքականության հանդեպ: Իսկ դա «բուրանիզմի քաղաքականությունն էր հայերի նկատմամբ և բուրջացման քաղաքականությունը արաբների նկատմամբ»<sup>39</sup>:

Սիա այս հայեցակարգային տեսակետներն են ընկած Մրվան ալ-Մուդավարի աշխատության այն հատվածների հիմքում, որտեղ քննարկվածն առարկա են հանդիսանում Գայկական հարցը և Գայոց ցեղասպանությունը:

Կառուցվածքային առումով և քննարկվող նյութի ընտրության տեսակետից, նույն սկզբունքների վրա է խարսխված եգիպտացի հեղինակ, մասնագիտությամբ իրավաբան, Կահիրեում երկար տարիներ որպես դատախազ աշխատած և միջազգային իրավունքի հմուտ գիտակ Յուսուֆ Ղասան Զաֆիզի աշխատությունը<sup>40</sup>: Գեղինակն ուսումնասիրության համար ընտրել է, հիրավի, մի վիթխարի պատմական ժամանակաշրջան՝ հնագույն դարերից մինչև խորհրդային շրջանը ներառյալ, քննարկվածն առարկա դարձնելով նաև Խորհրդային Գայաստանի պատմությունը, տնտեսությունը, գիտությունը և մշակույթը (ընդհանուր ժավալը կազմում է 576 էջ):

Աշխատության հինգ բաժիններից երկուսը հատկացված են Արևմտյան Գայաստանի նվաճմանը Օսմանյան կայսրության կողմից,

38 Ես էն տեղում, էջ 12:

39 Ես էն տեղում:

40 **Յուսուֆ Ղասան Զաֆիզ**, *Մարիմ ալ-Ղասարի ալ-արմանի մունզուր ալ-բասրայարի Իսթրաալ ալ-լասուն-Նալ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև այսօր*, Կահիրե, 1956:





սին, նաև ռուսական արյուրները, ինչպես նաև որոշ հայ պատմաբան-ներին աշխատությունները, որոնք հրատարակված են ռուսերեն<sup>43</sup>։

Ֆուադ Չասան Չաֆիզի երկասիրությունը, որը գրված է գիտականության սկզբունքներով և անաչառության դիրքերից, լուրջ ներդրում է հայ ժողովրդի ընդհանուր պատմության, ի մասնավորին՝ Չայոց ցեղասպանության հիմնախնդիրների ուսումնասիրության բնագավառում։

Ուշադրության է արժանի սիրիացի արաբ պատմաբան Ուսման աթ-Թուրքի «Էջեր հայ ազգի պատմությունից» ուսումնասիրությունը<sup>44</sup>։ Այս աշխատությունն արաբ հեղինակի գրչին պատկանող առաջին ծավալուն աշխատությունն է։ Թեև այն, հարցերի քննարկման շրջանակներով, իսկ առանձին դեպքերում նաև հիմնախնդիրների լուսաբանության խորությամբ, զիջում է մեր կողմից նշված նախորդ երկու աշխատություններին, այդուհանդերձ, անվիճելի է նրա նշանակությունը և օգտակարությունը Չայոց ցեղասպանությունը քննարկելու տեսակետից։

Այս հարցը քննելիս, Ուսման աթ-Թուրքը հատուկ ուշադրություն է դարձրել գեղմանական աղբյուրների վրա, նրանց առանձնահատուկ տեղ հատկացնելով, ելնելով այն հանգամանքից, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ իրազորովեց Չայոց ցեղասպանությունը, Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր և մեծ ազդեցություն ուներ նրա վրա։ Եւ Գերմանիայի դիրքորոշմանը Չայոց ցեղասպանության հանդեպ հատուկ է ենթաբաժին է հատկացրել։ Եւ առանձին-առանձին քննում է նաև մյուս մեծ տերությունների դիրքորոշումը XX դարի առաջին ցեղասպանության նկատմամբ։

Ուսման աթ-Թուրքի աշխատությունը զալիս է հարստացնելու մեր պատկերացումները Չայոց Սեծ եղեմի վերաբերյալ։

Անդրադառնամք նա երկու աշխատությունների։

Առաջինը մեր կողմից արդեն հիշատակված Սալիհ Չաիր աղ-Դիյի «Չայեր. ժողովուրդ և պրոբլեմ» աշխատությունն է<sup>45</sup>, որտեղ հայերի անցած պատմական ուղու հետ միասին հեղինակը քննության է ենթարկում

43 2002 թ. Կախիբեում հանդիպել և հանգամանակի գրույց ենք ունենել Ֆուադ Չասան Չաֆիզի հետ, որի ժամանակ նա հայտնեց, որ ռուսերեն տպուղ է Կախիբեում, խորհրդային մշակութային կենտրոնի օտարերեն լեզվի դասընթացներում։ Եւ միաժամանակ նշեց, որ հիացած է հայ ժողովրդի պատմությամբ, իր ազգային դիմագիծը և ինքնությունը պահպանելու նրա ներուսական ելելով ու ստեղծած մշակութային բարձր արժեքներով։

44 Ուսման աթ-Թուրք, Անշահաթ Գիմ բաբիլիի ալ-ումմա ալ արժանիյա-էջեր հայ աղբի պատմությունից, Չապ, 1980։

45 Սալիհ Չաիր աղ-Դիյ, Ալ-արժան, չապ վա կապիլա — Չապ, ժողովուրդ և հիմնախնդիր, Քեյրուք, 1988։



տորելու մասին նրանց ընդունած գաղտնի որոշմանը: Եւ նշում է, որ «1910 թ. Սալոնիկում տեղի ունեցավ «Իթքիհաղ վե Թեռակկի» կուսակցության համագումարը, որը գաղտնի որոշում ընդունեց օսմանյան պետության հայերից կտորելու մասին և այս որոշումն առաջին քայլն էր Հայկական Մեծ եղեռնի ճանապարհին»<sup>50</sup>:

Հայոց պատմությանը նվիրված արաբ հեղինակների երկրորդ դասաբաժանմանը պատկանող աշխատությունները, նրանցում արձարծված հարցերը, արաբ պատմաբանների և իրավագետների վերլուծությունը և արտահայտած տեսակետները նույնպես զգալի ներդրում են հանդիսանում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության քննազավատում:

### **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ ԱՐԱՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Աշխատությունների այս խումբը, ըստ դասակարգման, կազմում է Հայոց ցեղասպանության քննարկմանը նվիրված արաբական հեղինակների ուսումնասիրությունների երրորդ խումբը: Այս խմբի աշխատությունների յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրանք պարունակում են տարրեր ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ենթախմբի աշխատություններից՝ մի կողմից, և շատ սերտորեն են կապված XIX դարի վերջի և XX դարի առաջին քսանամյակի թուն արաբական պատմության հիմնախնդիրների հետ՝ մյուս կողմից: Երբեմն օսմանյան տիրապետության տակ զտնվող այդ երկու ժողովուրդների պատմությունն ուղղակի միախլուսված է ներկայացված: Հատկապես դա ակնհայտ է դառնում, երբ նրանք քննարկում են արդուլիամիդյան զուլումի, պանթուրքիզմի, կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երկտրորքերի կողմից իրականացված հայ և արաբ ժողովուրդների տեղահանման, հայ և արաբ ազգային-քաղաքական գործիչներին ֆիզիկապես ոչնչացնելու և հանանման այլ հարցեր:

Դասակարգման այս ենթախմբի աշխատություններից առաջին հերթին պետք է նշել եզիպտացի արաբ խոշոր պատմաբան Ամին Սալի-

<sup>50</sup> Եւ, ն տեղում, էջ 167:



տության դեմ ուղղված արաբական ազատագրական շարժման ակտիվ մասնակից է եղել: Նրա աշխատութայան մեջ շատ տեղ է հատկացվում Գայկական հարցին, նույնիսկ այնքան շատ, որ դոկտոր Ումար աղ-Դուկակին նրա այս աշխատությունը համարել է «արաբական և Գայկական հարցերին նվիրված աշխատություն»<sup>56</sup>: Գեղինակը հայկական և արաբական, ինչպես նաև բալկանյան հարցերը քննարկում է որպես արևելյան հարցի բաղկացուցիչ մասեր և ցույց տալիս այդ հանգամանքի բացասական հետևանքները արաբական և Գայկական հարցերի ճակատագրի վրա: Ասադ Դադիդն այնքան հեռուն է գնում, որ նույնիսկ Առաջին համաշխարհային պատերազմի սկսման պատճառը արևելյան հարցն է համարում, գտնելով, որ «Եվրոպական պատերազմը հայտարարվեց հանուն Արևելքի»<sup>57</sup>:

Գրքում նա հատուկ ենթաբաժին է հատկացրել հայերին՝ «Գայկական հարցը» խորագրի ներքո, որտեղ քննարկում է հատկապես երիտթուրքերի քաղաքականությունը հայերի նկատմամբ, մեծ պետությունների դիրքորոշումը և այլ հարցեր<sup>58</sup>:

Իր հարցադրումներով և համարձակ եզրակացություններով առանձնանում է Ջիհադ Սալիհի աշխատությունը, որի մի առանձին գլուխ նվիրված է Գայկական հարցին, հայերի հալածանքներին Օսմանյան կայսրությունում և Գայոց ցեղասպանությանը: Գեղինակը այդ հարցերը քննում է պանթուրքիզմի և թոնի թուրքացման քաղաքականության շրջանակներում: Իսկ այդ շրջանակները շատ պարզ են Ջիհադ Սալիհի համար, որն արտահայտված է հենց նրա աշխատության վերնագրում՝ «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև»<sup>59</sup>: Նա պանթուրքիզմն իր գաղափարական ուղղվածությամբ և պրակտիկ գործելակերպով, տիպաբանորեն դասում է ֆաշիստական գաղափարախոսության շարքը: Դա նոր մոտեցում է պանթուրքիզմի գնահատման հարցում:

Պատմագիտական գրականության այս խմբին են պատկանում նաև Ջեյն Նուրեդդին Ջեյնի<sup>60</sup>, Էմիլ Թումայի<sup>61</sup>, իրաքյան հեղինակներ

56 Նույն տեղում, էջ 22:

57 Նույն տեղում, էջ 1:

58 Նույն տեղում, էջ 27-31:

59 Ջիհադ Սալիհ, Ալ-թուրանյա ալ-թուրքիյա բայնա ալ-տուրիյա վա ալ-Ֆաշիս-Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև, Փարիզ, 1967:

60 Zein N. Zein. The Emergence of Arab Nationalism, New York, 1973:

61 Эмиль Тума. Национально-освободительное движение и проблема арабского единства. Период с арабского, Москва, 1974:



ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՆՈՒ-  
ԹՅԱՆԸ ՆԿԻՐՎԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏ-  
ՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՍԿԶԲՈՒՆԹԱՅԻՆ ԱՈԱՆԶ-  
ՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Յ**այոց ցեղասպանության վերաբերյալ ստեղծվել է չափազանց հարուստ գրականություն աշխարհի տարբեր լեզուներով: Դրանց մեջ նախ և առաջ պետք է առանձնացնել ամերիկյան, անգլիական, ավստրիական, գերմանական, ռուսական և ֆրանսիական հեղինակների աշխատությունները, որոնք կարևոր ներդրում են հանդիսանում ընդհանրապես ցեղասպանագիտության և, մասնավորապես, Ֆայոց ցեղասպանության կամ արմենոցիդի ուսումնասիրության քննադատում: Դրանք զրված են հազվագյուտ սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, արխիվային և պաշտոնական այլ նյութերի հիման վրա, գիտականության նորմերի խստիվ պահպանությամբ և հավատարմությամբ գիտական անաչառությամբ: Նրանց մեծագույն ծառայություններից մեկը կայանում է նրանում, որ նրանք գալիս են հավաստելու այն ճշմարտությունը, որ Ֆայոց ցեղասպանությունը նախօրոք եղել է ծրագրված և խնամքով նախապատրաստված, և հանդիսացել է օսմանյան պետության, նրա պետական, քաղաքական, ռազմական և այլ կառույցների պաշտոնական քաղաքականությունը: Նրանք հայերի և համայն մարդկության դեմ գործած այդ ոճրագործության համար հանցագործ են ճանաչում Օսմանյան կայսրության կառավարությանը և երիտբուրքերի կուսակցության ղեկավարությանը:





Այդ ասելով, ընթացիկ նկատի չունենք արաբ հեղինակների՝ որպես մասնագետների, անձնական առավելությունը եվրոպական կամ ամերիկյան մասնագետների նկատմամբ: «Առավելության» գաղտնիքը կայանում է նրանում, որ արաբները պատմականորեն կապված են եղել Օսմանյան կայսրությանը և այժմ հնարավորություն ունեն անդրադառնալ դրան ոչ միայն որպես օսմանյան, այլև որպես իրենց սեփական պատմությանը կամ գոնե դրա մի մասի պատմությանը, որի բաղկացուցիչ մասն է կազմում նաև արևմտահայության և Չայոց ցեղասպանության պատմությունը:

Այս հանգամանքն անհրաժեշտ է շեշտել ոչ միայն հանուն արաբության, այլ նաև այն պատճառով, որ բուրքական պատմաբանները, հետևելով ժամանակակից Թուրքիայի կառավարության հրահանգներին, փորձում են մխտել Չայոց ցեղասպանությունը, արաբական պատմագրության դեպքում չեն կարող օգտագործել ուսումնասիրողների իրենք «անտեղյակության» կամ պատմությունը «կեղծելու» գործոնը, քանի որ արաբ հեղինակներն իրենց աշխատություններում վերադառնում են այն, ինչ տեսել են իրենք կամ նրանց ոչ հեռավոր նախնիները:

Այս պարագայում բուրքական պատմագրության ջղածությունները վկայում են նրանց կատարյալ անգրություն մասին:

Մրանում է կայանում արաբական պատմագրության առաջին և կարևոր առանձնահատկությունը, որի կարևորությունը դժվար է քերականահատել Չայոց ցեղասպանությունը մխտելու ժամանակակից բուրքական պատմագրության փորձերի ամհիմն լինելն ապացուցելու գործում:

Արաբական պատմագրության երկրորդ առանձնահատկությունը կապված է արաբական հեղինակների մուսուլման լինելու իրողության հետ:

Թուրք հեղինակները, որոնք անեն կերպ փորձում են հերքել Չայոց ցեղասպանության փաստը, բանավիճելով Չայոց ցեղասպանությունն ընդունող եվրոպական, ռուսական և ամերիկյան հետազոտողների հետ, շատ հաճախ, երբեմն քաջահայտորեն, երբեմն սքողված ձևով, ակնադրվենք են անում այդ հեղինակների կրոնական պատկանելության վերաբերյալ, առ այն, որ նրանք քրիստոնյաներ են և, բնականաբար, քրիստոնյա պատմաբանները պաշտպանում են քրիստոնյա հայերին՝ մուսուլման քուրքերին վերագրելով ոճրագործություններ, ինչպես Չայոց ցեղասպանությունը, որը նրանք, իբր, չեն կատարել:



Ուրեմն Հայոց ցեղասպանությանը նվիրված արարական պատմագիտություն մյուս կարևոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նա ուղղակի հերքում և մերժում է թուրք պատմաբանների փոփոխյալը Հայոց ցեղասպանության գիտական բացատրության հարցում ներմուծել կրոնի, իսլամ-քրիստոնյա փոխհարաբերության գործոնը: Դրանով արարական պատմագիտությունը նպաստում է, որ Հայոց ցեղասպանության հարցը չտեղափոխվի կրոնական ոլորտ, այլ մնա քաղաքական դաշտում:

Ըստ էության, Հայոց ցեղասպանության բնույթի, պատճառների բացահայտման և ճանաչման հարցում ցեղասպանագետ մասնագետների ճնշող մեծամասնության կարծիքը, որոնք ղեկավարվում են բացառապես գիտական սկզբունքներով և տուրք չեն տալիս քաղաքական կոնյուկտուրային, անկախ նրանց կրոնական պատկանելությունից, անկախ այն բանից, թե նրանք քրիստոնյա են, մուսուլման կամ հուդայական, սակավ բացառությամբ, համընկնում են:

Եվ հանուն արդարության պետք է գոհունակությամբ նշել, որ արդեն հայտնվել են անգամ թուրք հեղինակներ, որոնց կարծիքն այնչափ համընկնում թուրքիայում տիրապետող պաշտոնական տեսակետներին և որոնք հանդես են գալիս թուրքիայի կողմից իր մեղքն քննադատելու պահանջով:



Օսմանյան կայսրությունում ցեղասպանության արձատների և նախադրյալների, ինչպես նաև պատճառների հարցի լուսաբանության տեսակետից սկզբունքային նշանակություն ունի Օսմանյան կայսրության երկրյան, նրա պետական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, էթնիկական-դավանական բնույթի բացահայտումը: Այդ հարցի պարզաբանումը չափազանց մեծ տեղ է զբաղում արաբական պատմագիտության մեջ: Բնականաբար, արաբ հեղինակներն այդ հարցը քննարկելիս առաջնությունը տալիս են արաբական նյութին, այսինքն՝ արաբների իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և լեզվամշակութային հարցերի ուսումնասիրությանը: Սակայն նրանք լավ են հասկանում, որ պարսիակալել միայն արաբական շրջանակներով կամ միայն արաբական նյութի հիման վրա հնարավոր չէ տալ Օսմանյան կայսրության իրական և հավաստի պատկերը: Այդ պատճառով էլ նրանք ընդարձակում են հարցի ուսումնասիրության շրջանակները և արաբական նյութը լրացնում Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների, այդ թվում հայերի, հույների, ասորիների, սլավոնների, ինչպես նաև քրդերի, չեղքեզների, ալքամացիների վիճակին վերաբերող նյութով լուսաբանելով նրանցից յուրաքանչյուրի տեղը օսմանյան հասարակության կառուցվածքում և նրանց դրությունը կայսրությունում: Միայն այդ կերպ է հնարավոր տալ Օսմանյան կայսրության՝ որպես պետական-քաղաքական օրգանիզմի անատոմիան:

Օսմանյան կայսրության անատոմիայի կամ բնույթի բացահայտումը հնարավորություն է տալիս հասկանալու կայսրության սուլթանների, կառավարության և տիրապետող վերնախավի քաղաքականությունը ոչ թուրք ժողովուրդների հանդեպ, գտնել նրանց նկատմամբ կիրառվող քարոզի զսպանակները և ցեղասպանությունների բանալին:

## **ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎՐԱ ԴԻՄՆՎԱԾ ԿԱՍԱՐԱԿԱՐԳ: ՓԱԿ ԴՈՆԵՐ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՈՋԵՎ**

Արաբ բազմաթիվ հեղինակներ՝ պատմաբաններ, տնտեսագետներ, փիլիսոփաներ, միջազգայնագետներ, քաղաքագետներ և այլն, յուրաքանչյուրը յուրովի անդրադարձել է Օսմանյան կայսրության բնույթի և երկրյան հարցին, և տվել իր գնահատականը: Դրանց մեջ ուշագրավ են



րյալներ ու մքնուրտ էին ստեղծում կայսրության ոչ թուրք ժողովուրդների ֆիզիկական վերացման, այսինքն՝ ցեղասպանության համար: Ըստիկ Դարթալն այս միտումի մեջ է տեսնում Օսմանյան կայսրության կործանման պատճառները, ընդգծելով, որ նրա լծացումը, նեխումը և կործանումը պայմանավորված էին վերոնշյալ համգամանքներով<sup>64</sup>:

Խիստ ուշագրավ է Օսմանյան կայսրությանը Ռաման աք-Ռուրքի կողմից տրված գնահատականը, որը հստակ կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի դատապարտելի սկզբունքների վրա էր խարսխված օսմանցիների քաղաքականությունը կայսրության ոչ թուրք ժողովուրդների հանդեպ: «Օսմանցիները,— գրում է նա,— իրենց հպատակների հետ չէին վարում խաղաղ զոյակցության քաղաքականություն և իրենց քաղաքականությունը չէին կառուցում իրավունքի ու արդարության վրա: Ռասիզմի և նացիոնալիզմի քաղաքականություն՝ ահա թե ինչն էր տիրապետում այդ ժամանակների կառավարողների մտքերում»<sup>65</sup>:

Այս նույն տեսակետին է նաև Ֆուադ Չասան Չաֆիզը, որի կածիքով, Օսմանյան կայսրությունում գոյություն չունեին ոչ թուրք ազգաբնակչությանը պաշտպանող, նրա ազգային անվտանգությունը երաշխավորող օրենքներ: Կայսրությունում ոչ միայն չկային նման օրենքեր, այլև իրենց՝ թուրքերը, թուրքական հասարակությունը, նրանում տիրապետող հոգեբանությունը, սովորույթները, տղաքը պատրաստ չէին դրան և չէին քնդուում իրենց և ոչ թուրքերի իրավահավասարության գաղափարն անգամ<sup>66</sup>:

Օսմանյան կայսրությունը՝ արարական պատմագիտության գնահատմամբ ռազմա-ֆեոդալական, հետադիմական, դիկտատորական պետություն էր: Ֆիլիպ Չիթթին հենց այդպես էլ քննադատում է այդ կայսրությունը, նշելով, որ «Օսմանյան կայսրությունն ըստ էության իր քնույթով և կառուցվածքով ռազմական և դինաստիական կայսրություն էր»<sup>67</sup>: Եւ Օսմանյան կայսրության քնորոշ գծերից մեկը համարում է նրա ռազմամուլ լինելը և ամեն ինչ այդ նպատակին ենթարկելը: Այդ կապակցությամբ նա շեշտում է, որ Օսմանյան կայսրությունը «որպես պետություն նախ և առաջ կազմակերպված էր պատերազմների համար և ոչ թե իր ժողովրդի բարեկեցության համար»<sup>68</sup>:

64 Եւսման տեղում:

65 Ռաման աք-Ռուրք, Էքըն հալ սզզնի սթառնությունը, էք 191:

66 Ֆուադ Չասան Չաֆիզ, Չայ ժողովրդի պատմությունը, էք 182-216:

67 Hill Ph. History of the Arabs. From the Earliest Times to the Present, London, 1951, p. 715.

68 Եւսման տեղում:





զը, որը Թուրքիայում տիրող գաղափարախոսության համաձայն բարձր էր կանգնած կայսրության մնացած բոլոր քրիստոնյա և մուսուլման ազգերից ու ժողովուրդներից:

## ԹՈՒՐԷՐԸ ԿԱՅՄՈՒԹՅԱՆ «ԱՍԵՆԱՐԱՐՉՐ» ԱԶԳ

Արաբական պատմագիտության կարևոր ծառայություններից մեկը Օսմանյան կայսրության ռոթյան բացահայտ բնագավառում կայանում է նրանում, որ նա անդրադարձել է թուրքերի «ամենաբարձր» ազգը լինելու օսմանյան կառավարողների և գաղափարախոսների տեսակետին և մերկացրել թուրքերին կայսրության մյուս բոլոր ժողովուրդներից բարձր դասելու Թուրքիայում տիրապետող պաշտոնական այդ գաղափարախոսությունը, որը խորքի մեջ օսասլավական գաղափարախոսություն է: Արաբ հեղինակները դա կատարում են հենվելով այն բարձր արժեքների վրա, որ ստեղծել են ռայյա համարվող արաբները, հույները, հայերը և մյուս ժողովուրդները: Նրանք իրենց ուսումնասիրություններում հատկապես մեծ տեղ են հատկացնում հայոց մշակույթին, հայերի ստեղծած դասական արժեքներին:

Նախ ալ-Յաֆին, ամոլրադատնալով թուրքական երնուսի «գերազանցության» հարցին, նշում է, որ Օսմանյան կայսրությունում «թուրքական ազգը համարվում էր բարձր մյուս ազգերից»<sup>71</sup>: Եզիպտացի պատմաբան Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ Օսմանյան կայսրությունում տարբերությունը թուրքերի և ոչ թուրքերի միջև «պաշտոնապես պարտադրված էր»<sup>72</sup>, այսինքն՝ օրինականացված էր: Եվ նա դա հաստատում է հայերի օրինակով նշելով, որ «հայերը երկրորդ կարգի քաղաքացիներ էին»<sup>73</sup>: Ի հաստատումն իր տեսակետի, նա մատնանշում է, որ հայերի վկայությունը դատարանում չէր ընդունվում, այսինքն՝ չէր անցնում, նրանք զենք կրելու իրավունք չունեին, գյուղական վայրերում գտնվում էին օսմանյան զինվորականների ու ֆեոդալների զերիշխանության տակ և այլն<sup>74</sup>:

71 Նախ ալ-Յաֆի, Գալիի ցեղասպանությունը և նրա մատանք պարսկան հասարակական կյանքի վերաբերյալ, էջ 25:

72 Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամ, Գալիական հարցը օսմանյան պետությունում, 1878-1903 թթ., էջ 17:

73 Նույն տեղում:

74 Նույն տեղում, էջ 17-18:



բարձրը և հայերը միևնույն երկրի և միևնույն ազգի զավակները չեն, բայց նրանք միևնույն բարոյականության, միևնույն հիմնախնդրի և միևնույն ճակատագրի զավակներն են եղել»<sup>78</sup>: Գեղիմակը նկատի ունի օսմանյան դարաշրջանը, երբ երկու ժողովուրդներն էլ՝ հայերը և արաբները, գտնվում էին միևնույն օսմանական տիրապետության տակ: Շարունակելով իր միտքը, Սալիհ Զահր աղ-Դիմը ընդգծում է, որ «նրանց թշնամիքն մեկն էր»<sup>79</sup>: Լա նկատի ունի օսմանյան բռնակալական լուծը: Այդ կապակցությամբ նա ուղղակի նշում է, որ «Թուրքական օսմանյան վարչակարգը սկզբից նեթ փորձում էր թուրքացնել արաբներին և հայերին, թուրանացնել նրանց»<sup>80</sup>:

Սակայն, ինչպես նշում է լիբանանյան հեղինակը, դա հեշտ գործ չէր, քանի որ, ըստ նրա, օսմանյան տիրապետության տակ գտնվող այնպիսի ժողովուրդներ, ինչպես արաբները, հայերը, հույները և այլն, գտնվում էի զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, քան թուրքերը: «Արաբները,— նշում է նա,— ավելի քաղաքակիրթ էին, քան թուրքերը»<sup>81</sup>, ավելացնելով, որ «վիճակը նույնն էր նաև հայերի պարագայում»<sup>82</sup>:

Ամփոփելով իր տեսակետները՝ Սալիհ Զահր աղ-Դիմը գրում է. «Արաբները և հայերն ունեն լեզու, պատմություն և քաղաքակրթություն, իսկ թուրքերը չունեն ո՛չ լեզու, ո՛չ պատմություն և ո՛չ էլ քաղաքակրթություն, արաբները և հայերն ունեն ազգություն, իսկ թուրքերը չունեն ազգություն, արաբները և հայերն ունեն տերիտորիա, իսկ թուրքերը տերիտորիա չունեն»<sup>83</sup>:

Նշելով, որ թուրքերը տերիտորիա չունեն, Սալիհ Զահր աղ-Դիմը նկատի ունի այն հանգամանքը, որ թուրքերը եկվորներ էին, որոնք, դուրս գալով Ալքալից և Կենտրոնական Ասիայի տափաստաններից, ներխուժել էին Մեծավոր Արևելք և Անդրկովկաս, գրավել արաբական և հայկական տերիտորիաները, հաստատվել այլ ժողովուրդների տարածքներում և իրենց տիրապետությունը հաստատել նրանց վրա:

Թուրքերի «բարձր» ազգ լինելու տեսակետի դեմ ընդվզում են նաև արաբ քաղմաքիվ այլ հեղինակներ, որոնցից արժե առանձնացնել արաբական ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկին,

78 Սալիհ Զահր աղ-Դիմ, Պաշտոն և արաբները թուրանացիի և փոքրած միջև, էջ 4:

79 Նույն տեղում:

80 Նույն տեղում:

81 Նույն տեղում:

82 Նույն տեղում, էջ 5:

83 Նույն տեղում:



## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՐԴԵՐԻ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՐԿԻՐ

Օսմանյան կայսրությունում ջարդերի քաղաքականությանն անդրադառնալը՝ որպես ազգային հարցի լուծման հիմնական զենք, կարևոր տեղ է զբաղում արաբական պատմագիտության մեջ օսմանյան ռազմա-ֆեոդալական կայսրության հետադիմական նույնպան բացահայտման տեսանկյունից: Կարելի է ասել, որ դա արաբական պատմագիտության մեջ համարվում է առաջնային խնդիր, որին, որպես կանոն, անդրադառնում են համարյա բոլոր հետազոտողները: Նրանց տեսակետի համաձայն՝ ջարդերը հանդիսացել են թուրքական սուլթանների ներքին քաղաքականության մշտական ուղեկիցները: Ոչ թուրք ժողովուրդների կոտորածները Օսմանյան կայսրությանը հատուկ անճարնորոշ գծերից մեկն է, եթե ոչ ամենաբնորոշը: Այդ հարցը լուսաբանելիս արաբ հեղինակները նախապատվությունը չեն տալիս որևէ ազգի կամ ժողովրդի: Հարցի քննությանը նրանք տալիս են համալիր բնույթ, այսինքն՝ զործնականում նրանք անդրադառնում են առանց քաջատության կայսրության այն բոլոր ժողովուրդներին, որոնք պարբերաբար դարձել են թուրքական յարադամի զոհ: Դրա շնորհիվ օսմանյան սուլթանների քաղաքականությունն ազգային հարցում դառնում է ավելի հասկանալի ու ցցուն, իսկ արաբական պատմաբանների եզրակացությունները՝ ավելի հիմնավոր ու համոզիչ: Նման մոտեցման շնորհիվ Օսմանյան կայսրության XIX դարի և XX դարի սկզբների պատմությունը մեզ ներկայանում է որպես ոչ թուրք ժողովուրդների՝ արաբների, հայերի, հույների, բուլղարացիների, ասորիների և այլ ազգությունների ջարդերի, հալածանքների և ազգային արժանապատվության ոտնահարման մի անվերաջանալի շարան:

Օսմանյան կայսրության նոր շրջանի պատմությունը հենց այդպես են ընկալում այնպիսի արաբ պատմաբաններ, ինչպես Յուսաֆ Հասան Հաֆիզը, Մրվան ալ-Մուդալարը, Ռւսման աթ-Թուրքը և ուրիշներ, որոնք հիմնովին են ուսումնասիրել այդ խնդիրը՝ դրան նվիրելով բազում տարիներ: Նրանցից ոմանք նույնիսկ կազմել են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կոտորածների ցանկը: Այդ տեսակետից աչքի է ընկնում Ռւսման աթ-Թուրքի կազմած ցանկը, որն ավելի ամբողջական է, քանի որ այն ընդգրկում է XIX դարում տեղի ունեցած համարյա բո-



Կիլիկիայի Ադանա քաղաքում հիմք է տալիս ասելու, որ Օսմանյան կայսրությունը վերադառնում էր «ջարդերի ռեժիմին»<sup>89</sup>: Պետք է միայն ավելացնել, որ իրականում նա երբեք էլ չէր հեռացել այդ քաղաքակա-  
նությունից:

**ՁՈՒԼՈՒՄԻ ԴԱՐԱՇՐՁԱՆԸ: ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ՝  
«ԱՐԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ԲԱՆՏ»: «ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԸ  
ՀԱՅԵՐԻՆ ՅԻԶԻԿԱԳԵՍ ՈՇՆՉԱՅՆՆԵԼՈՒ ՈՒԴՈՎ  
ԼՈՒԾԵԼՈՒ» ԲԱՆԱԶԵՎԸ**

Օսմանյան կայսրության պատմության մեջ կայսրությանը բնորոշ բոլոր բացասական կողմերը, նրա ջարդարական էությունը, ռասիզմի վրա հիմնված տիրող գաղափարախոսությունը և այլն, քերևս ամենախտացված կերպով արտահայտում է այն ժամանակաշրջանը, որը հայտնի է Ջուլումի դարաշրջան: Դա անկազելիորեն կապված է սուլթան Աբդուլ Համիդ II-ի անվան հետ, որը երկարյա ձեռքով կայսրությունը կասավարեց 1876 թվականից, նրա մտեց Օսմանի գահին, մինչև 1909 թ., նրա գահընկեց արվեց: Իր քաղում արյունահեղ գործողությունների, սպանությունների ու կոտորածների համար նա ստացել է «կարմիր սուլթան», այսինքն՝ արյունաբորու, արյունատենչ և ճախարհ սուլթան մականունը, իսկ նրա կառավարման տարիները՝ «Ջուլումի դարաշրջան» անունը: «Ջուլում» արաբերեն բառը նշանակում է «դիկտատուրա», «թոնակալություն», «միահեծանություն», որը պարունակում է նաև ողբերգության, աղետի և դժբախտության երանգներ:

Աբդուլ Համիդ II-ին և նրա դարաշրջանն այդպես են բնութագրել արաբները դեռևս այն տարիներից: Իսկ այսօր նա համոզիսանում է տիրապետող գիտական տեսակետ արաբական պատմագիտության մեջ: Ֆուադ Հասան Հաֆիզը, նշելով, որ «Սկսելով իր բոլոր եղբայրների և նրանց ընտանիքի անդամների սպանությունից», նա կայսրության առօրյա կյանքում մտքորեց զանգվածային կոտորածները և սպանությունները, դառնալով հայ ժողովրդի դահիճը<sup>90</sup>: «Կարմիր սուլթան» է կոչում նրան Մուսա Պրենսը<sup>91</sup>: Նա այդպես է կոչված նաև Լիբանանյան հան-

89 Սրվան ալ-Մուդավար, Գալիթ պատմության ընթացքում, էջ 401:

90 Ֆուադ Հասան Հաֆիզ, Դալ ժողովրդի պատմությունը, էջ 201:

91 Moussa Prince, L'Armenocide, p. 28.





նը, որի կարծիքով՝ զուլուժի քաղաքականությունը յուրաքանչյուր տարի ավելի դաժան էր դառնում<sup>96</sup>։ Այսինքն՝ բանտի դռները բացվելու ոչ միայն ոչ մի հույս չկար, այլև ամեն ինչ արվում էր այն ավելի անառիկ պահելու համար։ Իսկ կարմիր սուլթանը հիմք ուներ ամուր պահել իր բանտի դռները, քանի որ, ինչպես նշում է էմիլ Թուման, «Կայսրության զանազան ազգությունների հակաարտուրուտիստական խմբերը և հոսանքները քանի զնում, այնքան ավելի են համոզվում, որ անհրաժեշտ է միավորվել և, ի վերջո, երկրում ստեղծվեց զուլուժի սեծիմի դեմ հանդես եկող հիմնական ուժերի բլոկ»<sup>97</sup>։

Արաբ հետազոտողների կարծիքով, զուլուժի քաղաքականության ամենաբնորոշ գծերից մեկը ոչ բուրք ազգաբնակչության նկատմամբ սուլթանի վարած բռնությունների ու հալածանքների քարաքրոսական քաղաքականությունն էր։ Ընդ որում, նրանք բնավ նկատի չունեն Աբդուլ Չամիդի քաղաքականությունը բացառապես կամ առավելապես արաբների նկատմամբ։ Նրանք նկատի ունեն համաօսմանյան պրակտիկան, այսինքն՝ կարմիր սուլթանի բռնատիրական քաղաքականությունը նաև հայերի, հույների, քալկանյան և այլ ժողովուրդների նկատմամբ։ Այդ տեսակետը շատ հստակ է ձևակերպված Մրվան ալ-Մուդավարի մոտ, որը նշում է՝ Աբդուլ Չամիդ II-ի բռնությունների ու հալածանքների քաղաքականությունը «տարածվում էր կայսրության բոլոր ժողովուրդների վրա և, մասնավորապես, արաբական ժողովուրդների, քալկանյան ժողովուրդների և հայ ժողովրդի վրա»<sup>98</sup>։

Կոտորածները զուլուժի դարաշրջանում դարձան օսմանյան կառավարման կուլտուրայի ամենաբնորոշ գիծը։

Չուլուժի դարաշրջանում կոտորածների քաղաքականության առաջին գիծը դարձան հայերը։ Թեև քուլեգիկ կերպով արդեն անդրադարձել ենք այդ հարցին, այնուամենայնիվ, հարկ է կրկին անդրադառնալ 1894–1896 թթ. հայկական կոտորածների առանձին ասպեկտներին, որի ժամանակ զոհվեց մոտ 300 հազար մարդ։ Այդ հարցին վերադառնալուն դրդում է Ֆուադ Չասան Չաֆիզի այն հետաքրքիր միտքը, որ «ներքին քաղաքականության բնագավառում սուլթան Աբդուլ Չամիդ II-ը վախճանում էր ժողովրդից»<sup>99</sup>։ Դա ոչ թե բնածին վախ էր, այսինքն՝

96. Zein M. Zein. The Emergence of Arab Nationalism, New York, 1973, p. 47.

97. Эмиль Туман. Национально-освободительное движение и проблема арабского единства. Перевод с арабского. Москва, 1977, с. 84.

98. Մրվան ալ-Մուդավար, Չամիդ կայսրության բնագրում, էջ 206։

99. Ֆուադ Չասան Չաֆիզ, Դալ ժողովրդի պատմությունը, էջ 202։



հարքերդում, Ավասում, Մարաշում, Կեսարիայում և Օսմանյան կայսրության այլ քաղաքներում ու գյուղերում, որտեղ բնակվում էին հայեր: Միրիական պատմաբան իսայրի Գաման հայերի այդ կոտորածներն անվանում է գազանային<sup>102</sup>: Հայկական կոտորածներին նման գնահատական է տալիս նաև լիբանանցի պատմաբան, դոկտոր Զամիլ Հաբրժ «Հայերը և Լիբանանը» իր աշխատության մեջ: Քննարկելով հայերի առտագաղթը Արևմտյան Հայաստանից Լիբանան և արաբական այլ երկրներ՝ նա նշում է, որ «դա արդյունք էր այն հալածանքների, որ այդ ժողովուրդը ենթարկվում էր օսմանյան լծի ներքո, և դա սկսվեց սուլթան Աբդուլ Համիդի կատարված շրջանում, երբ կատարվեցին բարբարոսական ջարդեր 1894–1896 թթ., և հազարավոր հետապնդվողներ ձգտում էին դեպի հարևան երկրները, և Լիբանանը դրանցից մեկն էր»<sup>103</sup>:

Ահա այս դեպքերին անդրադառնալիս Մրվան ալ-Մուդավարն իր աշխատության մեջ հարկ է համարել քերել սուլթան Աբդուլ Համիդ II-ի խոսքերն առ այն, որ «Հայկական հարցին վերջ տալու համար պետք է վերջ տալ հայերին»<sup>104</sup>: Մուսա Պրենսը 1894–1896 թթ. հայկական ջարդերը համարում է ցեղասպանության՝ արմենոցիդի քաղաքականության սկիզբը, որի հիմքը դրեց սուլթան Աբդուլ Համիդ II-ը, որին արաբ հեղձակավոր մասնագետն անվանում է «մեծ ոճրագործ»<sup>105</sup>:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ին շիջողվեց իրականացնել իր այդ անմարդկային մտահղացումը, սակայն այդ տեսադրույթն ընկավ նրա հաջորդների՝ երիտթուրքերի քաղաքականության հիմքում, որոնք կարողացան իրականացնել արյունարբու սուլթանի այդ ոճրագործ ծրագիրը:

Այսպիսով՝ արաբական պատմագիտության կողմից օսմանյան կայսրության բռնակալական, ռասայական և ջարդարարական տության բացահայտման շնորհիվ ի հայտ են գալիս և ակնառու դառնում Հայոց ցեղասպանության նախադրյալները: Այդ նախադրյալները կազմավորվել էին իրենից մեկ ամբողջական կառույց ներկայացնող կայսրության քաղաքական, տնտեսական, սոցիալական կառավարման համակարգի ընդերքում, որը խարսխված էր իր դարն ապրած հետադիմական և ըստ էության միջնադարյան խավարամուլությանը բնորոշ քաղաքական, սոցիալական և ազգային-էթնիկական գաղափարների

102 **Խայրի Գաման**, *Հայաստան հարցի մի քանի ասպեկտների րուսաբանություն*, «Մուսաբի», Դամասկոս, 1983, No 103–104, էջ 22, սրբաբերն:

103 **Զամիլ Հաբր**, *Հայերը և Լիբանանը*, «Ալ-Մադինա», Բեյրութ, 1974, No 24, էջ 17:

104 **Մրվան ալ-Մուդավար**, *Հայերը պատմության շրջանում*, էջ 207:

105 **Moussa Prince**, *L'Armenocide*, p. 29.

վրա: Դա մի կայսրություն էր, որը արաբական պատմագիտության քննական վերլուծության արդյունքում մեզ է ներկայանում թուրքերի՝ որպես տիրապետող և «բարձր» կարգի ժողովրդի և մնացյալ ոչ թուրք ժողովուրդների՝ ենթակա ռայանների պետության դասական օրինակ: Դա մի պետություն էր, որտեղ թուրք ոչ թուրք ժողովուրդների, այլ թվում և հայերի, կոտորածների ու ջարդերի քաղաքականությունը հանդիսանում էր պետական քաղաքականություն: Ջարդերի բարբառոսական կուլտուրան կազմում էր օսմանյան պետության ներքին և րոսական կուլտուրան կազմում էր օսմանյան պետության ներքին և ազգային քաղաքականության օրգանական մասը: Օսմանյան այդ յուրատեսակ կառույցն ինքնին ուներ ցեղասպանության հզոր ներուժ, որը կարող էր վերածվել իրողության՝ բարձնապատ ներքին և արտաքին պայմանների ստեղծման դեպքում:

Արաբական պատմագիտական մտքի քացահայտումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ջարդերի քաղաքականությունից մինչև ցեղասպանություն ընդամենը մի քայլ էր միայն, ինչպես որ մի քայլ էր օսմանյան գուլումի պետության փոխակերպումը գենոցիդալին պետության:

Եվ այս տեսակետի ճշմարտացիությունը հաստատելու եկավ Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թ ցեղասպանությունը:

## ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց ցեղասպանության նախադրյալների, այդ ցեղասպանությունը ծնող քաղաքական, սոցիալական և էթնիկական գործոնների բացահայտումից հետո հարկ է չուսաքանել Հայոց ցեղասպանության պատճառներն այնպես, ինչպես դա տեղ է գտել արաբական պատմագիտության մեջ:

Հայոց ցեղասպանությանը նվիրված արաբական հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայոց 1915 թ. ցեղասպանության նախապայմանները և պատճառները միմյանցից չեն բաժանված շինական պարսպով: Նրանք սերտորեն կապված են միմյանց հետ, քանի որ պատճառներն ուղղակիորեն բխում են նախադրյալներից կամ պայմանավորված են նրանցով: Եվ երբեմն շատ դժվար է հստակորեն նախապայմանը տարանջատել պատճառից, մանավանդ երբ այդ նախապայմանը սահուն կերպով վերածվում է պատճառի: Այստեղ առկա է ոչ միայն տրամաբանական կապը նրանց միջև, այլև գործողությունների հերթականությունը: Պատճառները նախապայմանների արտագույում ու կենսագործումն են հանդիսանում: Դրա համար էլ նրանց պետք է դիտել մեկ ամբողջության մեջ:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ անհրաժեշտություն է ցեղասպանության հստակորեն դրսևորվող պատճառները բնարկել առանձին-առանձին, որը թելադրված է Հայոց ցեղասպանության հիմնախնդրի բարդությունով, ցեղասպանությունն իրականացրած երիտբուրքերի քաղաքականությունը և նրա հեռահար նպատակներն ըմբռնելու կարևորու-



կան ազգը»: 1876 թ. օսմանյան Սահմանադրության VIII հոդվածում արձանագրված էր, որ «Կայսրության բոլոր հպատակները կոչվում են օսմանցիներ՝ առանց դավանանքի խտրության»: Սահմանադրության մեջ հատուկ կետ կար այն մասին, որ իսլամը համարվում է Օսմանյան կայսրության պետական կրոնը, իսկ թուրքերենը՝ պաշտոնական լեզուն<sup>106</sup>: Պաշտոնապես արձանագրված էր, որ Օսմանյան կայսրությունում պաշտոններ զրավելը և պատվածների անդամ ընտրվելը պայմանավորված էր թուրքերենի իմացությամբ: Թուրքերենի իմացությունը պարտադիր պայման էր: Թուրքական մեջլիսում պատվածներտական քննարկումները և վիճաբանությունները կարող էին ընթանալ միայն ու միայն թուրքերեն, բնւ այնտեղ թուրք դեպուտատների հետ նստած էին նաև արաբ, հայ, հույն, քուրդ, ալբանացի և այլ ազգի պատկանող դեպուտատներ:

Այսպիսով՝ «օսմանական ազգի» տեսադրույքը Օսմանյան կայսրությունում հանդիսանում էր պաշտոնական տեսադրույք և ստացել էր սահմանադրական ձևակերպում ու օրենքի ուժ:

Սակայն հրամանով և սահմանադրական համապատասխան օրենքով ու հոդվածով օսմանական ազգ ստեղծելու բոլոր փորձերն անհաջողության մատնվեցին:

Պրան նպաստեցին հատկապես երկու հանգամանք:

Առաջին՝ զուլումի ռեժիմն ընդունակ էր միայն ավերիչ և բռնակալական զործողությունների: Դա ստեղծվել էր դրա համար և չէր կարող ծառայել որևէ նոր բան, որևէ նոր կատույց ստեղծելու նպատակին: Արդուլ Չամիդ II-ի վարչակարգը ի վիճակի չեղավ կոտրել ոչ թուրք ժողովուրդների ընդդիմությունը և ստիպել նրանց համաձայնվել ծուլման քաղաքականությանը և օսմանյան ազգի վերածվելու արյունարբու սուլթանի և նրա թիկունքում կանգնած օսմանյան զադափարախտաների ծրագրերի հետ:

Երկրորդ՝ ծուլման քաղաքականությունը, անգամ բռնի և ամենաբիրտ մեղրով իրականացվող ծուլումը, պահանջում է պատճառական որոշ ժամանակաշրջան: Դա հնարավոր չէ իրագործել մեկ հարվածով և անմիջապես: Իսկ դեպքերի զարգացումը դրա հնարավորությունը չտվեցին: Պրանում «մեղքի» իր բաժինն ունեցավ սուլթան Արդուլ Չամիդ II-ը:

<sup>106</sup> ՏՆՆ և. Գովհաննիսյան, Սուլթանական երկրների պատմություն, Գ. Ի. էջ 431-432:





տադրված իրենց ազգությունը, ռասայական (իմա՝ եթնիկական — Ե. Գ.) պատկանելությունը և լեզուն պահպանելու արգելքը՝ նպատակ ունի նրանց ներքաշել մի միության մեջ, որը հեռու է արդարությունից և ազատությունից... Ազգը չի կարող գոյություն ունենալ՝ չպահպանելով իր ռասայական պատկանելությունը և թույլ չի տա, որ այն իրենից խլեն»<sup>108</sup>:

Խոսքը գնում էր ազգային հարցում երիտթուրքերի նոր քաղաքականության՝ կայսրության անխտիր թուր ոչ թուրք ազգություններին, ժողովուրդներին ու եթնիկական խմբերին բանի թուրքացման և եթնիկական առումով «մաքուր» թուրքական պետություն և հասարակություն ստեղծելու քաղաքականության մասին: Չրաժարվելով կայսրության ժողովուրդների կողմից մերժված և հեղինակազրկված օսմանական ազգության տեսադրույթից՝ երիտթուրքերը որդեգրեցին բանի թուրքացման տեսադրույթը, որը հետևողականորեն սկսեցին կենսագործել ամբողջ կայսրության տարածքներում:

Անդրադառնալով այդ հարցին՝ Ա. Չաուրանին «Արաբական միտքը լիբերալ դարաշրջանում. 1798–1939 թթ.» իր աշխատության մեջ այն հետաքրքիր միտքն է արտահայտում, որ երիտթուրքերը հասկացան, որ Օսմանյան կայսրությունը պահպանելու և թուրքերի գերակայությամբ կենտրոնացված կառավարական համակարգ ստեղծելու իրենց ձգտումներն անիրականանալի են օսմանիզմի դոկտրինայի հիման վրա: Դրա պատճառն այն էր, որ օսմանիզմը, ինչպես նշում է Ա. Չաուրանին, «չափազանց փխրուն և արհեստական զգացում էր»<sup>109</sup>:

Արաբական ուսումնասիրողների կարծիքով, օսմանիզմը, այդ փխրուն և արհեստական կառույցը, չէր կարող շահախի դեր կատարել և նպաստել կայսրության թուր ժողովուրդների համախմբմանը և կայսրության ամրապնդմանը: Այդ խնդիրը, ինչպես նշում են նրանք, երիտթուրքերի կարծիքով, կարող էր կատարել միայն մեկ այլ ազգային զգացում կամ, նրանց բնորոշմամբ, ավելի արդյունավետ նացիոնալիզմ, որը հենված լիներ լեզվի կամ ռասայական ընդհանրության, իսկ ավելի լավ՝ թե՛ մեկի, և թե՛ մյուսի վրա: Եվ այդպես, ինչպես նշում է Ա. Չաուրանին, «Օսմանյան նացիոնալիզմն աստիճանաբար վերածվեց թուրքական նացիոնալիզմի»<sup>110</sup>: Այդ կապակցությամբ Ա. Չաուրանին, որն այդ հարցի լավագույն գիտականներից մեկն է, ուշադրություն է դարձնում

108 Լույն տեղում, էջ 114:

109 A. Hourani, *Arabic Thought in the Liberal Age, 1798–1939*, London, 1970.

110 Լույն տեղում:

մի հանգամանքի վրա, որը շատ նաև կան է թուրքացման քաղաքականության արմատները քացահայտելու առումով: Նա գտնում է, որ երիտթուրքերի կարծիքով՝ «կայսրության հիմքը պետք է լիներ ազգային միասնությունը, որը կհստակ էին քոլոր նրանք, ովքեր խոսում էին թուրքերեն կամ ունեին թուրքական ծագում»<sup>111</sup>:

Երիտթուրքերը ազգային միասնության հասնելու միայն մեկ ուղի գտան՝ բռնի թուրքացումը, կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին թուրք դարձնելը և թուրքերենը նրանց պարտադրելը:

Երբ խոսք է գնում թուրքացման մասին, անհրաժեշտ է մշտապես նկատի ունենալ բռնության հանգամանքը, քանի որ խոսքը գնում է ոչ թե էվոլյուցիայի, այլ բռնի արարքի մասին: Այսինքն՝ կայսրության բռնի ոչ թուրքերի թուրքացումը և նրանց խոսելը թուրքերեն պետք է տեսնել ունենալ ոչ թե էվոլյուցիոն ուղիով, հարյուրամյակների ընթացքում և քնական ճանապարհով, որի դեմ ոչինչ հմարավոր չէր լինի անել, այլ և բնական ճանապարհով, արագացված տեմպերով, պատմական ամենակարճ ժամանակահատվածում և ամմիջապես՝ միանգամայն անտեսելով արաբների, հայերի, քուլդարների, հույների, ասորիների, ալբանների կամ ցեղերի ու մյուս ժողովուրդների կարծիքը, կամքը կամ գանկությունները: Միայն այդ կերպ երիտթուրքերը հույս ունեին հասնել ազգային միասնության՝ ռասայական կեղծ տեսադրույթի, թուրքական էթնիկ և թուրքերեն լեզվի ընդհանրության հիման վրա:

Բռնի թուրքացման հարցը լայնորեն է լուսաբանված արաբական պատմագիտության մեջ: Այդ հարցին նրանք մշտապես անդրադառնում են ինչպես արաբների ազգային գոյության և ինքնության պահպանման խնդիրների առնչությամբ, այնպես էլ կայսրության մյուս ժողովուրդներին, առաջին հերթին հայերի հիմնախնդիրները քննարկելիս:

Նախմ ալ-Յաֆին գտնում է, որ 1908 թ. հեղաշրջումից հետո «Թուրքական թուրանիզմի հայտնվելու և այն իսլամական ֆանատիզմի հաջողակ օգտագործելու հետ միասին, «Իթթիհադ վե Թերակկի» կուսակցությանը որոշեց վերացնել բոլոր բաները (իմա՝ խոչընդոտները) և թուրքացնել Օսմանյան կայսրության ռայաներին՝ ինչպես արաբներին, հայերին, քրդերին և մյուս ժողովուրդներին»<sup>112</sup>:

111 Նույն տեղում:

112 Նաֆի ալ-Յաֆի, Իսլամի ընդհանրությունը և նրա ընդունված ստանդարտի հաստատման կարծիքի վերաբերյալ, էջ 14:

Հեղինակի կարևոր եզրակացություններից մեկն այդ հարցում այն է, որ նա գտնում է, որ «Հայերի և արաբների թշնամին մեկն է», այսինքն՝ երիտթուրքերը և նրանց թուրքացման քաղաքականությունը<sup>112</sup>:

Արաբ հեղինակները երիտթուրքերին են մեղադրում նրանց և Օսմանյան կայսրության ոչ բուրք ժողովուրդների միջև առաջացած վիճի համար, որն այնուհետև վերածվեց թշնամության: Եմիլ Թուման հայերի, արաբների և մյուս ժողովուրդների երիտթուրքերից հեռանալու պատճառը համարում է «Իբբիհադ վե Թերակկիի» և նրա ղեկավարների շրջվիճիստական քաղաքականությունը և ոչ բուրք ժողովուրդներին քուրքացնելու նրանց կուրսը»<sup>114</sup>: Նման տեսակետ ենք գտնում նաև Լիբանանի հանրագիտարանում, որտեղ այդ կապակցությամբ արտահայտված է հետևյալ միտքը. «Փոխհասակացողությունը «Իբբիհադ վե Թերակկիի» և հայկական կուսակցությունների միջև երկար չշարունակվեց, քանի որ նրա («Իբբիհադ վե Թերակկիի» — Ն. Չ.) գլխավոր քաղաքականությունը կայանում էր ամբողջ Օսմանյան կայսրության թուրքացման մեջ»<sup>115</sup>:

Այդ հարցին քավալանին հանգամանորեն է անդրադարձել լիբանանյան պատմաբան Ջիհադ Սալիից՝ «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» իր ինքնատիպ աշխատության մեջ, որտեղ առանձին գլուխ է հատկացված հայերին՝ «Հայկական հարցը» խորագրի ներքո: Նա երիտթուրքերի ազգային քաղաքականության հիմքը համարում է «մոլեռանդ նացիոնալիզմը՝ խարսխված ենթարկելու և թուրքացնելու սկզբունքների վրա»<sup>116</sup>:

Արաբ որոշ հեղինակներ, անդրադառնալով երիտթուրքերի թուրքացման քաղականությունը, ուշադրություն են դարձրել այն հանգամանքի վրա, որ երիտթուրքերի ղեկավարությունն այդ նպատակի համար փորձել է օգտագործել նաև կոռնի՝ իսլամի պարագան: Այդ մասին կա ուղղակի հիշեցում Նաիմ ալ-Յաֆիի աշխատության մեջ, որտեղ նա նշում է, որ «թուրանական թուրանիզմն օգտագործվեց իսլամական ֆանատիզմի համար»<sup>117</sup>: Իսկ Եմիլ Թուման երիտթուրքերի քաղաքականության մեջ տեսնում է պանիսլամիզմի գաղափարների դոստոյուններ: «Թուրքական

112 Լույն տեղում, էջ 17:

114 Ջեյնո Կյա, *Հանրագիտարան—հանրագիտական ճանաչում և խնդիրն արաբական օգնության*, շ. 97.

115 Նաիմ ալ-Սաադիֆ, *Չ. X. Բնութ*, 1972, էջ 310.

116 Ջիհադ Սալիի, *Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև*, էջ 6:

117 Նաիմ ալ-Յաֆի, *Հայերի քննադատությունը և նրա նկատմամբ պարսկական հետաքրքրված կարծիքի դիտարկումը*, էջ 54:



կույթը: Այս պետք է նկատի ունենալ, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը պատմական շատ կարճ ժամանակահատված էր, որի ընթացքում անհնար էր իրագործել մի այնպիսի վիթխարի ծրագրի ինչպես հայերի, այնպես էլ արաբների, հույների, ասորիների, քուլդարների, քրդերի, չերքեզների, ալբանացիների, քոսովացիների և մյուս ազգությունների թուրքացումը՝ թեկուզ և հարկադրանքով ու քոնուքամբ: Դա ավելի էր բարդանում նրանով, որ թուրքերը կազմում էին Օսմանյան կայսրության փոքրամասնությունը և նրանց համար շատ դժվար խնդիր էր կայսրության մեծամասնությունը կազմող ժողովուրդներին, այդ թվում և հայերին, ստիպել հրաժարվել իրենց ազգային պատկանելությունից, լեզվից ու մշակույթից և ընդունել իրենց համար միանգամայն օտար ժողովրդի կերպարանք:

Բռնի թուրքացումը ենթադրում էր ոչ բուրջ ժողովուրդների կանոններին հրաժարում իրենց ազգությունից, կամ էլ մերժելու դեպքում՝ ֆիզիկական վերացում, գլխովին ոչնչացում:

Եվ քանի որ հայերը հրաժարվեցին թուրքացանալուց, ապա երիտթուրքական ղեկավարությունն ընդունեց օսմանյան պետությունը էթնիկական առումով մաքուր թուրքական պետության վերածման երկրորդ տարրերակը՝ ֆիզիկական ոչնչացման տարրերակը, որի առաջին գոհց դարձավ արևմտահայությունը: Այս տեսակետը շատ հստակ կերպով իր արտացոլումն է գտել Մալիի Ջահր աղ-Դինի մոտ: Եւ ընդգծում է, որ իթթիհադականների մոտ ծագեց «հայերին իրենց հարազատ վայրերից տեղահանելու և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում նրանց ոչնչացնելու ծրագիրը»<sup>121</sup>: Ու շաղկոսյան է արժանի այն հանգամանքը, որ արաբ հեղինակը գտնում է, որ երիտթուրքերը ցանկանում էին ոչնչացնել հայերին ոչ միայն ավանդական հայկական վեց վիլայաթների՝ Էրզրումի, Բիթլիսի, Խարբեռդի, Ավասի, Վանի և Դիարբաքրի տարածքներում, այլ և ամբողջ Օսմանյան կայսրության մեջ:

Ահա այս տեսակետները մենք գտնում ենք նաև արաբ մյուս հեղինակների՝ Իլյաս Ջանանիրիի, Ֆուադ Չասան Չաֆիզի, Սամիր Արբաշի, Մուսա Պրենսի և այլոց մոտ:

Մի փոքր շեղվելով բուն նյութից՝ նկատենք, որ այդ կապը՝ երիտթուրքերի թուրքացման քաղաքականության ծախսողման և ջարդերի քաղաքականությունը նրանց կողմից որդեգրելու մեջ, շատ նրբին կերպով

121 Մալիի Ջահր աղ-Դին, Դաշե, ժողովուրդ և երմնախնդիր, էջ 25:



ունեցվածքը և սեփականությունը»<sup>123</sup>։ Իսկ Մուսա Պրենսը հարցին մոտենում է մեկ այլ կողմից։ Նա իրավացիորեն գտնում է, որ հայերի տնտեսում թուրք փախստականներին բնակեցնելու թուրքական կառավարության գլխավոր նպատակներից մեկը «գրավված տարածքների էքսիկական քնույքը փոխելն էր»<sup>124</sup>։

Իրականում, երիտթուրքերը, թուրք փախստականներին հայերի տնտեսում բնակեցնելով, իրենց համար պահուստային լրացուցիչ ուժեր էին կազմավորում հայերին ոչնչացնելու իրենց քաղաքականությունն ու դիվային ծրագրերն իրականացնելու համար։

Այսպիսով հայերին բռնի թուրքացնելու քաղաքականության ծայտնորումը դարձավ Հայոց ցեղասպանության պատճառներից մեկը։ Կարելի է ասել, որ երկու դեպքում էլ՝ բռնի թուրքացում քե ֆիզիկական ոչնչացում, միևնույն է, դրված էր հայերին որպես էթնոս վերացնելու հարցը՝ որպես օսմանյան պետության կարևորագույն խնդիրներից մեկը։

## **ՊԱՆԹՈՒՐԻԶՄԸ ԵՎ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՏՆԵՇԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ**

Հայոց ցեղասպանության պատճառների հարցում իր ուրույն տեղն ունի պանթուրքիզմի քաղաքականությունը։

Պանթուրքիզմը, Օսմանյան կայսրության քոլոր ոչ թուրք ժողովուրդների թուրքացման քաղաքականության հետ միասին, դարձավ երիտթուրքերի զզգային քաղաքականության մյուս կարևոր հիմնաքարը։ Այդ երկու երևույթները՝ թուրքացումն ու իրավ էքսիկական մաքուր թուրքական պետության ստեղծումը, և պանթուրքիզմը, օրգանապես կապված են միմյանց հետ և կազմում են միևնույն մեղալի երկու կողմերը։ Եթե թուրքացման քաղաքականությունն իր դեմքով ուղղված էր ներս, այսինքն՝ նպատակաուղղված էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի ծուլմանը, ապա պանթուրքիզմը հասցեագրված էր ամբողջ թուրքական աշխարհին, Օսմանյան կայսրության սահմաններից դուրս գտնվող թուրքերին, թուրքախոս ժողովուրդներին՝ նպատակ ունենալով նրանց միավորումը մեկ ընդարձակ կայսրության շրջանակներում՝ Ստամբուլի մականի ներքո։

<sup>123</sup> Ռաման աք-Ռույք, Էջեր հալ ազգի պատմությունը, էջ 237։

<sup>124</sup> Meussa Prince, L'Armenocidie, p. 31.





օսմանյան թուրքերի հակառակ ուղղությամբ շարժում՝ օսման թուրքերի տիրապետությունը ամբողջ թուրքական աշխարհի վրա տարածելու քաղաքական փորձ: Այդ պատճառով էլ նրանք այդ քաղաքականությունը համարում են «աս-սիյասա աք-թուրանիյա աք-թուրքիյա»՝ «թուրքական թուրանիզմի քաղաքականություն»:

Արաբական պատմագիտության մեջ պանթուրքիզմի առավել ամբողջական սահմանումը, մեր կարծիքով, սովել է Ջիհադ Սալիհը «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» ուսումնասիրության մեջ, որի մի գլուխը, ինչպես նշել ենք, նվիրված է Ֆայկական հարցի բնությանը պանթուրքիզմի տեսանկյունից: Ջիհադ Սալիհը գտնում է, որ «Թուրքական թուրանիզմը (իմա՝ պանթուրքիզմը — Ն. Գ.) աս-սիստական, շովինիստական, հետադիմական, ֆաշիստական շարժում է»<sup>126</sup>: Նա կայսերապաշտական նպատակներ էր հետապնդում, ձգտում էր ստեղծել մի նոր բնդարձակ պետական կազմավորում, հիմնված աս-սիզմի և թուրքական ազգի տիրապետության գաղափարների վրա: Անդրադառնալով այդ հարցին՝ Մովան ալ-Մուդավարը նշում է, որ «երիտթուրքերը սկսեցին իրականացնել աս-սիյասա աք-թուրքիյա (թուրանիզմի քաղաքականություն — Ն. Գ.) և քարոզում էին հոգուտ դրա, ձգտում էին ստեղծել նոր կայսրություն, կազմված թուրքական ժողովուրդներից, որոնք բնակվում էին Կովկասյան լեռներից մինչև Թուրքեստանի սահմանները»<sup>127</sup>: Խոսելով թուրանական կայսրության սահմանների մասին՝ արաբ հեղինակները երբեմն նշում են, որ նա տարածվելու էր մինչև Մոնղոլիա և Չինաստան:

Արաբ հեղինակները գտնում են, որ պանթուրքիզմը և նոր թուրանական կայսրության ստեղծումը մեծ սպառնալիք էր Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների համար, սակայն առանձնացնում են հայերին և արաբներին: Մովան ալ-Մուդավարի կարծիքով, երիտթուրքերի կողմից նոր թուրանական կայսրություն ստեղծելու դեպքում «նրանում տեղ չէր մնում մյուս ժողովուրդների համար, այնպիսի ժողովուրդների, ինչպիսիք են արաբներն ու հայերը»<sup>128</sup>:

Այդ երկու ժողովուրդներն անմիջականորեն կանգնած էին պանթուրքիզմի ծրագրերի իրագործման ճանապարհին, այդ պատճառով էլ նրանք ենթակա էին վերացման: Այդ տեսակետն առավել հստակ է ձևա-

126 Ջիհադ Սալի, Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև, էջ 6:

127 Մովան ալ-Մուդավար, Պաշտոնապատմության ընթացքում, էջ 402:

128 Նույն տեղում:



կական պատմեցի վերացմանը: Եվ քանի որ ծախտողում կրեց հայերի թուրքացման նրանց քաղաքականությունը, որը քնական ճանապարհով կարող էր վերացնել հայկական պատմեցը, ապա մնում էր միայն մի ելք՝ հայերի ֆիզիկական ոչնչացումը, որի մասին քազմիցս շեշտում են արքա հեղինակները:

Այսպիսով՝ հայերի և Օսմանյան կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների թուրքացման և էթնիկական առումով մաքուր թուրքական պետություն ստեղծելու խնդիրը միաժուլվեց պանթուրքիզմի քաղաքականության հետ: Ընդ որում, երկու դեպքում էլ հայերի վերացումը համարվում էր այդ ծրագրերի իրագործման գտավականը, որը թխում էր այդ ծրագրերի էթնո-քաղաքական նպատակաւղղվածությունից: Այս երկու խնդիրների՝ թուրքացման և պանթուրքիզմի միասնության համգամանքը, հիմնալի է նկատել հայ ժողովրդի պատմությունը, նրա անցած քազմադարյան ուղին խորապես ուսումնասիրած Ֆուադ Չասան Չաֆիզը: «Այդ երկու խնդիրները, — գրում է արքա պատմաբանը, — պահանջում էին օսմանյան հայերի վերջնական վերացում, քանի որ նրանք ներկայացնում էին քրիստոնեական և էթնիկական կարևոր ու մուսուլմանական և ոչ թուրքական փոքրամասնություն, որն ըստ էության անհնազանդ և ցնդդիմադիր էր, որը խանգարում էր թուրքերի տիրայնետության ծավալմանը և չէր ուզում ծառայել օսմանյան պետությանը: Նրանք՝ օսմանյան հայերը, քնակվում էին Անատոլիայի արևելքում, որի արևմուտքում մեծամասնությունը կազմում էին թուրքերը, և Կովկասում՝ ռուսական տիրույթներում, որի մեջ մտնում էին նաև դժգոհ թուրքերը: Նրանք (հայերը — Ն. Չ.) խոչընդոտ էին, որն անհրաժեշտ էր վերացնել, քանի որ խանգարում էր այդ երկու տերիտորիաներում (Անատոլիայում և Կովկասում — Ն. Չ.) քնակվող թուրքերի կապին»<sup>132</sup>:

Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի եական հարցի վրա: Երիտթուրքերը հայերի ոչնչացման գաղափարին հանգեցին, երբ ծախտողվեց նրանց բռնի թուրքացման քաղաքականությունը, երբ նրանք համոզվեցին, որը հայերը կամովին չեն գնա ծուլման և երբեք թուրք չեն դառնա: Այսինքն՝ նրանք հայերի ցեղասպանության իրագործմանը հանգեցին թուրքացման քաղաքականության, եթե կարելի է ասել, վերջում կամ ավարտական փուլում: Մինչդեռ պանթուրքիզմի դեպքում, հայերին ոչնչացնելու տեսակետին նրանք հանգել էին այդ

132 Լույս տեղում, էջ 302:



քիան կրեց Քուլդարիայի, Յունաստանի և Սերբիայի դեմ պատերազմում պարտվելու արդյունքում<sup>132</sup>։

Այսինքն՝ այստեղ խոսքը գնում է Օսմանյան կայսրության տրոհման, նրա այն տարածքների աստիճանական կորստի մասին, որոնք բնակեցված էին ոչ թուրք ժողովուրդներով։

Այս հանգամանքը, արաբ հեղինակների կարծիքով, պատճառ հանդիսացավ, որ երիտթուրքական ղեկավարությունը Ֆայկական հարցում գրավի ավելի կոշտ, ազդեխիվ և դաժան դիքորոշում, որպեսզի կանխի համանման գործընթացը Արևմտյան Չայաստանում։

Բայց այստեղ կա մի նրբություն, որի վրա ուշադրություն է դարձված արաբական պատմագիտության կողմից։ Կերոնշյալ երկրների՝ Յունաստանի, Եգիպտոսի, Թունիսի, Սերբիայի, Քուլդարիայի, Ռումինիայի, ապա նաև Լիբիայի, Մակեդոնիայի ու Թրակիայի անջատվելը Օսմանյան կայսրությունից, ինչքան էլ որ ծանր լիներ, այդուհանդերձ, դեռևս չէր նշանակում կայսրության կործանում։ Դրանք Օսմանյան կայսրության ծայրամասերն էին։ Թուրքերի տիրապետությունը շարունակվում էր պահպանվել ամբողջ Արևմտյան Չայաստանի և Արաբական Արևելքի երկրների՝ Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Չորդանանի, Պաղեստինի, այս կամ այն չափով եմենի առանձին հատվածների, ձևակերպելով նաև Մաուրյան Արաբիայի վրա։ Այդ թուրք կազմում էր մի վիթխարի տարածք՝ մարդկային և բնական մեծ ռեսուրսներով։ Քանի դեռ պահպանվում էր թուրքերի տիրապետությունն այդ տարածքների վրա, պահպանվում էր նաև Օսմանյան կայսրությունը։

Սակայն վախն արդեն պատել էր օսմանյան կառավարողներին։ Նրանք մտախոգ էին, որ եթե այդ գործընթացն իր մեջ ներգրավի նաև Արևմտյան Չայաստանը, ապա նրա անջատվելը մահացու հարված կլիներ Օսմանյան կայսրությանը և նրա գոյությունը կդառնար հարցական։

Ինչո՞ւ են արաբ որոշ հեղինակներ, որոնք քննարկել են այդ հարցը, այդպիսի կտրուկ եզրակացության հանգում։ Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք առաջին հերթին Ֆուադ Չասան Չաֆիզի և Սամիր Արբաշի մոտ։ Նրանք առաջ են քաշում և հիմնավորում Արևմտյան Չայաստանի, որպես Օսմանյան կայսրության սիրտը լինելու, մեր կարծիքով միանգամայն հիմնավորված տեսակետը։ Նրանք նշում են, որ թուրքական ղեկավարների գտնում էին, որ ոչ մի կերպ չի կարելի թույլ

132 Սամիր Արբաշ, Չայաստան, Իրաք և Սերբիայի, էջ 137։



հանգամանորեն կանդիդատանք աշխատության համապատասխան մասում, ուստի այստեղ բավարարվենք մշն, որ հայերը նման պահանջ, այսինքն՝ Օսմանյան կայսրությունից անջատվել և ստեղծել իրենց անկախ պետությունը, պատմական այդ փուլում չէին առաջադրում: Նրանք հանդես էին գալիս հիմնականում Օսմանյան կայսրությունում բարեփոխումների պահանջով և այս տեսակետը շատ հստակ է արտահայտված արաբական պատմագիտության մեջ:

Այդ դեպքում, որտեղից էր երիտթուրքերի ղեկավարության մոտ մտավախությունը հայերի նկատմամբ: Արաբ հեղինակներից այդ հարցին ամենից ավելի հանգամանորեն անդրադարձել է Սամիր Արաբաշև՝ Նա գտնում է, որ այդ հարցի բանալին պետք է փնտրել նախ և առաջ երիտթուրքերի ընդհանուր քաղաքականության ծալքերում և առաջ է քաշում նրանց կասկածամտությունը և բացի թուրքերից ոչ մի ազգի չվստահելու քաղաքականությունը, որ որդեգրեցին նրանց փաստորեն իշխանության գլուխ գալուց անմիջապես հետո: «Օսմանյան պետության նոր կառավարության քաղաքականությունը, — գրում է Սամիր Արաբաշև, — հիմնված էր այդ պետությունում բնակվող բոլոր ոչ թուրք ժողովուրդներին չվստահելու վրա»<sup>137</sup>: Եվ այստեղից նա անում է մի շատ կարևոր եզրակացություն՝ իր այդ քաղաքականության, այսինքն՝ բացի թուրքերից ոչ մի այլ ժողովրդի չվստահելու քաղաքականության հետևանքով օսմանյան «պետության կառավարությունը դարձավ միայն թուրքերի կառավարություն»<sup>138</sup>: Դրանով իսկ ավելի խորացավ վիճակը թուրքերի և մնացած բոլոր ոչ թուրք ժողովուրդների միջև: Դենց այստեղ պետք է փնտրել Օսմանյան կայսրության դժբախտության պատճառներից մեկը, հանգամանք, որը դարձավ նաև այդ կայսրության կործանման պատճառներից մեկը:

Այդ անվստահությունը հայերի նկատմամբ հասկապես ուժեղացավ բալկանյան ժողովուրդների կողմից անկախություն նվաճելուց հետո: Գույների, սերբերի, բուլղարների և բալկանյան մյուս ժողովուրդների կողմից օսմանյան լուծը բոքափելը և ազտագրվելը, ակամայից, վատթարացրեց հայերի վիճակը կայսրությունում՝ նրանց դնելով կասկածի ենթակա մյուս ժողովուրդների առաջին շարքում: Դաստիպեց երիտթուրքերի ղեկավարությանն ավելի զգոմ լինել և դիմել կանխարգելիչ քայլերի:

137 Սամիր Արաբաշև, Գալատան, Խոլ և ժողովուրդ, էջ 366.

138 Նույն տեղում:





## ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻ ՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿԵՏ

Արարական պատմագիտության մեջ, Հայոց ցեղասպանության պատճառների մեջ, իր արտացոլումն է զտել նաև մի տեսակետ, որն իմ հարցադրումներով ու մեկնաբանություններով տարբերվում է մյուսներից այն աստիճանի, որ դա այլ կերպ, քան ինքնատիպ կամ ուրույն տեսակետ, չի կարելի անվանել: Նրա հեղինակն է մեր կողմից բազմիցս նշված սիրիացի պատմաբան Նաիմ ալ-Յաֆին: Նա չի հակադրվում մախորդ բաժնում նշված պատճառներին, ընդհակառակը, նրա տեսակետները շատ հաճախ համընկնում են իր արաբ գործընկերների արտահայտած տեսակետներին: Դրանով համոզված, նա ներկայացնում է մի ամբողջական տեսակետ, որը շատ կողմնորոշ տարբերվում է դրանցից, ուստի և չի կարող դուրս մնալ ուսումնասիրողի տեսադաշտից: Նշենք, որ Նաիմ ալ-Յաֆին Հայոց ցեղասպանության պատճառների վերաբերյալ իր այդ ուրույն տեսակետն արտահայտել է «Հայոց ցեղասպանությունը և նրա նկատմամբ արարական հասարակական կարծիքի դիրքորոշումը» իր ծավալով ոչ մեծ աշխատության մեջ:

Նաիմ ալ-Յաֆին հայկական ցեղասպանությունը բաժանում է երեք փուլերի. «1. Սուլթան Աբդուլ Համիդ II-ի (Օսմանյան կայսրության) շրջան՝ 1894-1909 թթ.: 2. Երիտասարդ բուլղերի («Իթթիհադ վե Յերակկի» ջամիյաթի) շրջան, որն սկսվում է 1915 թ. ապրիլի 24-ի Մեծ եղեռնով: Քեմալական Թուրքիայի շրջան, որը սկսվում է 1919 թվականից և ավարտվում 1923 թ.»<sup>141</sup>:

Նրա աշխատությունում տրված են դրանցից յուրաքանչյուրի համառոտ բնութագիլը՝ մատնանշելով այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Օսմանյան կայսրության պատմական զարգացման ընթացքում, որի հետևանքով առաջացել են նոր խնդիրներ ու նոր երևույթներ, որոնցից նա հատկապես նշում է թուրքացման և պանթուրքիզմի քաղաքականության առաջին պլանի վրա մղվելը<sup>142</sup>:

141 Նաիմ ալ-Յաֆի, Հայոց ցեղասպանությունը և նրա նկատմամբ արարական հասարակական կարծիքի դիրքորոշումը, էջ 21:

142 Նույն տեղում, էջ 35-36



Նրանք զուրկ էին նման հնարավորությունից, որովհետև կար եվրոպական տերությունների միջամտության և կանխարգելման գործոնը: Ինչքան էլ որ քննադատելու լինենք եվրոպական պետություններին և նրանց մեղադրենք անհետևողականության մեջ, այդուհանդերձ, նրանց ներկայությունը և միջամտելու հնարավորությունը զսպիչ դերակատարություն ուներ, որը կաշկանդում էր սուլթաններին, ապա նաև երիտթուրքներին գործել ազատորեն և իրենց ցանկացած ձևով: Դա ինչ—որ չափով պաշտպանում էր հայերին թուրքերի սահման չճանաչող կամայականություններից ու բռնություններից: Պատերազմի հտնամքով այդ զսպիչ գործոնը վերացավ, որը գործողությունների լայն ազատություն տվեց երիտթուրքական ղեկավարությանը, որն ամմիջապես ձեռնամուխ եղավ Ֆայոց ցեղասպանության իրականացմանը, որի վաղուց մշակված ծրագիրը գտնվում էր երիտթուրքական ղեկավարության գրոցում:

Երկրորդ՝ Նաիմ ալ—Յաֆին ընդգծում է մի շատ կարևոր հանգամանք նա՝ ցեղասպանության իրագործման գաղտնիությունը: Դա նույնպես կապված էր արտաքին կամ միջազգային գործոնի հետ: Թշնամական ճամբարների բաժանված և պատերազմի կրակի մեջ ներգրավված եվրոպական տերությունները, որոնք զբաղված էին իրենց խնդիրները լուծելով, ո՛չ ժամանակ, ո՛չ հնարավորություն և ո՛չ էլ ցանկություն ունեին զբաղվել հայերի կոտորածների հարցով: Դա յուրատեսակ, կամ ինչպես արար հեղինակն է սնուրագրում, խավարի ու մթության մթնուլորտ էր ստեղծել և ապահովել հայոց ցողասպանության գաղտնիությունը: Այդ գաղտնիությունը, իրոք, նրկար ժամանակ պահպանվում էր, և միայն աստիճանաբար հայտնի դարձավ միջազգային հանրությանը:

Ֆայոց ցեղասպանության տեղական տարածաշրջանային պատճառները քննարկելիս Նաիմ ալ—Յաֆին նախ և առաջ քննարկում է «Ֆայաստամի աշխարհագրական դիրքը նրա միասնության և անկախության հնարավորության տեսանկյունից»<sup>145</sup>, նշելով, որ դա, այսինքն՝ միասնությունն ու անկախությունը, եղել է հայերի նրազանցը հնագույն ժամանակներից մինչև մեր դարաշրջանը: Այս տեսանկյունից մոտենալով խնդրին՝ Նաիմ ալ—Յաֆին Ֆայաստամի աշխարհագրական դիրքը համարում է «հայերի կոտորածների առաջին պատճառը»<sup>146</sup>: Դեռ ավելից՝ նա գտնում է, որ առանց այդ հանգամանքը հաշվի առնելու, «մնացած պատ-

145 Նույն տեղում

146 Նույն տեղում



ասատանի դեմ ուղի հանելու երիտթուրքերի փորձերին, երիտթուրքերի ձեռքում գործիք դառնալուց հայերի հրաժարվելուն, որն ավելի ուժեղացրեց երիտթուրքերի հակահայկական զգացումները:

Այս ամենը՝ Պայտանի աննպաստ աշխարհաքաղաքական դիրքը և տարածաշրջանային սուր հակասությունները, Նախ և՛-Յաֆիի կարծիքով, դարձան Պայոց ցեղասպանության երկրորդ պատճառը:

Մեծ եղեռնի երրորդ պատճառը Նախ և՛-Յաֆիին տեսնում է հայերի ներքին զարգացումների ու պատմական այն պայմանների մեջ, որում ապրել են հայերը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը<sup>151</sup>:

Նա այստեղ առաջին հերթին առանձնացնում է հայերի միասնականության հարցը՝ նշելով, որ հայերը միշտ չէ, որ եղել են միասնական քննամու միջամտության, հարձակումների ու բռնությունների դեմ համդիման: Նա առանձնացնում է հայերի անմիաբանության նրեք ասպարեզ կամ գուտի:

Առաջին՝ հայերի պառակտվածությունը օտարերկրյա պետությունների կողմից նրանց թագավոր նշանակելու, թագավորին զահից զրկելու կամ սպանելու հարցերում, որն իր ոլորտի մեջ ներառնում էր նաև թագավորական ընտանիքի անդամներին, մի հանգամանք, որը, ինչպես իրավագիտուն նշում է Նախ և՛-Յաֆիին, «ցնցում էր հայերի երկրի տնտեսությունը և հակառակ ազդեցությունն ունենում նրկու ոլորտների՝ ռազմական և քաղաքական, վրա»<sup>152</sup>:

Երկրորդ ասպարեզը կամ ոլորտը նա համարում է պայքարը տեղական ուժերի՝ ֆեոդալական նախարարական համակարգի ներսում, պայքար, որը պատակտվածություն էր մտցնում նրանց շարքերում, պետության մեջ և թուլացնում նրանց: Նրանք՝ եմիրները կամ իշխանները, սվյալ պարագայում նախարարները, իրենց պայքարում ապավինում էին իրենց շրջապատող այս կամ այն պետությանը և հաճախ էր պատահում, որ այս իշխանը դաշնակցում էր Պարսկաստանի հետ, մեկ այլ իշխան կամ իշխաններ դաշնակցում էին Բյուզանդիայի հետ՝ իրենց հետևից տանելով հայ ժողովրդին, այսինքն՝ նրան նույնպես ներգրավելով անմիաբանության և պայքարի մեջ<sup>153</sup>:

Եվ այս առիթով Նախ և՛-Յաֆիին կատարում է մի շատ կարևոր դիտողություն. «Այս պառակտվածությունը շարունակվեց օսմանցիների

151 Նույն տեղում, էջ 48:

152 Նույն տեղում:

153 Նույն տեղում, էջ 45-46:



րի մասին, ուշադրություն հրավիրում առանձին հարցերի վրա, դրանք  
ավելի զգույն դարձնում, ինչպես, օրինակ, հայերի պատակավածության  
և անմիաբանության հարցերը և այլն:

Կարծում ենք, որ Լաիմ ալ-Յաֆիի արտահայտած տեսակետները  
պետք է իրենց արժանի տեղը գտալեն Հայոց ցեղասպանության մա-  
խապայմանների և պատճառների համակարգում:





## «ՖՈՒՐՍԱՆ ԱԼ-ՉԱՄԻԴԻԵ» ԵՎ ԶՐԴԵՐԻ ՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻՆ

Արաբ պատմաբանները, մասնավորապես Մուսա Պրեմսը<sup>157</sup>, Ռաման աբ-Թուրքը<sup>158</sup>, Ֆուադ Չասան Չաֆիզը<sup>159</sup> և մյուսներն ընդգծում են, որ սուլթան Արդուլ Չամիդ II-ն իր հակահայկական քաղաքականությունը իրազդրծելիս մեծապես օգտագործում էր քրդերին և չերեզեզներին:

Երանք այդ խնդիրը քննարկում են Չայկական հարցը միջազգային դիվանագիտության հարցի վերածվելու և 1878 թ. Բեռլինի կոնգրեսի որոշումների հետ, որը փաստորեն սուլթանին գործողությունների որոշակի ազատություն տվեց և որից Արդուլ Չամիդ II շիապաղեց օգտվել: Ըստ որում, քրդերին իր նպատակների համար օգտագործելը և հայկական քարոզերի մեջ նրանք լայնորեն ներգրավելը, աղյուսարբու սուլթանի մոտ ոչ թե տարերային, այլ ծրագրավորված բնույթ էր կրում: Այդ առումով, ինչպես նշվում է արաբական պատմագիտության մեջ, առանձնահատուկ դերակատարում էր հատկացված «Ֆուրսան ալ-համիդիին», որը քառագիորեն նշանակում է «Չամիդիին հեծելագոր»: Եւ այդպես կոչվեց նրա հիմնադիր սուլթան Արդուլ Չամիդ II-ի անունով<sup>160</sup>: Չամիդիին ստեղծվեց 1891 թ. հատուկ հայերին բռնության մեջ պահելու և հայկական քարոզեր կազմակերպելու նպատակով: Եւ կազմավորվել էր քրդերից, ինչպես նշում է Ֆուադ Չասան Չաֆիզը, հայկական կոտորածներ իրականացնելու համար<sup>161</sup>: Մուսա Պրեմսը 1890-ական թվականների կոտորածները, մանավանդ Սասունում, չի պատկերացնում առանց համիդիինի մասնակցության՝ դրանք համարելով քրդական այդ հեծելագորի արյունոտ գործը<sup>162</sup>: Չամիդիինի առանձնահատկությունը, ինչպես ընդգծում է Ռաման աբ-Թուրքը, կայանում էր նրանում, որ նա չէր մտնում օսմանյան բանակի կազմի մեջ: Եւ առանձին, ինքնուրույն միավոր էր, որը զտնվում էր սուլթան Արդուլ Չամիդ II-ի անմիջա-

157 Moussa Prince, L'Armenocide, p. 28.

158 Ռաման աբ-Թուրք, Էթեր հայ ազգի պատմությունը, էջ 199:

159 Ֆուադ Չասան Չաֆիզ, Չայ մուրադեի պատմությունը, էջ 207-208:

160 Եւ կոչվում է Սան-Ֆիրազ ալ-համիդիին, որը համալսելուց նշանակություն ունի և բառացի նշանակում է «Չամիդիինի դիվիզիա»:

161 Եւրյն տեղում, էջ 208:

162 Moussa Prince, L'Armenocide, p. 28-29.



Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին, որտեղ ասվում էր, որ Բարձր Դուռը պարտավորվում է քարեփոխումներ անցկացնել հայկական վիլայաքներում, բարելավել հայերի դրութունը և երաշխավորել նրանց կյանքն ու անվտանգությունը<sup>165</sup>:

Ընդհանուր առմամբ դրական գնահատական տալով Սան Ստեֆանոյի պայմանագրին, արաբ պատմաբաններն առանձնացնում են նրա այն մասը, որտեղ արձանագրված էր, որ ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից պետք է հեռանային միայն այն քանից հետո, երբ սուլթանը կատարեր իր խոստումը Արևմտյան Հայաստանում քարեփոխումներ կիրառելու վերաբերյալ: Այդ պայմանի մեջ նրանք տեսնում էին հուսալի երաշխիք առ այն, որ քարեփոխումները կկիրառվեն և սուլթանի կողմից գործնական քայլեր կձեռնարկվեն հայերի անվտանգության ապահովման ուղղությամբ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ երբ խոսք էր գնում հայերի անվտանգության մասին, ապա արաբ հեղինակները նկատի ունեին, որպես սկզբունքային հանգամանք, հայերին նաև քրդական ցեղերի հարձակումներից պաշտպանելու խնդիրը:

Հայտնի է, որ քարեփոխումները չկիրառվեցին: Սակայն դրա մեջ արաբ պատմաբանները մեղադրում են ոչ միայն սուլթան Աբդուլ Համիդ II-ին, այլև մեծ տերություններին, առաջին հերթին Անգլիային և Գերմանիային: «Անգլո-ռուսական մրցակցությունը և բիսմարկյան»<sup>166</sup> մաքիավելիզմը.— գրում է Մուսա Պրենսը.— քույլ չտվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի իրականացումը»<sup>167</sup>:

Այդ հարցին ավելի հանգամանորեն են անդրադարձել Ռուսման ար-Թուրքը, Ֆուադ Հասան Հաֆիզը և Մրվան ալ-Մուդալարը: «Երջինս նշում է, որ «Բրիտանիան անհանգստությամբ էր նայում ցարական Ռուսաստանի ուժեղացմանը և նեղուցների վրա նրա վերահսկողությունը հաստատելու առաջխաղացմանը»<sup>168</sup>: Թուրքիայի բուլաջունը չէր մտնում Անգլիայի ծրագրերի մեջ և նրա վարչապետ Դիզրայելին, ինչպես նշում է Ֆուադ Հասան Հաֆիզը, ամեն կերպ ջանում էր պահպանել Օսմանյան կայսրությունը որպես բուֆեր՝ «ընդդեմ Ռուսաստանի էքսպանսիայի»<sup>169</sup>: Եվ հատկապես Անգլիայի ամենաեռանդուն ջանքերի շնորհիվ 1878 թ. հունիս-հուլիս ամիսների կայացավ Բեռլինի

165 Սթվան ալ-Մուդալար, Դաշեր պատմության ընթացքում, էջ 396:

166 Օսման ֆուհ Ռիսալեթին ալլ ժամանակ Գերմանիայի կանգնելու:

167 Mousa Pince, L'Arménie, p. 28:

168 Մրվան ալ-Մուդալար, Դաշեր պատմության ընթացքում, էջ 395-397:

169 Ֆուադ Հասան Հաֆիզ, Դաշ մուլեթի պատմությունը, էջ 192:



րության պահպանմանը, դառնությանը ավելացնելով, որ «այդ պետություններն անկեղծ չէին հայերին բուրբակաւ ստրկությունից ազատագրելու հարցում»<sup>172</sup>:

Այդ բուրբի հետևանքով ոչինչ չփոխվեց հայերի նկատմամբ օսմանյան քաղաքականության մեջ, ընդհակառակը, հալածանքներն ու հայերի կոտորածները Բեռլինի կոնգրեսից հետո ավելի մեծ ծավալներ ընդունեցին, որին ակտիվորեն ներգրավվեցին քրդերը: Չենց Բեռլինի կոնգրեսից հետո, 1891 թ. կազմավորվեց քրդական համիդիե հեծելազորը, իսկ 1894–1896 թթ. Օսմանյան կայսրությունում իրագործվեցին հայկական ջարդերը, որոնք ծավալների առումով մինչ այդ իրենց նախադեպը չէին ունեցել, և որոնց ժամանակ սուլթան Աբդուլ Չամիդ II-ի հիմնական զենքերից մեկը, եթե ոչ ամենազխալորը, հանդիսացան համիդիե քրդական հեծելազորն ու Մուսա բեկի տիպի քրդական ցեղապետները:

Մալիի Չահր աղ–Ղիմը, որն իր տարբեր աշխատություններում մի անգամ չէ, որ հայկական ջարդերի առնչությամբ անդրադարձել է օսմանյան կառավարողների կողմից քրդերին օգտագործելու հարցին, նկատում է, որ Աբդուլ Չամիդ II–ն այդ խնդրում արտակարգ ակտիվություն և հետևողականություն է ցուցաբերում սկսած XIX դարի 90–ական բվականների սկզբներից: Նա իր հակահայկական գործողությունների կենտրոնակետ է դարձնում Մասունք, որ նա համարում էր «ըմբոստ շրջան, որը պետք է հնազանդեցնել: Մակայն սասունցիներին քնաքնքեղ որոշվեց իրագործել քրդերի մեջում»<sup>173</sup>: 1891 թ. Քիթլիսի նահանգապետ Թահսին փաշան իր մոտ է կանչում քրդական գիլան ցեղի քուրդ ցեղապետներին և Աբդուլ Չամիդ II–ի անունից պահանջում ջիհադ՝ սրբազան պատերազմ սկսել հայերի դեմ<sup>174</sup>:

Չայկական հարցում քրդական գործոնը լուսաբանելիս Մալիի Չահր աղ–Ղիմն անաչառ մոտեցում է ցուցաբերում և հարազատ մնում փաստերին և պատմական ճշմարտությանը, որի մասին են վկայում ներքոհիշյալ փաստերը:

Չիհադ հայտարարելու Թահսին փաշայի պահանջի կապակցությամբ, որն օսմանյան սուլթանի պահանջն էր, արաբ պատմաբանը

172 Նույն տեղում:

173 Մալիի Չահր աղ–Ղիմ, Օսմանյան կառավարության քաղաքականությունը կրեմլյան Չայկապետներ և մեծ տերությունների դիրքերը, էջ 19:

174 Նույն տեղում, էջ 20:



ծակմանը: Եւ ոտքի հանեց 25000 զինյալ ջրղբի»<sup>178</sup>: Այստեղ արար հեղինակը մի կարևոր դիտողություն է անում, ընդգծելով, որ կային ջրղբեր, որոնք դեմ էին հայերի վրա հարձակվելուն: «որոշ ջրղբեր առարկում էին հարձակվել հայերի վրա, պատճառաբանելով, որ հայերի և ջրղբերի ընդհանուր թշնամին՝ օսմանյան կայսրությունն է և պետք է համախմբվել այդ ընդհանուր թշնամու դեմ»<sup>179</sup>: Դժբախտաբար, քրդական այդ հոսանքը թույլ եր և ի վիճակի չէր քաղաքական եղանակ ստեղծել քրդական իրականության մեջ, ընդդիմանալ սուլթանական ծրագրերին և, զոհն չմասնակցելու հայկական կոտորածներին: Այդ առճառով էլ «Նրանց ծայրը արծազանք չգտավ և հարձակվումը հայերի վրա ուժի մեջ մնաց, քանզի շատ ջրղբեր հայերի հարստությունը քալանելու ակնկալիքներ ունեին»<sup>180</sup>:

## **ՔԱՄԱԼ ԱՅՄԱԴԸ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌՃԱԿԱՏՄԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԷԹՆԻԿԱԿԱՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Քուրդ-հայկական հարաբերություններն իրենցից ներկայացնում են մի վերին աստիճանի քաղղ հանգույց, որը պահանջում է առանձնահատուկ մոտեցում, համակողմանի քննարկում, հաշվի առնելով բոլոր գործոնները և հանգամանքները:

Հայոց ցեղասպանությանը նվիրված արարական, և ոչ միայն արարական, պատմագրության մեջ քրդական գործոնը մշտապես ներկա է: Արար պատմաբանները, ինչպես ցույց տրվեց նախորդ րաժմում, այդ հարցին զգալի տեղ են հատկացրել: Սակայն պետք է խոստովանել, որ նրանք իրենց առջև խնդիր չեն դրել այդ հարցի համակողմանի և խորը ուսումնասիրությունը: Նրանց նպատակն է եղել ցույց տալ այն բացասական դերը, որ ջրղբեր խաղացել են հայերի նոր շրջանի պատմության, հայկական կոտորածների և Հայոց ցեղասպանության իրագործման մեջ: Այդ առումով նրանց կատարած աշխատանքը մեծապես օգնում է ճիշտ հասկանալու Հայոց ցեղասպանության իրականացման մե-

178 Նույն տեղում:

179 Նույն տեղում, էջ 21-22:

180 Նույն տեղում, էջ 22:





Քամալ Սիմադն քրդական գործոնը բաժանում է երկու կատեգորիա՝ յի՛ քրդերին ու հայերին բաժանող և մերձեցնող գործոնների, և իր աշխատության մեջ հանգամանորեն քննարկում է դրանցից յուրաքանչյուրը:

Հայերին և քրդերին բաժանող գործոններից Քամալ Սիմադն առաջին հերթին նշում է կրոնական գործոնը: «Կրոնը, — գրում է, — այն գործոններից մեկն էր, որ բաժանում էր նրանց»<sup>183</sup>: Դրա հետ միասին, նա այն կարծիքն է հայտնում, որ կրոնական գործոնն իրեն չէր դրսևորում. քանի դեռ չէր դրսևորվել մեկ այլ գործոն, որը, ինչպես նշում է նա, դարձավ հայ-քրդական հակասությունների իսկական պատճառը: «Այստեղ կար ուրիշ գործոն, — գրում է Քամալ Սիմադը, — որը նրկու ժողովուրդներին բաժանում էր միմյանցից՝ հայերը համեմատած քրդերի հետ ավելի զարգացած էին»<sup>184</sup>: Բարձր գնահատական տալով հայերի կողմից ատեղծված քաղաքակրթությանը՝ իրաքցի քուրդ պատմաբանն ընդգծում է, որ «բազմաթիվ պատճառների հետևանքով Հայաստանը Քրդստանից շատ ավելի վաղ ներգրավվեց կապիտալիստական շուկայի մեջ և այդ պատճառով նոր հարաբերությունները հայկական հասարակության մեջ առաջացան ավելի վաղ, քան քրդականում»<sup>185</sup>: Ի հավելումն, նա նշում է, որ արիեստագործական-տնայանագործական արտադրությունը և առևտուրը Քրդստանում գտնվում էր հայերի ձեռքում, որոնց դիմում էին քրդերն անհրաժեշտության դեպքում: Հայերը դառնում են դրամական վարկերի ու փոխառվածությունների գլխավոր աղբյուրը: Բացի դրանից, քրդական արիեստագործական արտադրությունը չէր կարող մրցել հայերի հետ: Եվ այդ կապակցությամբ Քամալ Սիմադն ընդգծում է, որ քուրդ ֆեոդալները բռնություններ էին կիրառում և հալածում հայ առևտրականներին, որպեսզի նրանց ետ չվերադարձնեն նրանցից վերցրած պարտքը: Քամալ Սիմադի կարծիքով, «դրա հետևանքով, տարբեր ժամանակներում, հայ ժողովրդի արդարացի ազատագրական շարժումը պատճառ հանդիսացավ, որ քրդերի մոտ որոշ վախ առաջանա նրա (հայերի ազատագրական շարժման — Ն. Դ.) ապագա աղոյունքների նկատմամբ»<sup>186</sup>:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք, ապա հայերին և քրդերին բաժանող գործոնը, ըստ արարագիծ քուրդ հնդիմակի, բաղկացած էր ե-

183 Քամալ Սիմադ, Քրդստանն Սիմադն համալսարանին պատկերացնե տալիներն, էջ 237:

184 Նույն տեղում:

185 Նույն տեղում:

186 Նույն տեղում, էջ 238-239:



հոգուտ նրանց շահերի էր, քանի որ թուրքական կառավարությունը վարում էր «քաժանիր, որ տիրես» քաղաքականությունը:

Այդ բոլորից հետո Քամալ Սիմաղը եզրակացնում է, որ «հայկական ջարդերի մեջ քրդերի դերն ուսումնասիրելու համար հարկ է նկատի ունենալ այդ բոլոր գործոնները, այդ բոլոր պատճառները միասին վերցրած»<sup>192</sup>, որի հետ, բնականաբար, ղեկար է չհամաձայնվել:

Կրկին անդրադառնալով հայերի 1915 թ. ցեղասպանությանը քրդերի մասնակցության հարցին, Քամալ Սիմաղն ընդգծում է, որ «մեծ ցավով պետք է նշել, որ քրդերն այս կամ այն աստիճանի, գիտակցաբար թե անգիտակցաբար, ուրիշների կողմից հրահրված թե կանխամտածված, մասնակցել են այդ սպանողին»<sup>193</sup>:

Կատարելով այդ վերին աստիճանի կարևոր եզրակացությունը՝ Քամալ Սիմաղը միաժամանակ արդարացիորեն բողոքում է ընդդեմ այն քանի, որ օսմանյան գործիչները ջանում են այդ բոլոր ջարդերի համար պատասխանատվությունը գցել քրդերի վրա և դա կապել նրանց հետամնացության ու ֆանատիզմի հետ, թեև նա չի էլ ժխտում, որ քրդերը հետամնաց էին և ինչ—որ տեղ նաև մոլեռանդ: «Գեներալները պետք է խոստովանեն,— գրում է Քամալ Սիմաղը,— որ կույր կրոնական մոլեռանդությունը և կուլտուրական հետամնացությունն այն երկու գլխավոր պատճառներն էին, որոնք քրդերի մեծամասնությանը մղում էին գյաուրների սպանությանը»<sup>194</sup>:

Քամալ Սիմաղը, որը վերլուծական մեթոդի հետևողական կողմնակից է, ջարդերի առթիվ կատարում է շատ հետաքրքիր և տրամաբանական մի դիտողություն, որի նմանը միշտ չէ, որ հանդիպում է պատմագիտական գրականության մեջ: «Քրդերն ու բուրքերը և տարածաշրջանի մյուս ժողովուրդների զավակները,— ընդունում է նա,— ալեկի հետամնաց էին ու ալեկի կապված իսլամի հետ նախքան այնպիսի նորության հանդես գալը, ինչպես ջարդերը, և այդուհանդերձ, հարյուրավոր տարիների ընթացքում հայերի և քրդերի միջև, քրդերի և ասորիների միջև չեն եղել արյունալի դրամաներ»<sup>195</sup>:

Այդ դեպքում, ո՞րն էր դրա պատճառը:

192 Լույճ տեղում, էջ 242:

193 Լույճ տեղում, էջ 257:

194 Լույճ տեղում, էջ 259:

195 Լույճ տեղում, էջ 260:



դարության պետք է նշել, որ հայերն այդ շրջանում անկախության հարց չեն առաջադրել: Քրդական ավազանին, ֆեոդալներն ու աղաները վախենում էին, որ Հայաստանի անկախության դեպքում իրենք կզրկվեին հայերին կողոպտելու ու թալանելու, հայերի հաշվին հարստանալու հնարավորությունից:

Եվ, վերջապես, Քամալ Ահմադը գտնում է, որ շատ քրդեր «հայերի սպանությունը դիտում էին որպես ցիհադ՝ հանուն ալլահի»<sup>193</sup>:

Այդ բոլորի հետ միասին, Քամալ Ահմադի գրքում բերված են օրինակներ հայ-քրդական բարեկամության պատմությունից, այդ թվում և 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ, երբ քրդերը, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, փորձել են փրկել կամ օգնել հայ գաղթականներին:

Ընդհանուր գծերով ահա այսպիսին է Քամալ Ահմադի հայեցակարգային մտածումը հայ-քրդական հարաբերությունների և հայերի ցարդերին ու ցեղասպանությանը քրդերի մասնակցության կնճռոտ խնդրին: Նրա հայեցակարգում անհրաժեշտ է առանձնացնել նրեց սկզբունքային հանգամանք:

Առաջին՝ քրդական հասարակության ներսում կային որոշակի ուժեր և սոցիալական խավեր՝ ֆեոդալներ, շեյխեր, ցեղային ավազանի, աղաներ և զինվորականներ, որոնք քաղաքական և տնտեսական առումներով շահագրգռված էին «Հայկական հարցը լուծել հայերին ոչնչացնելու ուղիով»:

Երկրորդ՝ հայ-քրդական հակասություններն արտահայտությունն էին յուրահատուկ իրողությունների և զարգացման տարբեր մակարդակների՝ բարձր մակարդակի վրա գտնվող և կապիտալիստական հարաբերությունների ոլորտը ոտք դրած հայերի, և ցածր մակարդակի վրա գտնվող և դեռևս ֆեոդալական ու ցեղային հարաբերություններում խաղիսափող քրդերի:

Երրորդ՝ Օսմանյան կառավարությունը և թուրքական կառավարող վերնախավը օգտագործում էին քրդերին որպես գործիք հայերին ոչնչացնելու իրենց ոճրագործ ծրագրերն իրականացման համար:

Քամալ Ահմադի աշխատությունը, որն անվերապահորեն կարելի է համարել լուրջ ուսումնասիրություն, նրանում հեղինակի արտահայտած մտքերն ու տեսակետները, ավելի քան հավատարեցած ենք, որ մե-

ծախես կօզնեն ճիշտ ըմբռնելու հայ-քրդական հարաբերությունների  
ընկաթը, նրանում եղած բարդությունները, անհասկացողությունները,  
և, ի վերջո, այդ ժողովրդի կատարած պատմական խոշոր սխալի քա-  
ղաքական, տնտեսական և էթնո-մշակութային դրդապատճառները, ո-  
րոնք շատ ծանր հետևանքներ ունեցան արևմտահայության համար,  
իսկ հետագայում շատ բանկ նստեցին նաև քուրդ ժողովրդի և նրա քա-  
ղաքական ճակատագրի վրա:

## ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԱՏԱԿԱՅԵՐԻ ՊԱԿԱՆՁՆԵՐԻ ԱՎ- ՍԻՆ

**Յ**այկական ջարդերի ու ցեղասպանության պատճառները քննարկելիս, բնականաբար, հարց է առաջանում, թե ինչպիսին են եղել հայերի պահանջները, արդյոք նրանք չեն պարունակել այնպիսի դրույթներ, որոնք սպառնում էին Օսմանյան պետության ամբողջականությանը կամ գոյությանը, և կարող է հիմք ծառայելին հայերին ֆիզիկապես ոչնչացնելու համար:

Այդ հարցը վաղուց է քննարկման նյութ դարձել ժամանակակից պատմագիտության մեջ, և արաբական պատմագիտությունը նույնպես չէր կարող չըջանցել այդ սկզբունքային բնույթի հիմնախնդիրը:

Արաբական հեղինակները, մանրագնին և հիմնադար կերպով ուսումնասիրելով հարցը, միակարծիք են, որ արևմտահայերը պատմական այդ ժամանակաշրջանում երբեք չեն դրել Օսմանյան կայսրությունից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու խնդիր: Այդպիսի հարցադրում հայերի կողմից չի եղել, ուստի և չկա թելուզ և մեկ արաբ ուսումնասիրող, որը հակասակ տեսակետ ներկայացնեք: Մա շատ սկզբունքային մոտեցում է, որն ավելի է ծանրացնում սուլթանների և երիտթուրքերի մեղքն այն առումով, որ նրանք իրազործեցին մի ժողովրդի ցեղասպանություն, որը չէր դնում նրանցից անջատվելու և իր ազգային պետական միավորումը ստեղծելու հարց:

Բայց, այդուհանդերձ, հայերն ունեին հարց, որը խարսխված էր նրանց ազգային և մարդկային իրավունքների հարգման, ազգային անվտանգ գոյության ապահովման և ազգային արժեքների ու ինքնու-





պայմանագիր, որն ամրագրեց Օսմանյան կայսրության ռազմական պարտությունը: Հենց այդ պայմանագիրը պարունակում էր հատուկ հոդված՝ 16-րդ հոդվածը, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կիրառելու մասին: Գողվածում արձանագրված էր. «Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից շխտղ բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և շերքեզներից»<sup>200</sup>:

Պայմանագիրը պարունակում էր նա մի շատ կարևոր կետ. Թուրքիան համաձայնվեց, որ Ասիական Թուրքիայում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում, ռուսական զորքերը կմնան վեց ամիս ժամանակով, որի ընթացքում այնտեղ պետք է կիրառվեին բարեփոխումները: Ռուսական զորքերի ներկայությունը բարեփոխումների իրագործման երաշխիքն էր համոզիսանում:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը Հայկական հարցի լուծման հեռանկարների տեսակետից, ընդհանուր առումով, արժանի է դրական գնահատականի:

Այդ մոդելը հենց այդպես է ընկալվել արաբական պատմագիտության կողմից: Մրվան ալ-Մուդավարը, որն իր աշխատության մեջ լրիվ արաբերեն բարձմանությամբ, տվել է 16-րդ հոդվածի ամբողջական տեքստը, հատուկ շնչտում է, որ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր բարենորոգումներ կիրառել հայկական վիլայաթներում և ապահովել հայերի անվտանգությունը<sup>201</sup>: Իսկ Ուսման աթ-Թուրքը հատուկ ընդգծում է, որ Սան Ստեֆանոյում «տուները ներկայացրեցին հայկական պահանջները»<sup>202</sup>, այսինքն՝ ռուսների ու հայերի միջև համաձայնություն է եղել որոշակի պահանջների վերաբերյալ, ուստի և Ուսման աթ-Թուրքը Թուրքիային Ռուսաստանի ներկայացրած պահանջները համարում է հայկական պահանջներ:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Սան Ստեֆանոյի որոշումները և դրանք բարենպաստ համարելով հայերի համար՝ արաբ պատմաբանները միաժամանակ ցավ են հայտնում, որ օսմանյան կողմը մերժեց վարչական ինքնավարություն տալու հայկական պահանջը և դրա փոխարեն սուկ համաձայնվեց բարենորոգումներ անցկացնել հայ-

200 Հայաստանը միջազգային ընդանազխության և տնտեսական պատկերի բարելավմանը զառաարգրելով (1628-1623), Երևան, 1972, էջ 92:

201 Մրվան ալ-Մուդավար, Հայերը պատմության ընթացքում, էջ 396:

202 Ռաման աթ-Թուրք, Էջեր հայ ազգի պատմությունից, էջ 188:



րառման մեխանիզմը, որը կապված էր այդ վիլայաքներում ռուսական զորքերի առնվազն վեց ամիս մնալու հետ, որի ընթացքում պետք է կիրառվեին այդ քարեփոխումները: Դա պարտադրող հանգամանք էր, որից օսմանյան դեկավարությունը հազիվ թե կարողանար խուսափել: Բեռլինի կոնգրեսի որոշումները պարտավորեցրին ռուսական զորքերն անհապաղ դուրս բերել Ասիական Թուրքիայից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից: Իսկ դա նշանակում էր, որ քարենորոգումները կիրառելու համար Թուրքիային պարտադրող ոչ մի գործոն կամ մեխանիզմ չէր նմու՛ երկրորդ՝ ոչ միայն վերագվեց քարենորոգումների կիրառման մեխանիզմը, այլև Բեռլինի կոնգրեսը սուլթանին էր հանձնում հարցի լուծումը, քննելով ռուսական պետություններին՝ Անգլիային, Գերմանիային, Ավստրո-Հունգարիային և Ֆրանսիային շատ լավ հայտնի էր, որ հայերի ծանր վիճակի առաջին պատասխանատուն սուլթան Աբդուլ Համիդ II-ն էր, որն անձամբ ինքն էր հրահրում քրդերի և չեղքեզների հակահայկական գործողությունները:

Ուստի միանգամայն իրավացի է Մուսա Պրեմսը, երբ նա գրում է, որ Բեռլինի կոնգրեսի որոշումների առաջին զոհերը եղան հայերը, քանի որ վերոնշյալ եվրոպական տերություններն արգելք եղան Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի կիրառմանը<sup>205</sup>: Դա էլ հիմք տվեց Ուսման աք-Թուրքին հայտարարելու, որ եվրոպական այդ պետությունները խաբում էին հայերին և կեղծ էին նրանց հավաստիացումները հայերին համակրելու և օգնելու վերաբերյալ:

Ընդհանրապես պետք է նշել, որ արաք պատմագիտության մեջ Բեռլինի կոնգրեսի որոշումները և եվրոպական պետությունների քաղաքականությունը Հայկական հարցում շատ խիստ քննադատության է ենթարկվել, որի վկայությունը ոչ միայն Մուսա Պրեմսի և Ուսման աք-Թուրքի, այլև Մրվան ալ-Մուդավարի, Ֆուադ Հասան Հաֆիզի, Սալիի Չահր ադ-Դիմի, Ասադ Ղադիրի, Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամի, Սամիր Արբաշի և այլ հեղինակների աշխատություններն են, Իսլամական և լիբանանյան համրագիտարանները և այլն: Այդ առումով, թերևս, ամենադիպուկը և տարրդունակը Չեյն Չեյնի տված գնահատականն է: Բեռլինի կոնգրեսը, գրում է նա, «փրկեց Օսմանյան կայսրությունը անհապաղ տրոհումից և կործանումից»<sup>206</sup>:

205 Moussa Prince, L'Armenocide, p. 28:

206 Zeina N. Zeina, The Emergence of Arab Nationalism, New York, p. 66.



վուրդների մոտ, ճանապարհային արարների և հայերի: Նա իր կողմնակիցներն ունեցավ նաև բուրք առանձին քաղաքական գործիչների շարքերում: Թուրքական հասարակության մեջ այդ հոսանքի հեղինակավոր ղեկավարն էր իշխան Սարահեղդինը՝ սուլթան Աբդուլ Չամիդ II-ի զարմիկը, քրոջ որդին: Նա մտահոգ էր Օսմանյան կայսրության ապագայով, նրա հետամնացությունը հաղթահարելու և առաջադեմ ու զարգացած երկրի վերածելու խնդիրներով, և կողմանակից էր, որ կայսրության բոլոր ոչ բուրք ժողովուրդներին տրվի լայն ինքնավարություն: Նա գտնում էր, որ կայսրության ազգային ծայրամասերին կարելի է տալ ինքնավարություն և Օսմանյան կայսրությունը վերակառուցել իրավահավասարազոր պետական կազմավորումների կոնֆեդերացիայի: Նման իրավունքից պետք է օգտվեին նաև արևմտահայերը:

Օսմանյան կայսրությունը կոնֆեդերացիայի վերածելու Սարահեղդինի ծրագիրը շատ համարձակ առաջարկություն էր և կարծում ենք, որ Թուրքիան դեռևս հասունացած չէր նման եվրոպական արժեքների վրա հիմնված արժատական վերակառուցման:

Այդուհանդերձ, Սարահեղդինի հայացքները պաշտպանություն գտան 1911 թ. ձևավորված «Ազատություն և համաձայնություն» կուսակցության ղեկավարության կողմից, որը հավանություն տալով ապակենտրոնացման սկզբունքին՝ առաջադրեց «Քալկանյան երկրները՝ քալկանյան ժողովուրդներին», «Արաբական երկրները՝ արաբներին», «Չայաստանը՝ հայերին» և «Ջրդստանը՝ քրդերին» լոզունգները: Նրանք պետք է դառնային ոչ թե անկախ պետություններ, այլ Օսմանյան կայսրության ներքին ինքնավար շրջաններ<sup>207</sup>:

Սակայն ապակենտրոնացման տեսակետն իր ջերմեանդ կողմնակիցներն ունեցավ հատկապես արաբական երկրներում, արաբական համարյա բոլոր սոցիալական խավերի մեջ: Իսկ դա շատ կարևոր հանգամանք էր, քանի որ արաբները Օսմանյան կայսրության թվաքանակով ամենամեծ ժողովուրդն էին և զերազանցում էին նաև բուրքերին: Նրանք 1912 թ. Կահիրեում հիմնեցին «Չիզբ ալ-լամարբագիյա ալ-իդարիյա ալ-օսմանի»՝ «Օսմանյան վարչական ապակենտրոնացման կուսակցությունը», որը կրճատ կոչվում էր Լամարբագիյա<sup>208</sup>, այսինքն՝ Ապակենտրոնացում: Նրա ղեկավարներն էին արաբական երևելի ազ-

207 Зыков В. В. Новая история арабских стран, Москва, 1963, с. 301.

208 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս և՛ Գրիգորյան, Վարդանի երկրների պատմություն, Գ. Է, էջ 477-495:



Արաբական փաստաթղթերը վկայում են, որ Լամարքագիա կուսակցության ղեկավարությունը համազործակցում էր հայերի հետ, նրանք խորհրդակցում և համաձայնեցնում էին միմյանց դիրքորոշումները՝ ելակետ ունենալով Օսմանյան կայսրության ապակենտրոնացման սկզբունքը: Դրա լավագույն դրսևորումը եղավ Արաբական առաջին կոնգրեսի գումարումը, որը կայացավ 1913 թ. հունիսի 18–23–ը Փարիզում: Կոնգրեսին արաբական տարրեր երկրների ներկայացուցիչների հետ միասին մասնակցում էր՝ հյուրի կարգավիճակով, մեկ հայ: Կոնգրեսի նախագահն էր Արդ Չամիդ ազ–Չահրավին:

Կոնգրեսի աշխատանքները և նրանում ծավալված քննարկումներն անցնում էին շատ րուս կերպով: Ելույթ ունեցողները հայտարարում էին, որ արաբներն ուզում են բարեփոխել կայսրությունը, որովհետև ուզում են մասնակցել ժամանակակից քաղաքակրթությանը և նայում են եվրոպային՝ օգնության համար: Դրա հետ միասին կոնգրեսի մասնակիցներն անհրաժեշտ համարեցին իրենց հավատարմությունը հայտնել Օսմանյան կայսրությանը՝ ցանկանալով այն տեսնել որպես ուժեղ պետություն: Կոնգրեսի կողմից անջատման պահանջ չդրվեց և ընդունեց մի որոշում, որի հիմքում դրված էին Լամարքագիայի վերնում արդեն նշված Օսմանյան կայսրության ապակենտրոնացման հիմնադրույթները:

Կոնգրեսում հայ ներկայացուցիչը, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, հայ ժողովրդի անունից լիակատար աջակցություն հայտնեց արաբներին, նրանց պայքարին և նրանց կողմից առաջադրված ապակենտրոնացման մոդելին:

Կոնգրեսն իր հերթին անդրադարձավ հայերի դրությանը կայսրությունում և նրանց ազգային պահանջներին: Այդ հարցի վերաբերյալ հանդես եկավ կոնգրեսի նախագահ Արդ Չամիդ ազ–Չահրավին, որը հայտարարեց հետևյալը. «Մեր հայ եղբայրների դրությունը նման է մեր դրությանը: Նրանք այնպիսի մարդիկ են, ինչպես և մենք, նրանք մտածում են այնպես, ինչպես մենք ենք մտածում, նրանք պահանջում են այն, ինչ մենք ենք պահանջում: Եվ մենք հաջողություն ենք ցանկանում ինչպես մեզ, այնպես էլ նրանց: Մենք միասնական ենք Օսմանյան կայսրության միասնականության հարցում»<sup>213</sup>:

Կոնգրեսի ընդունած որոշման մեջ, հայկական պահանջներն առանձին էին ներկայացված: Դրանց հատկացված էր որոշման 8–րդ կետը:

213 Կասեթի ալ–մոթամաթ ալ–ալաբի ալ–սայի, 1913 — Արաբական Առաջին կոնգրեսի փաստաթղթեր, 1913 թ., Փեյրոս, 1965, էջ 117, ստորերև:





ման քերես ամենահեռանկարային մոդելն էր: Եւ, համեմատած մյուս տարրերակների հետ, ավելի բարձր մակարդակ էր ներկայացնում՝ մի կողմից, և արդեն իր նախադեպն ուներ՝ մյուս կողմից: Խոսքը Լիբանանի կամ ավելի ստույգ «Լեռնալիբանանի օրգանական ստատուտի» մասին է, որը կիրառվեց Օսմանյան կայսրությունում 1861 թ.:

Դրան նախորդել էին դրուզների և մարոնիների միջհամայնքային արյունալի բախումները Լիբանանում 1845 և 1860–1861 թթ., որոնք վերածվեցին զանգվածային սպանդի: Դրա հրահրման մեջ մեղսակցության իրենց բաժինն ունեին ինչպես օսմանյան կառավարությունը, այնպես էլ եվրոպական պետությունները, առաջին հերթին՝ Անգլիան ու Ֆրանսիան: Արաբ մարոնի և դրուզ համայնքների զինված ջոկատները միմյանց կոտորում էին Քեյրուբում, Չախլեում, Սայդայում, Դեյր ալ-Կամարում, Դամասկոսում և նրա շրջակայքում: Այդ ընթացքում սպանվեց 20 հազար մարդ, ոչնչացվեց 380 քրիստոնեական գյուղ, 540 եկեղեցի, 40 տաճար և այլն: Մեծ էին նաև մահմեդականների և դրուզների զոհերն ու կորուստները:

Ստեղծված ծանր պայմաններում, 1860 թ. սեպտեմբերի 5–ին, Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան կազմեցին միջազգային հանձնաժողով, որին հարկադրաբար մասնակից դարձավ նաև Օսմանյան կայսրությունը: Հանձնաժողովի գլխավոր նպատակը ոչ միայն և ոչ այնքան այդ սպանդի պատճառների բացահայտումը և մեղավորներին պատժելն էր, որքան այնպիսի միջոցառումների մշակումը, որը կանխելու նման իրադարձությունների կրկնումը, և ամենակարևորը, մշակելու Լիբանանի կառավարման նոր վարչաձև կամ իրավական նոր ստատուտ:

Երկար բանակցություններից հետո հանձնաժողովն ավարտեց այդ իրավական փաստաթղթի մշակումը, որը ստորագրվեց 1861 թ. հունիսի 9–ին Ստամբուլում՝ Անգլիայի, Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Օսմանյան կայսրության կողմից: Փաստաթուղթը կոչվում էր «Լիբանանին տրված կանոնադրությունը», որը մասնագիտական գրականության մեջ ավելի շատ հայտնի է «Լիբանանի օրգանական ստատուտ» անվանումով:

Դա մի կանոնադրություն էր, որը ներառում էր Լեռնալիբանանին վերաբերող վարչակառավարական, օրենսդրական, դատական, տնտեսական, ոստիկանական և տեղական մարմիններին վերաբերող բոլոր հարցերը:

Այդ ստատուտի համաձայն, Լեռնալիբանանը հռչակվում էր ինքնավար նահանգ՝ մութասառիֆիա, որի գլուխ կանգնած էր քրիստոնյա նահանգապետը կամ փոխարքա-մութասառիֆը: Նա նշանակվում էր օսմանյան սուլթանի կողմից, որի քելնածությունը պետք է նախօրոք համաձայնեցված և ընդունելի լիներ համաձայնագիրը ստորագրած վերոնշյալ եվրոպական պետությունների կողմից, որոնք հանդիսանում էին Լեռնալիբանանի նոր ստատուտի, ինքնավարության երաշխավորներ: Մութասառիֆի քրիստոնյա լինելը պարտադիր պայման էր: Մութասառիֆին կից ստեղծվում էր Վարչական խորհուրդ: Մութասառիֆը պարտավոր էր ապահովել կարգ ու կանոնը և խաղաղությունը ամբողջ երկրամասում, որտեղ թուրքը հայտարարվեցին օրենքի առաջ հավանաբար: Նրա իրավասությունների մեջ էր մտնում նշանակել տեղական պաշտոնյաներ և դատավորներ, ապահովել դատավորների կողմից օրենքի հիման վրա արձակված վճիռների գործադրումը, ստեղծել տեղական ոստիկանություն՝ խաղաղությունը ու օրենքը պահպանելու համար, և այլն:

Լիբանանի առաջին փոխարքա կամ մութասառիֆ, եվրոպական պետությունների ներկայացմամբ, օսմանյան սուլթանը նշանակեց Կաթուպետ Արքին Ղաուդյանին<sup>215</sup>: Նա՝ այդ երեսնի հայը, օժտված էր պետական գործչին հատուկ բարձր հատկանիշներով, և հիանալի կերպով կատարեց փոխարքայի իր պարտականությունները:

Լիբանանյան այս մոդելը հետագայում՝ ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմից հետո, անշան փոփոխություններով կիրառվեց նաև Բուլղարիայում, երբ Բեռլինի տրակտատով Բուլղարիան քաժանվեց երկու մասի: Մի մասում ստեղծվեց թուրքարական ինքնավար պետություն, որն իրավունք ստացավ ընտրել իր իշխանին, որը, սակայն, հաստատվելու էր օսմանյան սուլթանի կողմից՝ եվրոպական պետությունների համաձայնությամբ: Բուլղարիան ունեցավ իր օրգանական ստատուտը՝ նրան տրվեց Սահմանադրություն ունենալու իրավունք:

Բուլղարիայի մյուս մասը՝ Արևելյան Ռումելիան, մնալով անմիջականորեն օսմանյան սուլթանի իշխանության տակ, ստացավ վարչական ինքնավարություն: Նրա կառավարիչը, որն անպայման պետք է լիներ քրիստոնյա, նշանակվում էր սուլթանի կողմից, բայց նրա քելնա-

215 Оганесян Н. О. Арабская историография по новой истории Армении — Новая история Армении в трудах современных зарубежных авторов, Ереван, 1992, с. 118—119.

ծությունը պետք է արժանանար եվրոպական պետությունների հավանությանը<sup>216</sup>։

Այսպիսին էր լիբանանյան մողելի քաղաքական և իրավական բովանդակությունը, որը սկզբունքորեն ընդունելի դարձավ օսմանյան տուքանի և եվրոպական առաջատար պետությունների համար, և կիրառություն գտավ կայսրության արաբական և քալկանյան տարածքներում։

Արաբական պատմագիտության մեջ այդ մողելը քննության է առնված նաև Հայկական հարցի լուծման տեսանկյունից։ Արաբ հեղինակները հաստատում են, որ այդ մողելն ընդունելի էր նաև արևմտահայության, նրա քաղաքական տարրեր ուժերի և հայկական եկեղեցու համար։ Նրա կողմնակից են եղել հայոց կաթողիկոս Նրիմյան Հայրիկը, Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը և այլն։ Այդ մողելը, ինչպես վկայում են արաբ պատմաբանները, ոգեշնչման աղբյուր է եղել հայերի համար, որի հետ նրանք մեծ հույսերն են կապել։ «Ոգեշնչված լիբանանյան նախադեպով,— գրում է Մուսա Պրենսը,— հայերը ցանկանում էին ստանալ մի համեստ վարչական ինքնավարություն, եվլազ հավակնորդ, քան Լեռնալիբանանի միջազգային ստատուտը»<sup>217</sup>։ Մուսա Պրենսը լիբանանյան մողելը համարում է ընդամենը մի համեստ պահանջ՝ ընդգծելով, որ հայերը պատրաստ էին անգամ ավելի ցածր կարգավիճակ ունենալ, քան տրված էր Լեռնալիբանանին։

Հայերը ցանկացել են այդ հարցը քննության առարկա դարձնել Բեռլինի 1878 թ. կոնգրեսում և խնդրել օսմանյան ղեկավարությունից ու եվրոպական մեծ պետություններից Արևմտյան Հայաստանին ևս տրամադրել Լեռնալիբանանի ստատուտի մեծն մի ինչ—որ կարգավիճակ։ Այդ առնչությամբ, արաբական պատմագիտության մեջ շոշափված է Բեռլինի կոնգրեսին հայերի մասնակցության հարցը։ Լիբանանյան հանրագիտարանում նշված է, որ հայերը պատրաստեցին մի պատվիրակություն հայոց կաթողիկոս Նրիմյան Հայրիկի գլխավորությամբ և ուղարկեցին Բեռլին՝ կոնգրեսին մասնակցելու համար<sup>218</sup>։ Սակայն կոնգրեսի մասնակից պետությունները, նշում է արաբական նույն աղբյուրը, հրաժարվեցին քույլատրել հայոց պատվիրակությանը մասնակցել կոնգրեսին՝ պատճառաբանելով, որ այդ պատվիրակությունը

216 Дипломатический словарь, т. I, Москва, 1969, с. 178.

217 Moussa Prince, L'Armenocide, p. 28.

218 Դախրա ալ-Մաարիֆ, 9. X, էջ 300:



սը, ինչպես գրում է Ուսման աթ–Թուրքը, Լոնդոն ուղարկեց հատուկ պատվիրակություն Պողոս Նուբարի գլխավորությամբ, հանձնարարելով նրան կոնֆերանսի առջև հարց բարձրացնել ըննարկելու հայկական վիլայաթներում բարեփոխումների իրագործման հարցը: Սակայն, գրում է աղաթ պատմաբանը, կոնֆերանսը հրաժարվեց ընճել հայերի խնդրանքը<sup>221</sup>: Մուսա Պրենսի դիպուկ բնորոշմամբ՝ «Հայկական վիլայաթներում բարեփոխումներ կիրառելու խոստումները մնացել էին մեռյալ կետի վրա», իսկ կառավարական պաշտոնյաները և քրդական ցեղերը շարունակում էին բոլոր իրավական նորմերի խախտումը և ավագակությունը<sup>222</sup>:

Այդուհանդերձ, ինչպես նշվում է աղաթական պատմագիտության մեջ, Հայկական հարցը նորից բարձրացնելու համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1912–1914 թթ., որը կապված էր 1912–1913 թթ. բալկանյան պատերազմների և Թուրքիայի պարտությունների հետ: Աղաթական պատմաբանների վկայությամբ՝ կրկին նախաձեռնությամբ հանդես եկավ հայոց կաթողիկոս Գևորգ Զինգեբրորդը:

Ցարական կառավարությունը, ընդառաջելով կաթողիկոս Գևորգ Զինգեբրորդի խնդրանքին, մշակեց և 1912–1913 թթ. եվրոպական մեծ տերությունների ըննարկմանը ներկայացրեց Հայկական հարցի կարգավորման մի առաջարկություն, որի հիմքում դրված էին Լեոնալիբեանսի ինքնավարության սկզբունքները: Ռուսական առաջարկությունը ըննարկման առարկա դարձավ Ստամբուլում հավատարմագրված եվրոպական մեծ տերությունների ղեկավարների ժողովում 1913 թ. հուլիսի 3–24–ը:

Ռուսաստանն առաջարկում էր հայկական վեց վիլայեթները՝ էրզրումի, Բիթլիսի, Խարբեռլի, Սվասի, Վանի և Դիարբաքրի, միավորել և ստեղծել մեկ Հայկական մահանգ, որի զբոխ կանգնած էր լինելու նահանգապետը: Նա նշանակվում էր սուլթանի կողմից՝ եվրոպական պետությունների համաձայնությամբ, հինգ տարի ժամանակով: Նահանգապետը պետք է լիներ օտանահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի: Նահանգապետի ձեռքում կենտրոնացվելու էր ամբողջ գործադիր իշխանությունը, ստեղծվում էր Վարչական խորհուրդ և ընտրվում նահանգական խորհուրդ, որտեղ քրիստոնյաները և մահմեդականները ներկայացված էին հավասարապես:

221 Ուսման աթ–Թուրք, էջ 68 հալ ազգի պատմությունից, էջ 191:  
222 Moussa Prince, L'Amenockle, p. 31.



Պրա փոխարեն առաջարկվում էր վերականգնել վեց վիլայաթների կարգավիճակը: Թուրքիան դեմ էր նաև եվրոպական վերահսկողության հաստատմանը՝ կապված պաշտոնյաների նշանակման և նախագծի իրականացման հետ:

Երկու առաջարկությունների շուրջ սկսվեց դիվանագիտական երկարատև պայքար, որի ընթացքում Ռուսաստանը հարկադրված դիմեց զիջումների:

Խոսքը հետևյալի մասին է: Արաբական պատմաբաններն ուշադրություն են դարձրել Ռուսաստանի կողմից Չերմանիայի առաջարկված մի կարևոր կետի ընդունման վրա: Այն ժամանակ, երբ հայերը պահանջում էին բարենորոգումներն անցկացնել Ռուսաստանի հսկողության պայմաններում, Չերմանիան առաջարկեց մեղծել այդ պահանջը և բարենորոգումների հսկողությունն իրականացնել միջազգային երկու կոմիսարների կողմից, որոնք պետք է լինեին չեզոք պետություններից<sup>225</sup>: Այդ պահանջն իր արտացոլումը գտավ ռուս-թուրքական պայմանագրի մեջ: Դժվար չէ կօտհել, որ Չերմանական հակաառաջարկը նպատակ էր հետապնդում չթողնել Ռուսաստանի դիրքերի ուժեղացումը՝ մի կողմից, և սքողված ձևով բարենորոգումների իրականացումը թողնել երկու թուրքերի իրավասությանը՝ մյուս կողմից: Սակայն Չերմանական հակաառաջարկը, վերջին հաշվով, ուղղված էր հայերի շահերի դեմ:

Սակայն դրա դիմաց Ռուսաստանին հաջողվեց Թուրքիային ստիպել 1914 թ. հունվարի 26-ին ստորագրել համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ:

Ռուս-թուրքական համաձայնագիրը վարչատարածքային հարցում, որը կենտրոնական հարցն էր, ընտրեց քվորումին նոր տարբերակ: Մերժվեց թե՛ Հայկական նահանգ կազմավորելու և թե՛ վեց վիլայաթների տարբերակը: Կողմերը համաձայնվեցին Արևմտյան Հայաստանը բաժանել երկու գոտու: Առաջին գոտու մեջ միավորվեցին էրզրումի, Ավասի և Տրապիզոնի վիլայաթները, որով Հայաստանը ելք էր ստանում դեպի ծով: Իսկ երկրորդ գոտու մեջ միավորվեցին Բիթլիսի, Վանի, Խարբեղոյի և Դիարբաքրի վիլայաթները: Առաջին գոտու կենտրոն էր դասնում էրզրումը, իսկ երկրորդ գոտու՝ Վանը: Յուրաքանչյուր գոտու ղեկավար էր նշանակվում Ընդհանուր տեսուչը, որը պետք է լիներ օտարերկրացի, այսինքն՝ ոչ թուրքահպատակ: Նրան նշանակում

225 Յուսուֆ Հասան Հաֆիզ, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 220: Ռաման աք-Ջուրք, էջեր հաշված պատմությունից, էջ 237:





արաբ հեղինակները առանձնացնում են, որպես նորություն, այն պարագան, որ Տրապիզոնի վիլայաթը նույնպես մտցվել էր այն վիլայաթների շարքը, որոնց վրա պետք է տարածվեին բարենորոգումները՝ Երանք որպես նորություն են նշում նաև եվրոպական երկու դիտորդների կամ տեսուչների նշանակումը<sup>227</sup>:

Երկու Ընդհանուր տեսուչներն էլ ժամանեցին Կոստանդնուպոլիս պատրաստ մեկնելու էրզրում և Վան՝ ձեռնամուխ լինելու իրենց ղեկավարին և պատասխանատու պարտականությունների կատարմանը: Սակայն դա հաջողվեց միայն Յոֆին, որը, իրոք, 1914 թ. հուլիսին ժամանեց իր մտտոցը՝ Վան<sup>228</sup>: Իսկ ինչ վերաբերում է Վեստենենկին, ապա նա մի փոքր հապաղեց և այդպես էլ չկարողացավ մեկնել էրզրում: Նա, ինչպես նաև Յոֆը, որը թեև հասել էր Վան, այդպես էլ չկարողացան անցնել իրենց պարտականությունների կատարմանը: 1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի ժամանակ Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան՝ մի կողմից, և Գերմանիան, Ավստրո-Յունգարիան ու Թուրքիան՝ մյուս կողմից, հայտնվեցին հակադիր ռազմաքաղաքական բլոկում և դարձան միմյանց դեմ պատերազմող կողմեր:

Ստեղծված այդ նոր ռազմաքաղաքական իրադրությունից փայլում կերպով օգտվեց Թուրքիան, որի թիկունքում կանգնած էին Գերմանիան ու Ավստրո-Յունգարիան, և չեղյալ հայտարարեց 1914 թ. հունվարյան ռուս-թուրքական պայմանագիրը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կիրառելու մասին: Ընդհանուր տեսուչներ Յոֆը և Վեստենենկը թուրքական իշխանությունների կողմից արտաքսվեցին Օսմանյան կայսրության տարածքներից:

Այս առեւտրյանը արաբ պատմաբաններից Ասադ Դադիդը արտահայտել է մի կարծիք, որը այլ կերպ, քան համարձակ, չի կարելի անվանել: «Հայկական հարցը, — գրում է նա, — դարձավ եվրոպական մեծ պատերազմի պատճառներից մեկը, որը հնարավորություն ստեղծեց լուծելու Արևելյան հարցն իր բոլոր ճյուղավորումներով՝ ռասիզմի հիմքի վրա»<sup>229</sup>: Եթե անգամ Ասադ Դադիդի այս տեսակետը ոճանց քվա վիճելի, միևնույն է, նրա մեջ կա ճշմարտության մեծ քաժին:

227 Դադիս ալ-Մասրիֆ, Կ. X, էջ 210: Յուսուֆ Գասան Գաֆիլը, Գալ ժողովրդի պատմությունը, էջ 221:

228 Նույն տեղում:

229 Ասադ Դադիդ, Արաբական ապստամբությունը, էջ 21:

Ահա այսպիսի վախճան ունեցավ լիբանանյան մոդելի ողիսակա-  
նը՝ կապված Հայկական հարցի լուծման հետ:

Արաբ պատմաբանները՝ Մուսա Պրեմնը, Ֆուադ Հասան Հաֆիզը,  
Մրվան ալ-Մուդավարը, Լաիմ ալ-Յաֆին, Ռաման աթ-Թուրքը և մյուս-  
ները, թեև որոշ վերապահումներով, սակայն ընդհանուր գծերով դրա-  
կան են գնահատում Հայկական հարցի լուծման լիբանանյան մոդելը և  
զուս-թուրքական 1914 թ. պայմանագիրը, դրա մեջ տեսնելով  
Հայկական հարցի լուծման խնդրում նոր մտեցումների դրսևորումներ,  
որը խարսխված էր ոչ թե բռնի թուրքացման, ծուլման կամ ֆիզիկական  
ռյնչացման սկզբունքների, այլ բարենորոգումների սկզբունքի վրա:  
Մյուս կողմից, այդ մոդելի կիրառման ծախսողունը, առիթ ծառայեց  
Նրանց համար կրկին անդրադասնալ եվրոպական պետությունների  
դիրքորոշմանը Հայկական հարցի լուծման նկատմամբ: Նրանք խստո-  
ղիջորոշմանը Հայկական հարցի լուծման նկատմամբ նրանց կեղ-  
ինն քննադատում են այդ պետություններին՝ մեղադրելով նրանց կեղ-  
ծավորության, նախ և առաջ իրենց սեփական քաղաքական, տնտեսա-  
կան և ստրատեգիական շահերը հետաանդելու մեջ, որի դիմաց շատ  
կան և ստրատեգիական շահերը հետաանդելու մեջ, որի դիմաց շատ  
թանկ վճարեց հայ ժողովուրդը: Սակայն այս դեպքում, արաբ պատմա-  
բաններն իրենց քննադատության կրակն ավելի շատ ուղղում են գեղ-  
մանի և Ավստրո-Հունգարիայի դեմ՝ գտնելով որ նրանք, որպես  
մանիայի և Ավստրո-Հունգարիայի դեմ՝ գտնելով որ նրանք, որպես  
Թուրքիայի դաշնակիցներ, ցանկության դեպքում հնարավորություն ու-  
նեին և կարող էին ստիպել օսմանյան կառավարողներին կատարել ի-  
րենց ստանձնած պարտավորությունները կամ աենվազն կանխել հե-  
տագա արյունոտ խրախճանքը: Բայց նրանք դա չարեցին, որի համար  
արաբ հեղինակները՝ Մրվան ալ-Մուդավարը, Մալիհ Չաիր ադ-Դինը,  
Սամիր Արբաշը, Ռաման աթ-Թուրքը, Ֆուադ Հասան Հաֆիզը և այլք,  
Սամիր Արբաշը, Ռաման աթ-Թուրքը, Ֆուադ Հասան Հաֆիզը և այլք,  
Գերմանիային մեղսակից են համարում լիբանանյան մոդելի տապալ-  
ման և հայերի ցեղասպանությունը չկանխելու մեջ:

Այսպիսով՝ արաբական պատմագիտությունը ձգտել է իր հարցը լուծել Օս-  
այն ճշմարտությունը, որ արևմտահայությունը ծղոնել է իր հարցը լուծել Օս-  
մանյան կայսրության շրջանակներում և երբեք չի դրել Օսմանյան կայսրու-  
թյունից անջատվելու հարց: Նրա համար ընդունելի են եղել և՛ բարենորո-  
գումների, և՛ ապակենտրոնացման, և՛ լիբանանյան տարբերակները:

Եվ բնավ էլ հայերի մեղքը չէ, որ այդ տարբերակներից ոչ մեկը  
չգործեց, որի հետևանքով արևմտահայությունը հայտնվեց ցեղասպա-  
նության նախաշեմին:

ԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՆ ԸՆԴ-  
ԴԵՍ ՀԱՅԵՐԻ «ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ» ԵՎ  
«ԱՊԱՏԱՍԲՈՒԹՅԱՆ» ԵՐԻՏԹՈՒՐՔԱ-  
ԿԱՆ ՎԱՐԿԱԾԻ

ԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻՆ  
ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵԴԱԴՐԵԼՈՒ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ  
ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԵՐԻ ՀԵՐՔՈՒՄԸ

Արձեւնոցիդի հիմնախնդիրներն ուսումնասիրելիս, արաբ հեղինակներն իրենց աշխատություններում բացառիկ տեղ են հատկացրել սկզբունքային նշանակություն ունեցող մի հարցի լուսարանությանը: Խոսքը երիտթուրքական ղեկավարության կողմից հայերին դավաճանության մեջ մեղադրելու մասին է, որը նրանք օգտագործում են իրենց ռժրագրությունն արդարացնելու համար:

Այդ առնչությամբ, նրանք նկարագրում են այն հեղծուցիչ քաղաքական մթնոլորտը, որն հաստատվել էր Օսմանյան կայսրությունում Աօաջին համաշխարհային պատերազմի սկզբներին: Կարծում ենք, որ այդ մթնոլորտը հարազատորեն է տվել Սալիհ Չաիր աղ-Դինը: «Այդ ժամանակ, — գրում է նա, — Օսմանյան կայսրությունում ուժեղանում էին ծայրահեղ պանթուրքական զգացմունքները: Պանթուրանիզմը դարձավ երիտթուրքերի պաշտոնական դոկտրինան: Ղեկավարվելով այդ դոկտրինայով՝ նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի արևելք, դեպի Կովկաս ու Միջին Ասիա: Թուրանական տեսարանները գտնում էին, որ Կովկասից Ռուսաստանին պետք է արտաքսել և այդ հողերը միացնել Թուրքիային, իսկ Սև ծովը պետք է դառնա Թուրքիայի ներքին ծո-



նավորապես ուսումնասիրած Մրվան ալ-Մուդավարը: Նա գրում է, որ երբ երիտթուրքերի ղեկավարությունն իմացավ դաշնակցություն կուսակցության համագումարի մասին, ապա նա որոշեց համագումար ուղարկել իր ներկայացուցիչներ Գաբիո Բեհադդինին և Նաջի բեյին՝ նրանց հանձնարարելով հանդես գալ համագումարում և հայերին երիտթուրքական կուսակցության անունից ներկայացնել իրենց պահանջները: Նրանք այդպես էլ վարվեցին և պահանջեցին, որ դաշնակցության կուսակցական համագումարը հայտարարի քոլոր հայերի՝ ինչպես քուրքահայերի, այնպես էլ ռուսահայերի, հավատարմությունը Թուրքիային՝ պատերազմի դեպքում, կազմակերպի հայ ֆիդայիների ջոկատներ ռուսների դեմ կռվելու համար և խոսվություն քարծրացնեն Կովկասում ռուսական բանակի շարքերում<sup>233</sup>: Հայերին գայթակղեցնելու համար, երիտթուրքերի ներկայացուցիչներն իրենց կուսակցության ղեկավարության անունից խոստանում են հայերին, որ «եթե նրանք նման դիրք գրավեն, ապա պատերազմի ավարտից հետո հայերին իրավունք կտրվի ստեղծելու իրենց անկախ պետությունը Թուրքիայի և Ռուսաստանի որոշ հայկական տարածքների վրա»<sup>234</sup>:

Մենք այս նույն առաջադրություններն ենք գտնում նաև արաբ մյուս հեղինակների, մասնավորապես Նաիմ ալ-Յաֆիի, Ֆուադ Հասան Հաֆիզի և այլոց աշխատություններում, որը խոսում է այն ժանր վիճակի մասին, որի մեջ հայտնվեցին հայերը Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին: Նաիմ ալ-Յաֆին գրում է, որ երիտթուրքերը «Դաշնակցության 8-րդ համագումարում առաջադրեցին հետևյալ պահանջները.

Հայ ֆիդայիներին կազմել զինված ջոկատներ ռուսների դեմ կռվելու համար:

Ռուսների դեմ խոսվություններ կազմակերպել Կովկասում՝ քորքրելու ապստամբության կրակը՝ ռուսական բանակը պատակտելու և կազմալուծելու համար:

Միավորել հայերի շարքերը արտասահմանում և համագործակցել քուրքերի հետ»<sup>235</sup>:

Նաիմ ալ-Յաֆիի աշխատության մեջ նշված երիտթուրքերի երրորդ պահանջը քացակայում է Մրվան ալ-Մուդավարի և արաբ մյուս

233 Մրվան ալ-Մուդավար, Հայերը պատմության շեքացում, էջ 407:

234 Նույն տեղում:

235 Նաիմ ալ-Յաֆի, Հայերի ջոկատաբանությունը և նրա նկատմամբ արաբական հասարակական կարծիքի դեբորտումը, էջ 41:



Դրա հետ միասին, համագումարն ընդունում է վերին աստիճանի կարևոր մի որոշում, որը, մեր կարծիքով, տվյալ պարագայում, առանցքային նշանակություն ուներ, և որի վրա հատուկ ուշադրություն է դարձված արաբական պատմագիտության մեջ: Այդ հատվածն անորոշությամբ մեջ է բերված Մրվան ալ-Մուդալարի աշխատության մեջ. «Բայց եթե, — ասված է որոշման մեջ, — թուրքական կառավարությունը որոշի պատերազմի մեջ մտնել, ապա Թուրքիայի հայերը կկատարեն այն բոլոր պարտականությունները, որոնք կդրվեն նրանց վրա որպես թուրքական հպատակներ՝ հայրենիքին բոլոր ասպարեզներում՝ և՛ քանակում, և՛ երկրի պաշտպանությանը, ծառայելու ուղիով, ինչպես կայսրության բոլոր քաղաքացիները»<sup>239</sup>:

Կրկնում ենք, սա շատ կարևոր որոշում էր, որտեղ հստակ ասված էր, որ հայերը օսմանյան կայսրության հպատակներ էին և որպես այդպիսիներ, նրանք պատրաստ էին կատարել իրենց բոլոր պարտականությունները, այդ թվում և ծառայել բանակում և երկիրը պաշտպանել: Դա ձևակերպված էր այնպես, որպեսզի այլ մեկնաբանությունների տեղիք չտրվեր թուրքական իշխանությունների կողմից:

Իսկ ինչ վերաբերում է երիտթուրքական դեկավարության սլահանգին, որ հայտարարվի նաև օուսահայերի հավատարմությունը Թուրքիային և Ռուսաստանի դեմ Կովկասում ապստամբություն քարծրացնելուն, ապա համագումարը մերժեց այդ սլահանգը: Այդ հարցի վերաբերյալ համագումարի ընդունած որոշման մեջ ասված էր, որ «Համագումարը չի կարող խոսել Ռուսաստանի հայերի անումից, որոնք հանդիսանում են մեկ այլ պետության հպատակները»<sup>240</sup>:

Այս հարցի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կան Լիբանանյան հանրագիտարանում: Մասնավորապես նշվում է, որ «Իթթիհադ վե Թերակկին», այսինքն՝ երիտթուրքական կուսակցությունը, իր ներկայացուցիչների՝ Շաքիր Քեհաեդյիմի և Նաջի քեյի հետ միասին, երգրում էր ուղարկել նաև Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին, որոնք առաջարկել են հայերին միանալ Վրաստանի և Ադրբեջանի քնակչությանը Ռուսաստանի դեմ ապստամբություն քարծրացնելու համար<sup>241</sup>: Սակայն հայերը մերժում են նաև Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին և վերահաստատում իրենց դիրքորոշումը՝ հայե-

239 Եսյն տեղում:

240 Եսյն տեղում:

241 Դախրա ալ-Մաարիֆ, 7. X, էջ 310:





միս պատերազմի մեջ մտնելու դեպքում, և զենքը ձեռքին պաշտպանել այդ երկիրը:

Երրորդ՝ հայերին դավաճանության մեջ երիտթուրքերը մեղադրանք են ներկայացրել ո՛չ պատերազմի ընթացքում և ո՛չ էլ պատերազմից հետո, այլ պատերազմից առաջ՝ 1914 թ. հուլիսին, երբ դեռ Առաջին աշխարհամարտը չէր սկսվել և Թուրքիան էլ պատերազմի մեջ չէր մտել: Այդ պայմաններում հայերին դավաճանության մեջ մեղադրելը պարզապես անտրամաբանական է և անհեթեթություն:

Երրորդ՝ արաբական պատմագիտության մեջ միանգամայն միշտ են լուսաբանված իրադարձությունները և տրված են միանգամայն համոզիչ ու արդարացի գնահատականներ՝ առ այն, որ հայերի կողմից ոչ մի դավաճանություն տեղի չի ունեցել:

Դա պետք է համարել արաբական պատմագիտության կարևոր ներդրումը Հայոց ճեղասպանության լուսաբանության քնազավառում. մանավանդ մի այնպիսի կնճռոտ և առանցքային նշանակություն ունեցող հարցում, ինչպիսին հայերի հավատարմության կամ պետական դավաճանության հարցն է:

Եզրակացությունը մեկն է՝ դավաճանություն տեղի չի ունեցել:

## **ԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱԴԱՇՏԴԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ «ԱԴՏԱՍՄՐՈՒԹՅԱՆ» ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԻ ՄԱՍԻՆ**

Արաբական պատմագիտության մեջ Վանի հայերի 1915 թ. ինքնապաշտպանության հարցը դարձել է հատուկ քննարկման առարկա: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ երտթուրքերը փորձել են այդ ինքնապաշտպանությունը ներկայացնել որպես ապստամբություն՝ ուղղված օսմանյան պետության դեմ և հայերին մեղադրել պետական դավաճանության մեջ: Այդ մեղադրանքը երիտթուրքական ղեկավարությունն առաջ է քաշել որպես պաշտոնական տեսակետ: Ըստ էության, դա նրանց երկրորդ փաստարկն է հայերի «դավաճանությունն» ապացուցելու համար: Առաջին փաստարկը, ինչպես արդեն նշել ենք, դա նրանց մեղադրանքն էր այն բանում, որ արևմտահայերը հրաժարվեցին ռուսահայերին ուղքի հանել Ռուսաստանի դեմ և քայքայիչ զործունեություն ծավալել Կովկասում՝ ռուսական բանակի թիկունքում ու շարքերում:



հավաքեց բոլոր հայերին, դուրս հանեց նրանց տներից և ճանապարհին բոլորին սպանեց»<sup>249</sup>:

Վանում տեղի ունեցած դեպքերի համար Ռաման արթուրքն անբողջ պատասխանատվությունը դնում է Վանի նահանգապետ, ռազմական մինիստր Էմվերի փեսա Ջնդեբի և թուրքերի վրա, որոնք ուզում էին գրավել հայկական բաղամասերը և տները: «1915 թ. ապրիլի 17-ին, — գրում է նա, — թուրքերը սկսեցին իրենց հարձակումը: Նրանք հրետակոծում էին հայկական քաղեղը հրետանուց, իսկ հայերը պաշտպանվում էին»<sup>250</sup>: Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամը նույնպես հաստատում է, որ Վանում իրադրությունը սրելու նախաձեռնությունը եկել է թուրքական կողմից և հետագա դեպքերի համար պատասխանատու կողմը նա է, առանձնացնելով նահանգապետ Ջնդեբի սադրիչ քայլերը<sup>251</sup>: Այս հարցի վերաբերյալ նա եզրակացնում է, որ «անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունեցել Վանում, դա ապստամբություն չէր, այլ ոչ զինված պաշտպանական գործողություն՝ դիմակայելու թուրքական պաշարմանը»<sup>252</sup>:

Մուսա Պրեմսը նույնպես անհիմն է համարում հայերի «ապստամբություն» վերաբերյալ թուրքական, ինչպես ինքն է նշում, թեզը<sup>253</sup>, գտնելով, որ ոչ մի հայկական ապստամբություն տեղի չի ունեցել: Նա ուղղակի նշում է, որ Վասպուրականում բաղեղը սկսեց Ջնդեբ փաշան, որը ռմբակոծում էր Վանի հայկական քաղեղը Կովկասյան ռազմաճակատից Վան տեղափոխված մի քանակի կողմից՝ համալրված էրզրումից Վան տեղափոխված ռազմական ուժերով: Իսկ հայերը դիմադրում էին, որը Մուսա Պրեմսն անվանում է հերոսական<sup>254</sup>: Մուսա Պրեմս, ինչպես ինքն է նշում, իր տեղեկությունները քաղել է Վանում աշխատող և դեպքերին ականատես ամերիկյան և գերմանական միսիոներների գրավոր հաղորդագրություններից, որոնք մանրամասն նկարագրել են Վանում ծավալված դեպքերը: «Նրանց գրածից հետևող եզրակացությունն այն է, որ Վանի հայերն իրականացնում էին **ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** (ընդգծումն Մուսա Պրեմսինն է — Ն. Յ.)»<sup>255</sup>:

249 Նույն տեղում:

250 Ռաման արթուրք, Էջեր հայ ազգի պատմությունից, էջ 241:

251 Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամ, Կալանթան հարցը՝ օսմանյան պատմություն, 1878-1903, էջ 61:

252 Նույն տեղում, էջ 62:

253 Moussa Prince, L'Amerocide, p. 34.

254 Նույն տեղում:

255 Նույն տեղում:

Այս հարցը բավականին հանգամանորեն է լուսաբանել նաև Ֆուադ Չասան Չաֆիզը: Վանի ապստամբությունը նա համարում է երիտթուրքերի հորինածը: «Չայերը.— գրում է նա,— 1915 թ. ապրիլին չեն ապստամբվել Վանում, այլ պաշտպանել են իրենց սեփական կյանքը օսմանյան հարձակումներից, և նրանք պաշտպանվել են, մինչև որ մոտեցել են ռուսական զորքերը, որոնք Վան են մտել 1915 թ. ապրիլի 19—ին»<sup>256</sup>:

Ինչպես տեսնում ենք, բոլոր նշված արար հեղինակները, ինչպես նաև նրանք, ում անունները չիիշատակեցինք, միակարծիք են այն հարցում, որ հայերը՝ որպես օսմանյան պետության հպատակներ, չեն ապստամբել նրա դեմ, հետևաբար ոչ մի խոսք չի կարող լինել օսմանյան պետությանը նրանց դավաճանելու մասին: Նրանք միակարծիք են նաև այն հարցում, որ հարձակվող կողմը եղել են թուրքերը, իսկ հայերը պաշտպանվել են:

Արար բոլոր պատմաբանները, որոնք անդրադարձել են Վանի իրադարձություններին, հայերի ինքնապաշտպանությունը համարում են միանգամայն բնական երևույթ, յուրաքանչյուր ժողովրդի, այդ բվում և հայ ժողովրդի օրինական իրավունքը: Սուսա Պրենսն իր ֆրանսերեն հայ ժողովրդի օրինական իրավունքը: Սուսա Պրենսն իր ֆրանսերեն հրատարակված գրքում Վանի պաշտպանությունը հենց այդպես էլ կոչում է՝ «legitime defense»՝ «օրինական պաշտպանություն»<sup>257</sup>:

Այդ առնչությամբ արար որոշ պատմաբաններ անդրադարձել են ևս մի հարցի, որը համեմատաբար քիչ է լուսաբանված պատմագիտության մեջ ընդհանրապես, և որը հայտնի չէ ընթերցող լայն հասարակությանը, որը սակայն գալիս է հերքելու հայերին հասցեագրված երիտթուրքերի մտացածին մեղադրանքները ապստամբության և դավաճանության վերաբերյալ: Խոսքը հետևյալի մասին է:

Արար որոշ պատմաբաններ, առաջին հերթին Սամիլ Արաշը և Ֆուադ Չասան Չաֆիզը, չմխտելով, որ 1915 թ. ապրիլի 24—6 է հայոց Մեծ եղեռնի պաշտոնական տարեթիվը, ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ հայկական կոտորածները, այդուհանդերձ, սկսվել են ավելի վաղ, քան Վանի իրադարձությունները: Ֆուադ Չասան Չաֆիզը գտնում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի առաջին քարոզերը տեղի են ունեցել իրանական Ռերմիա քաղաքում, թուրքական զորքերի կողմից քաղաքի առաջին օկուպացիայի ժամանակ: Օսմանյան բանակն այն գրավել էր դեռևս 1915 թ.

256 Ֆուադ Չասան Չաֆիզ, Չայ ժողովրդի պատմությունը, էջ 302:  
257 Moussa Prince, L'Arménie, p. 34.

հունվարի 2-ին և իր ձեռքում պահել մինչև նույն բվականի մայիսի 24-ը: Եվ այդ կոտորածների կազմակերպիչը դարձյալ եղել է Վանի նահանգապետ նույն այդ Ձևղեթ քեյը<sup>258</sup>: Արաք պատմաբանը գրում է. «Ջարդերը կազմակերպել և իրականացրել է Ձևղեթ քեյը՝ հայկական Վան վիլայաթի գլխավոր նահանգապետը, որը մասնակցել էր օսմանյան ռազմական արշավանքին Իրանի հյուսիս-արևմուտքում, որը և հանգեցրեց այդ օկուպացիային»<sup>259</sup>: Այս առթիվ անգամ թուրքերի մոտ չկա ոչ մի ակնարկ Ուրմիայի հայերի ապստամբության մասին: Նրանք ջարդել են հայերին, որովհետև նրանք հայեր էին:

Այդ փաստը ամբողջապես հեռրում է Թալեաթի և երիտթուրքական մյուս ղեկավարների «տեսակետը», որով նրանք փորձում են արդարացնել իրենց զազանային գործողությունները որպես «անհրաժեշտ» քայլ՝ ի պատասխան հայերի «ապստամբության»: Հայերի կոտորածները օսմանցիների կողմից Հյուսիսարևմտյան Իրանում տեղի էր ունեցել Վանում հայերի կարծեցյալ ապստամբությունից շատ ավելի վաղ, երբ անգամ իրենք՝ երիտթուրքերը, ոչ մի խոսք չէին ասում հայերի ապստամբության մասին, լինի դա Վանում թե մեկ այլ տեղ: Ուրեմն «ապստամբություն» այստեղ ոչ մի գործ չունի: Կոտորածները 1915 թ. փետրվարին Ուրմիայում և օսմանյան զինված ուժերի հարձակումը Վանի հայկական քաղերի վրա 1915 թ. ապրիլին, ոչ մի կապ չունի հայերի ապստամբության հետ, քանի որ նման ապստամբություն տեղի չի ունեցել: Ուրեմն խոսք չի կարող լինել նաև հայերի դավաճանության մասին, որը երիտթուրքերը հրապարակ էին նետել իրենց ոճրագործությունն արդարացնելու համար:

Ուրմիայի դեպքերի մասին տեղեկություններ է պարունակում, ինչպես նշեցինք, նաև Սամիր Արթաշի աշխատությունը, որն իր րովանդակությամբ լրիվ համընկնում է Ֆուադ Հասան Հաֆիզի քերված տեղեկություններին, որը վկայում է այն մասին, որ նրանք ձեռքի տակ եղել են նույն աղբյուրները: «Իրանի հյուսիսարևմտյան շրջանի օկուպացման (թուրքական — Ն. Գ.) ժամանակ,— գրում է նա,— 1915 թ. փետրվարին Ուրմիա քնակավայրում ոչնչացվեցին հազարավոր հայեր՝ կանայք, երեխաներ և տղամարդիկ»<sup>260</sup>:

258 Ֆուադ Հասան Հաֆիզ, Տալ ժողովրդի պատմությունը, էջ 301:

259 Նույն տեղում:

260 Սամիր Արթաշ, Պայտառան, Գոլ և ժողովուրդ, էջ 167:



դիրը: Արաք պատմագիտությունն ընդհանուր առմամբ ճիշտ դիրքերից է լուսաբանում այդ խնդիրը՝ հատկապես նշելով Ռուսաստանի դրական դերակատարումը հայկական մարզերում քարեմորդությունների կիրառելու, Սան Ստեֆանոյի 1878 թ. պայմանագրի կնքման, 1912-1914 թթ. ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում և այլն: Հայկական հարցում ռուսական դերի դրական գնահատումը, կարելի է ասել, տիրապետող տեսակետ է արաքական պատմագիտության մեջ:

Սակայն այդ ընդհանուր ֆոնի վրա որպես դիտման և հնչում լինա՞նք անյան մի հեղինակի՝ Ֆուադ Մայրամիի մոտեցումը և նրա տված գնահատականները, որոնք տեղ են գտել նրա «Հայկական ապստամբությունը օսմանական սուլթանության դեմ և դրա պատճառները» հոդվածում: Ընդձեռնով, որ «հայ-թուրքական քարեմորդությունը շատ հին է նդել», նա այնուհետև ավելացնում է. «Ռուսական քարոզչությունը փչացրեց այդ քարեկամությունը և այն վերածեց կատաղի թշնամության»<sup>263</sup>: Եարունակելով հարցի քննարկումը՝ Ֆուադ Մայրամի, կտրվելով իրական հողից, հասնում է այնտեղ, որ ժխտում է սուլթանական իշխանությունների կողմից հայերի ճնշումը նույնիսկ ազգային հարցում՝ նշելով, որ ազգային հարցի քննարկում հայերի հետ ոչինչ չի պատահել, միայն քրդական Ֆեռդյալական առաջնորդների կողմից է բռնություններ կիրառվել նրանց նկատմամբ: Եվ կրկին վերադառնալով ռուսական թեմային՝ Ֆուադ Մայրամի գրում է, որ Ռուսաստանը հայերին ապստամբության կոչ է արել և «Ռուսաստանի այդ կոչը հաջողություն ունեցավ, և արևելյան տարրեր վիլայաքներում կազմակերպվեցին հեղափոխական միություններ»<sup>264</sup>: Ի հաստատումն այդ տեսակետի, հեղինակը ոչ մի փաստարկ չի բերում, նախապատվությունը տալով դեկլարատիվ հայտարարություններին: Փաստորեն նա տուրք է տալիս թուրքական պատմագիտության մեջ մեծ տարածում գտած թուրքական պատմաբանների և քաղաքագետների տեսակետներին, որոնք փորձում են պատասխանատվությունը վերցնել օսմանյան պետության վրայից և ամեն ինչ քարոզել ցարական Ռուսաստանի վրա: Հեղինակը, նրևի զգալով, որ փայտը շատ է մի կողմի վրա ծռել, վերցում, այդուհանդերձ, հարկադրված է ընդունել, որ հայ առաջնորդների ոչն-

263 Ֆուադ Մայրամի, Ար-Աստրախ ալ-Արմանիյա դիլ ալ-տուրանա ալ-սաննիյա մաա բալաա ալ-տարաբախ-Հայկական ապստամբությունը օսմանյան սուլթանության դեմ և նրա պատճառները, «Ալ-Աստրա», միջուր, 1936, № 35, էջ 1.

264 Նույն տեղում, էջ 2-3:



չացումը կատարվել է թուրքերի ձեռքով, այն իրականացրել են օսմանյան կառավարությունը, և որ էնվերը, Թալեաթը, Ջեմալը ու «Իքթիհադ ֆե Թերակկի» կուսակցության գծով նրանց գործընկերներն են հանդիպեցնում նրանց սպանության գլխավոր կազմակերպիչներն ու պատասխանատուները<sup>265</sup>:

Ֆուադ Մայդանիի տեսակետը Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականության վերաբերյալ լուրջ քննադատություն է, որը հակառակության մեջ է գտնվում արաբ պատմաբանների քաջարժակ մեծամասնության կարծիքի հետ:

Ամփոփելով հայերի ապստամբությանը վերաբերող հատվածը՝ կարող ենք ասել՝ արաբական պատմագիտությունն իր արժանի լուծանք է ներդրել թուրքական այդ հորինվածքը հերքելու գործում:

## ԱՐՄԵՆՈՑԻԴ - ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ա**րարական պատմագիտության մեջ, ինչպես ջանացինք ցույց տալ, բավականին հանգամանորեն են լուսարանված Հայոց ցեղասպանության նախադրյալները, դրդապատճառները, քաղաքական և էթնիկական ազդակների նշանակությունը, ցեղասպանության իրագործման համար Օսմանյան կայսրությունում տիրող նպաստավոր մտայնությունը և հոգեբանությունը, բուրբացման և պանթուրքիզմի հիմնադրույթներն ու նպատակները, ժատայականությանը օսմանյան ղեկավարության ապավինելը և հարակից այլ հարցեր: Նշված հարցերը արար հեղինակները ուսումնասիրել են ժամանակի միջազգային հարաբերությունների և Հայկական հարցում եվրոպական մեծ տերությունների դիրքորոշման հենքի վրա:

Այդ քոլորը կազմում է հարցերի մի խումբ, առանց որի ուսումնասիրության անհնար է Հայոց ցեղասպանության գիտական բացատրությունը: Եվ ի պատիվ արարական պատմագիտության՝ նա, մեր կարծիքով, հիմնականում տվել է վերոնշյալ հարցերի գիտական, հավաստի և համոզիչ պատասխանները:

Հարցերի մեկ այլ խումբ է կազմում հայոց քուն ցեղասպանության, նրա կիրառման և գործընթացների ուսումնասիրությունը, նրա գլխավոր քաղադրատարրերի առանձնացումն ու վերլուծությունը, բնույթի բացահայտումը և դրանց հետևանքների լուսարանությունը՝ ինչպես հայերի պատմական ճակատագրի, այնպես էլ համաշխարհային զարգացումների՝ Հայոց ցեղասպանությունը որպես ցեղասպանության նախադեպ և մոդել ժառայելու տեսանկյունից:

Արարական պատմագիտությունն այստեղ նույնպես ասել է իր ուրույն խոսքը՝ հիմնավորված, վաստարկված, համոզիչ, արտասայտել



դասականության ծրագրված լինելու հարցը: Դա արմենոցիդի հիմնախնդրի անկյունաքարերից մեկն է, թերևս ամենակարևորը: Իրենց ուսումնասիրությունը հենց այդ ուղիով էլ տարել են արաբական հետազոտողները:

Արաբական գիտնական—պատմաբանները, իրենց աշխատություններում հենվելով տարաբնույթ սկզբնաղբյուրների վրա, ցույց են տալիս և ապացուցում, որ հայերի 1915 թ. ցեղասպանությունն իրականացվել է երիտթուրքական ղեկավարության կողմից նախապես մշակված ու հաստատված ծրագրի համաձայն: Նրանց համար նման պլանի առկայությունը օսմանյան ղեկավարության մոտ, և ըստ նրա գործելը, ոչ մի կասկած չի հարուցում:

Այդ հրեշավոր ծրագրի համար նլակետային էր հանդիսանում Օսմանյան կայսրությունը բռնի բուրջացման ուղիով մաքուր բուրբական պետության վերածելու և պանթուրքիզմի հաղթանակի համար ճանապարհի հարթելու երիտթուրքական ոսնայական գաղափարը:

Հայերի տոտալ ոչնչացման, այսինքն՝ ցեղասպանության ծրագրի գոյության հանգամանքն իրենց աշխատություններում նշում են քոլոՆ նրանք, ովքեր զբաղվել են այդ հարցի ուսումնասիրությամբ՝ Մուսա Պրենսը, Մովան ալ—Մուդավաթը, Մամիր Արբաշը, Իյաս Չանանիրին, Ֆուադ Հասան Հաֆիզը, Մուհամմադ Բիֆաթ ալ—Իմամը, Լահիմ ալ—Յաֆին, Սալիհ Ջահր ադ—Դինը, Սալիհ Ջիհադը, Էմիլ Թուման, Ամին Սալոդ և արաբական շատ ու շատ այլ հեղինակներ:

Համարձակորեն կարելի պնդել, որ այդ տեսակետը տիրապետող է արաբական պատմագիտության մեջ:

Արաբական ուսումնասիրողների աշխատություններում բերվում են երիտթուրքական «Իթթիհադ վե Թեռակկի» կուսակցության որոշումները հայերին ոչնչացնելու վերաբերյալ, Թալեաթի և երիտթուրքական մյուս ղեկավարների հրահանգները և հեռագրերը վիլայաթների վալիներին այդ որոշումները տեղերում խստորեն կատարելու մասին և այլն: Ֆուադ Հասան Հաֆիզն իր աշխատության մեջ բերել է երիտթուրքերի լիդերների 1915 թ. փետրվարի սկզբներին գումարված գաղտնի ժողովի որոշումները: Այդ գաղտնի ժողովում, որին մասնակցել են Թալեաթը, Էմվերը, Շաքիր Բեհաեդդինը, Սիմեդ Աղասը և այլն, միաձայն ընդունվել է որոշում՝ «ոչնչացնել հայերին օսմանյան պետության մեջ»<sup>288</sup>:

288 Ֆուադ Հասան Հաֆիզ, Դալ ժոլդերի պատմությունը, էջ 237:



Նելի մասը: Այդ տեսակետը, քաջի Մրվան ալ—Մուղալարից և այլ արաբ հեղինակներից, շատ որոշակի է շեշտված Սալիի Ձիր աղ—Դիմի մոտ: Եւ գրում է, որ իբրև հայկականների, այսինքն՝ երիտթուրքերի մոտ մտավորվեց «հայերին իրենց հարազատ վայրերից տեղահանելու և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում նրանց ոչնչացնելու **ծրագիրը**»<sup>274</sup>: Եվ Սալիի Ձահր աղ—Դիմը միայնակ չէ իր այս տեսակետի մեջ:

Կարելի է շարունակել արաբական պատմաբանների կարծիքների մեջբերումը, սակայն գտնում ենք, որ այսքանն էլ բավական է՝ հաստատելու, որ Չայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական պատմագիտության մեջ անբաժանելիորեն գերիշխում է այն տեսակետը, որ դա երիտթուրքերի կողմից **խնամքով ծրագրված** քաղաքականություն է:

Արաբ հեղինակները Չայոց ցեղասպանության ծրագրված լինելու, այսինքն՝ որպես պետական քաղաքականություն դարձնելու համգամանքը պարզաբանում են ոչ միայն քուն Չայոց ցեղասպանության հիմնախնդիրները քննարկելիս, այլև XX դարում քուն արաբական հիմնախնդիրները քննարկելիս:

Արաբական պատմագիտության մեջ անտարկելի է համարվում այն տեսակետը, որ երիտթուրքերի ղեկավարության մոտ զոյություն է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նաև արաբների ֆիզիկական ոչնչացման ծրագիր: «Չայերը և արաբները,— գրում է Սալիի Ձահր աղ—Դիմը,— այն երկու ժողովուրդներն էին, որոնք ամենից շատ էին ենթակա ոչնչացման ռասիստական քաղաքականությանը»<sup>275</sup>:

Քանի դեռ զոյություն ունեին հայերը և արաբները, խոսք չէր կարող լինել մի կողմից՝ էթնիկապես մաքուր թուրքական պետություն ստեղծելու, իսկ մյուս կողմից՝ թրքախոս բոլոր ժողովուրդներին միավորելու ու «Մեծ Թուրան» պետություն հիմնելու երիտթուրքական ցեղամիտ երազանքների իրագործման մասին: Այս հայեցակարգը շատ հստակ է մնակերպված արաբական պատմագիտության մեջ: Դրա հաստատումն են հանդիսանում Ձեյն Ձեյնի, Սասուդ Դաիիրի, Ֆուադ Չասան Չաֆիզի, Մրվան ալ—Մուղալարի և արաբ այլ հեղինակների աշխատությունները, որոնցում կարծիր քելի նման անցնում է այն միտքը, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերն ամենակատանգալորը համարում էին արաբներին և հայերին՝ նկատի ունենալով

274 Սալիի Ձահր—աղ Դիմ, Չայեր, ժողովուրդ և հիմնախնդիր, էջ 95:

275 Երկն տեղում, էջ 67:

նրանց ծգտումը և վճռականությունն անպայման պահպանել իրենց ազգային գոյությունը և ինքնությունը:

Սակայն այդ խնդրին առավել հանգամանորեն անդրադարձել է մի այնպիսի արար հեղինակավոր պատմաբան, ինչպիսին Ամին Սաիդն է: Ընդ որում, նա հայերի և արաբների ոչնչացման ծրագրային հարցը դի-  
մելով ասում է երիտթուրքական ընդհանուր ազգային քաղաքականության  
համատեքստում: Իր «Արաբների ապստամբությունները XX դարում»  
աշխատության մեջ նշելով, որ հայերի ցեղասպանությունն իրագործվեց  
նախապես կազմված ծրագրի համաձայն՝ նա գրում է. «Թուրքիայի ներ-  
քաղաքացիական պատերազմի ժամանակ հայերի ոչնչացման  
քիմ գործերի նախարար Թալեթ-բեյը գլխավորեց հայերի ոչնչացման  
արշավը: Այդ արշավի կազմակերպչի ծրագիրը կայանում էր նրանում,  
որ վեհոցն հայերին Արևելյան Անատոլիայից և հետիոտն քշեն նրանց  
որ վեհոցն հայերին Արևելյան Անատոլիայից և հետիոտն քշեն նրանց  
գլխավորների հսկողությամբ Արաբական անապատ, որտեղ նրանց սպա-  
նախաճարի անվտանգությունն ապահովելու համար հայերի ոչնչացման  
ընդհանուր ծրագրի համաձայն շարժումներին՝ արաբ ազգայնականների  
ուսուլու երկու ուժեղ ազգային շարժումներին՝ արաբ ազգայնականների  
շարժմանը Միրիայում, Իրաքում և Գիլգամում, և հայկական շարժմանը  
Արևելյան Անատոլիայում: Բանն այն է, որ Թուրքիայի ներքին շրջան-  
ներում ապրում էին մեծ թվով հայեր»<sup>277</sup>: Եվ եթե հայերի ոչնչացումը ղեկա-  
վարում էր Թալեթը, ապա արաբների ոչնչացման արշավն իր վրա  
վերցրեց երիտթուրքական եռապետության մյուս անդամը՝ ծովային նա-  
խարար Ահմադ Չեմալը: «Միրիայում, — գրում է Ամին Սաիդը, — այդ  
խնդրի (արաբների ոչնչացման — Ն. Ջ.) իրագործումն իր ձեռքը վեր-  
ցրեց ռազմածովային նախարար և Թալեթ-բեյի գործընկեր Ահմադ Չե-  
մալ-փաշան, որին Միրիայում կոչեցին «արյունարբու»: Բեյրութում, Դա-  
մասկոսում և Դազայում կախադաններ կանգնեցվեցին: Ահմադ Չե-  
մալ-փաշան կախում էր, արսողում և բանտ նստեցնում»<sup>278</sup>: Անդրադառ-  
նալով այդ հարցին՝ Չեյն Չեյնը նշում է, որ Ահմադ Չեմալը «արաբական  
շատ առաջնորդների դատապարտեց մահվան՝ որպես «դավաճաններ»

276. Амин Саид, Восстание арабов в XX в., с. 74.

277. Լեյն Ինթոն:

278. Լեյն Ինթոն, էջ 80:

Նրանց դեմ մեղադրանք ներկայացնելով, որ նրանք ուզում էին ապակենտրոնացման միջոցով մասնատել Օսմանյան կայսրությունը և իրենց երկիրը ծախել օտարերկրացիներին»<sup>279</sup>:

Արաբների դեմ Ջեմալի և Նրա շրջապատի կատարած հանցագործությունների վրա ուշադրություն է դարձրել լիբանանյան պատմաբան Մասուդ Դահիրը: Եւ, մասնավորապես, ընդգծում է «արաբական ազգային գործիչների զանգվածային սպանող, որն իրականացվել է անձամբ Ջեմալի կողմից»<sup>280</sup>:

Քննարկվող հարցի տեսակետից, նշանակալի արժեք է ներկայացնում նաև Ասադ Դադիրի «Արաբների ապստամբությունը» աշխատությունը: Գեղինակը նույն կարծիքին է, ինչ որ մյուս արաբ հեղինակները՝ արաբներին ունչացնելու վերաբերյալ նրիտությունների մոտ որոշակի ծրագրի գոյության հարցում: Եւ իր աշխատության մեջ նշում է արաբական ազգային-քաղաքական առաջնորդների և ակամավոր քոլոր գործիչների անունները, որոնք կախաղան բարձրացվեցին նրիտություն քական ղեկավարության հրամանով Քեյրուսի Բուրջ Չամուդ հրապարակում, Ալեյում, Դամասկոսում, Երուսաղեմում և այլուր՝ զետեղելով նրանց մի մասի լուսանկարները<sup>281</sup>: Մահվան դատապարտվածների և կախաղան հանվածների ամբողջական ցուցակը տալիս է նաև Ամին Մաիդը՝ վկայակոչելով Ջեմալ փաշայի պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ նրանք քոլորը մեղադրվում էին դավաճանության մեջ և նպատակ ունեին «Միդիան, Պաղեստինը և Իրաքը անջատել Օսմանյան կայսրությունից և հաստատել անկախ պետություն»<sup>282</sup>:

Ամին Մաիդն ուշադրություն է դարձրել մի յուրահատուկ հանգամանքի վրա:

Եւ նշում է, որ նրիտությունների ծրագրերի շրջանակներում հայերի և արաբների դեմ կիրառված ոճիրն իրականացվել է մի այնպիսի ժամանակ, երբ օսմանյան կառավարության վարչապետն էր Մաիդ Չալիմ փաշան՝ Մուհամմադ Ալիի բոռը, այն Մուհամմադ Ալիի, որն իր ամբողջ կյանքը նվիրեց օսմանյան տիրապետությունը տապալելու և Եգիպտոսի անկախությունը նվաճելու վեհ խնդրին: Սակայն նրա անարժան

279 Zeine N. Zeine, *The Emergence of Arab Nationalism*, p. 110.

280 Մասուդ Դահիր, *Քարին ալ-Լուճնաթի ալ-Իթթիհաթ* — Լիբանոնի տղիալեսան պատմությունը, Քեյրոս, 1974, էջ 25-26:

281 Ասադ Դահիր, *Արաբյան ապստամբությունը*, էջ IV-XE.

282 Ամին Մաիդ, *Սո-սաուրա ալ-արաբիա ալ-բուրա* — Արաբյան մեծ ապստամբությունը, Գ. Յ. Կախիթ, 1934, էջ 60.



թուն այլ ուղիով գնաց: «Ուշադրություն է գրավում այն փաստը,— գրում է Ամին Սաիդը,— որ թուրքական կառավարությունը, որը կատարեց այդ բոլոր ոճրագործությունները և որը փորձում էր ուշնչացնել երկու՝ հայկական և արաբական ազգություններին, գլխավորում էր եմիր Սաիդ Չալիմը, Մուհամմադ Ալիի թոռը»<sup>263</sup>:

Փաստերը, այդ թվում և թուրքական, հաստատում են, որ հայերին և արաբներին ուշնչացնելը, ցեղասպանության ծրագիրն իրականացնելը միայն երիտթուրքական ղեկավարության մենաշնորհը չէր: Այդ ծրագրի կատարմամբ և գաղափարով տողորված էր օսմանյան ամբողջ պաշտոնեությունը՝ վերևից մինչև ներքև: Եվ սխալ կլիներ դա դիտել որպես ենթակայության, օսմանյան կառավարման համակարգի ուղղամիջոցայան սկզբունքի արտահայտություն: Միջին և ստորին օղակների պաշտոնյաները մեծ ջանք էին գործադրում Ստամբուլից եկած հրամանների կատարման ուղղությամբ: Նրանց այդ մտայնությամբ և հոգեմանությանմբ են մասամբ բացատրվում ցեղասպանության ծրագրի իրականությանմբ հաջողությունները: Բերենք մի օրնակ, որը շատ ընդորոշ էր Թալաթի դարաշրջանում թուրքական պաշտոնյաների մտածելակերպի ու արարքագծի համար, որը վերցված է Աքսորի հարցերով Չալեթի գլխավոր կոմիտեի գլխավոր քարտուղար Նախմուրադ Բեյի հուշերից: Դա մի գրույցի գրառում է, որը տեղի է ունեցել նրա և այդ կոմիտեի նախագահ Աքսորի հետևող Նուրի-բեյի միջև, երբ Չալեթը ցեղասպանությունը հասել էր իր բարձրակետին, իսկ արաբական ազգային-քաղաքական շատ ղեկավարների դիակները ծոճվում էին կախաղանների վրա:

«Մի անգամ,— գրում է Նախմուրադը,— ես ասացի Աքսորի հետևող Նուրի-բեյին. «Բեյ էֆենդի, ե՛լ հայերի արստըրն անենք նվազ խիստ, այլ պետք է մահը կսպառենք ամբողջ Միջագետքին: Այդ ընդարձակ տարածքներում ոչ ոք, բացի սատանաներից, չի մնա: Ուստ ուլ—Այնի կայմակամը ներում ոչ ոք, բացի սատանաներից, չի մնա: Ուստ ուլ—Այնի կայմակամը տազանապալի լուրեր է հաղորդում»: Նուրի-բեյը ծիծաղեց: «Ջավակա,— տազանապալի,— այդ կերպ մենք միանգամից կազատվենք երկու վտանգալի վոր տարրերից: Հայերի հետ միասին, ախր, մեռնում են արաբները: Մի՞թե դա վատ է: Դրանով ճանապարհ է մաքրվում թուրքիզմի համար»<sup>264</sup>:

Նախքան այս հարցի լուսարանությունն ավարտելը, նշենք, որ երիտթուրքերը զարմանալի նմանությամբ, նույն մոդելով են ղեկավար

263 Амин Саид, Восстание арабов в XX в., с. 83.

264 Усубердинов Гусейн Гекзарат арман в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Г. Меркисова, Ереван, 1982, с. 473.

վել արաբների ցեղասպանության իրենց փորձերը կիրառելիս: Բացի ջարդերից և արաբական ազգային-քաղաքական ղեկավարությունը գլխատելուց, նրանց կիրառել են նաև արաբներին, այդ թվում և հայտնի գրողիչների ու անձանց ընտանիքներն իրենց բնակավայրերից բռնի տեղահանելու քաղաքականությունը, ինչպես Չայոց ցեղասպանության ժամանակ: Միայն թե մի տարբերությամբ: Եթե հայերին տեղահան էին անում կամ բռնագաղթեցնում Արևմտյան Չայաստանից և Օսմանյան կայսրության ներքին շրջաններից դեպի արաբական երկրներ, ապա արաբներին տեղահան էին անում հակառակ ուղղությամբ՝ արաբական երկրներից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, Չորդանանից և Իրաքից դեպի Անատոլիայի խորքերը: Արաբական ընտանիքների տեղահանման խնդրին հատուկ ուշադրություն է դարձված Ամին Սաիդի «Արաբական մեծ ապստամբությունը» գրքում<sup>285</sup>: Այդ մասին վկայում են նաև արաբ մյուս հեղինակները: Իսկ ահա թե ինչ է գրում Ջեյն Ջեյնն այդ կապակցությամբ. «Շատ ընտանիքներ ացտրվեցին Անատոլիայի ներքին շրջանները և մեծ քանակի գույք բռնագրավվեց»<sup>286</sup>: Ինչպիսի ծանոթ ձեռագիր:

Արաբական պատմագիտության մեջ իր արտագոյումն է գտել նաև ասորիների ցեղասպանության հարցը՝ որպես երիտթուրքերի ազգային ռասիստական քաղաքականության քաղկացուցիչ մաս: Արաբ հեղինակները գտնում են, որ հայերի և արաբների հետ միասին ոչնչացման ենթակա ժողովուրդների ցուցակի մեջ էին մտցված նաև ասորիները: Երիտթուրքերը, ինչպես նշվում է արաբ պատմաբանների աշխատություններում, «բարեխղճորեն» սպանում էին նաև ասորիներին: «Դիարբաքրի վիլայաթում, — գրում է Ֆուադ Չասսան Չաֆիզը, — ջարդերը տարածվեցին նաև ասորիների և քաղկեդոնական քրիստոնյաների վրա: Չազար հազարավոր ասորիներ և կաթոլիկներ սպանվեցին ոչ միայն Դիարբաքրում, այլև Մերդինում ու Ուրֆայում»<sup>287</sup>: Ասորիների ազգային մեծ ողբերգությանն անդրադարձել են նաև իրաքցի պատմաբաններ Շաքիր Խասրակը, Մուհամմադ Ահմադ ալ-Մաանան և Ֆեյսալ Կաջիմ աղ-Դին ալ-Աբրաքիմ<sup>288</sup>:

285 Ամին Սաիդ, Արաբական մեծ ապստամբությունը, Գ, 91, էջ 83:

286 Zeina N. Zeina. The Emergence of Arab Nationalism, p. 110.

287 Ֆուադ Չասսան Չաֆիզ, Կալ ժողովրդի պատմությունը, էջ 313:

288 Շաքիր Խասրակ, Մուհամմադ Ահմադ ալ-Մաանա, Ֆեյսալ Կաջիմ աղ-Դին ալ-Աբրաքի, Իրաքի աշխարհագրություն, էջ 221:



Որանց սրբազան պարտքը համարելով միանալ և պայքարի դուրս գալ իսլամի երեք գլխավոր բջնամիների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեմ: Դրան հաջորդեց Օսմանյան կայսրության սուլթան Մեհմեդ V-ի հրովարտակը, որտեղ կոչ էր արվում պայքարել «ստրկացված իսլամի ազատագրման համար և պաշտպանել վտանգի ենթարկված Օսմանյան կայսրությունը»<sup>289</sup>: Նույն տարվա նոյեմբերի 23-ին հաջորդեց մի նոր մանիֆեստ, որը պահանջում էր աշխարհի մուսուլմաններից ենթարկվել Սուլթ Գրքի՝ Կորանի պահանջներին և պաշտպանել իսլամն ու նրա սրբավայրերը<sup>290</sup>:

Այդ երեք հրովարտակներով պաշտոնապես հիմք դրվեց զիհադի՝ սրբազան պատերազմին, և մուսուլմաններին կոչ արվեց պատերազմի դուրս գալ անհավատների՝ քրիստոնյաների դեմ ամբողջ աշխարհում:

Արաբական պատմագիտության մեջ, օսմանյան քաղաքական և հոգևոր առաջնորդների կողմից 1916 թ. հայտարարված զիհադը, առանձնահատուկ ըննարկման առարկա է դարձել: Դա քաջատրվում է նրանով, որ զիհադն ուղղակի ասնջվում էր նաև արաբներին՝ որպես մուսուլմանների: Օսմանյան ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ զիհադը, քրիստոնյաների դեմ հայտարարված պատերազմը, կարող է հաջողության հասնել, եթե դրան միանան արաբները, որոնք կազմում էին Օսմանյան կայսրության բվարանակով ամենամեծ ժողովուրդը, և նրանց հոգևոր առաջնորդները, այդ բվում և Մեքքայի շերիֆ Չուսեյնը, որոնք մեծ հեղինակություն էին վայելում ամբողջ մուսուլմանական աշխարհում: Բարեբախտաբար, արաբները չարձագանքեցին սուլթանի և շեյխ ուլ-իսլամի կոչներին, որովհետև նրանք նախապատրաստվում էին ապստամբել օսմանյան տիրապետության դեմ, որը իրագործեցին շատ շանցած՝ 1916 թ. հունիսին:

Ահա այս հարցերի շրջանակներում արաբ պատմաբաններն անդրադարձել են զիհադի գործունի՝ կապված նաև արմենոցիդի հետ:

Արաբ պատմաբանները դատապարտում են զիհադի քաղաքականությունը, որը փորձում էին կիրառել օսմանյան կասավարողներն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Չեյն Չեյնը գտնում է, որ երիտթուրքերը փորձում էին զիհադն օգտագործել ոչ միայն, իբրև թե, իսլամը պաշտպանելու, այլև ավելի շուտ Օսմանյան կայսրությունը պաշտպանելու համար<sup>291</sup>: Ենիլ թուրման ուշադրություն է հրավիրում այն հան-

289 և. Գոլհամմեթյան, Արաբական երկրերի պատմություն, Գ. Ի, էջ 500:

290 Նույն տեղում, էջ 507:

291 Zeine H. Zeine, The Emergence of Arab Nationalism, p. 110.



է զանգվածների մասին: Չարկավ, եղել են առանձին մոլեռանդներ, աստվածաբաններ, ֆեոդալական և ցեղային առաջնորդներ, որոնք արժազանքել են սրբազան պատերազմի կոչին, բայց դրանք այնքան ասկավաթիվ են եղել, որ եղանակ չեն տեսնում և ընդհանուր պատկերը չեն փոխել: Այդ պատճառով էլ իրավացի են էմիլ Թուման, Ալեքսեյ Չաուրանին, Ամին Ասիդը և մյուս արաբագետները, որոնք նշում են, որ արտաքին քաղաքական առումով, ջիհադը շոշափելի արդյունքներ չտվեց, նույնիսկ պնդում են, որ ծախողվեց:

Ներքին ուղղվածություն ասելով՝ արաբ պատմաբանները հասկանում են ջիհադի հասցեագրումը Օսմանյան կայսրության մուսուլման ազգաբնակչությանը՝ առաջին հերթին թուրքերին, ապա քրդերին, չերքեզներին, ինչպես նաև արաբներին:

Այստեղ պատկերը միագույն չստացվեց: Արաբների ճնշող մեծամասնությունը չմիացավ ջիհադին, և դրանում մեծ նշանակություն ունեցավ նրանց ազգային, հոգևոր և քաղաքական առաջնորդների միատական դիրքորոշումը: Նրանք ոչ միայն չէին ցանկանում պաշտպանել Օսմանյան կայսրությունը, ինչպես կոչ էր արվում սուլթան Մեհմեդ V-ի հրովարտակում, այլ դեմ էին այդ դաժան կայսրության պահպանմանն ընդհանրապես, և զինված ապստամբություն բարձրացրին՝ ազատվելու օսմանյան չորստարյուրամյա լծից:

Բոլորովին այլ եղավ թուրքերի, քրդերի և չերքեզների դիրքորոշումը, որոնք դարձան ջիհադի մոլեռանդ պաշտպանները, մասնակիցները և երիտթուրքերի քաղաքական ցանկությունների կատարողները: Սուլթանի և շեյխ ուլ-իսլամի կոչերից հետո աննախադեպ բարձրության հասավ կրոնական մոլեռանդությունը թուրքական, ինչպես նաև քրդական և չերքեզական հասարակության ներսում: Եվ երիտթուրքական ղեկավարությունն օգտագործեց կրոնական այդ չտեսնված մոլեռանդությունը, ինչպես նշում է Ֆուադ Չասան Չաֆիզը. «ընդդեմ քրիստոնյա հպատակների և, առաջին հերթին, ընդդեմ հայերի»<sup>295</sup>:

Ջիհադի նպատակակետի՝ հայերի դեմ ուղղված լինելու վերաբերյալ, այդ նույն տեսակետն է արտահայտել նաև Ռեման ար-Թուրքը: Նա այդ հարցը քննարկում է իր «Էջեք հայ ազգի պատմությունից» աշխատության «Չայերը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում» հատվածում: Նա նախ նշում է, որ «Թուրքերը 1914 թ. նոյեմբերի

295 Ֆուադ Չասան Չաֆիզ, Չայ ժողովրդի պատմությունը, էջ 301:

21—ին սրբազան պատերազմ հայտարարեցին Գերմանիայի համաձայնությամբ»<sup>296</sup>։ Աս շատ կարևոր դիտարկում է։ Ինչքան մեզ հայտնի է, Ուսման արթնությունն առաջին արար հեղինակն է, որ այդպես կտրուկ կերպով ընդգծում է Գերմանիայի մասնակցությունը օսմանյան քաղաքական և հոգևոր ղեկավարության կողմից ջիհադի վերաբերյալ որոշում ընդունելու գործում։ Բայց միայն դրանով չի սահմանափակվում Ուսման արթնության դիտարկումը։ Նա գտնում է, որ Գերմանիայի համաձայնությամբ ջիհադ հայտարարելը երկու կարևոր նպատակ էր հետապնդում։ Առաջին՝ «խլամական աշխարհ, հատկապես Աֆրիկայի և Զնդկաստանի մուսուլմաններին, ուղքի հանել ընդդեմ եվրոպական գաղութարարների»<sup>297</sup>։ երկրորդ նպատակը, ինչպես գրում է Ուսման արթնությանը, կապված էր Հայոց ցեղասպանության հետ։ «Թուրքական պատասխանատուները, — ընդգծում է արար հեղինակը, — գտնում էին, որ հայերի ոչնչացումը, դա հանուն սրբազան պատերազմի՝ ջիհադի պահանջներից մեկն էր»<sup>298</sup>։

Կարծում ենք, որ Ֆուադ Հասան Հաֆիզը և Ուսման արթնությանը տվել են ջիհադի նպատակների և հայերին ոչնչացնելու հարցում նրա առաջնակարգ դերակատարության սպառնալից բնութագիրը։

Ջիհադի հիմքի վրա բարձրացած կրոնական մղելու գործունեության ալիքն իր մեջ ներգրավեց բուրժուական, քրդական և չերքեսական միլիտանտոր զանգվածներին, ապահովելով նրանց մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը։ Նրանց միջև յուրատեսակ մրցություն էր գնում, թե ով է ավելի մուսուլման և հետևողականորեն մվիրված ջիհադի «սուրբ» գործին։ Այս հանգամանքը, ինչպես ընդգծում են արար հեղինակները, հարկ է մշտապես նկատի ունենալ արձեցողիղի ծավալների ֆենոմենը հասկանալու և նրա իրագործման մեխանիզմն ըմբռնելու համար։

Ավելացնենք, որ ջիհադի մտադրյալ տակ, հայերի հետ միասին ընկան նաև ասորիները և հույները, որը նույնպես արտացոլվել է արաբական պատմագիտության մեջ։

Արաբական որոշ հեղինակներ ջիհադի կապակցությամբ մտավախություն են հայտնել, որ հետագայում նրա գործադրման և Հայոց ցեղասպանության համար կարող է անբողջ մեղքն ընկնել իսլամի վրա և նրան համարեն գլխավոր պատասխանատուն այդ ոճրագործության

296 Ուսման արթնությանը, էջեր հասարակական պատմություն, էջ 236.

297 Նույն տեղում։

298 Նույն տեղում։

համար: Այդ մտահոգությունը դրսևորել է Ֆայեզ ալ-Ղոսեյնը Հայոց ցեղասպանությանը նվիրված իր աշխատության մեջ: Նա գրում է, որ ի տես այն վայրագությունների, որ թուրքերը և նրանց մուլլաները կիրառեցին անապաշտպան և անմեղ հայերի նկատմամբ, հետագայում եվրոպան դրա համար կարող է մեղադրել իսլամը և նրան որպես կրոն պատասխանատու համարել այդ բոլոր ոճրագործությունների համար<sup>266</sup>: Լինելով քարեպաշտ մահմեդական՝ Ֆայեզ ալ-Ղոսեյն ուժեղ ապրումներ է ունեցել և, քնակնաբար, չէր ցանկանա, որ աշխարհը նման կարծիք կազմեր իսլամի՝ որպես կրոնի մասին:

Ֆայեզ ալ-Ղոսեյնը, այդուհանդերձ, գտնում է, որ Հայոց ցեղասպանության մեջ, հայ կանանց, երեխաների, ծերերի, հիվանդների, սովյալների նկատմամբ թուրքերի կողմից գործադրած գազանությունների համար իսլամը պատասխանատու չէ: Նա այդ բոլորի համար պատասխանատու է համարում օսմանյան իշխանություններին, երիտթուրքական ղեկավարությանը, որոնք իրենց քաղաքական նպատակների և ռասայական ծրագրերի իրագործման համար շահարկում էին իսլամը և նրա սուրբ գիրքը՝ Կորանը:

Այս պարագայում մենք փաստորեն գործ ունենք մի երևույթի հետ, որ հետագայում, քնդիուկ մինչև մեր օրերը, օգտագործվում է իսլամական իրականության մեջ: Խոսքը իսլամի՝ որպես կրոնի, և իսլամի՝ որպես քաղաքական ֆեոդալիզմի կամ քաղաքական իսլամի մասին է: Առաջին դեպքում մենք գործ ունենք, իբրև, կրոնի հետ, որը որոշակի հայեցակարգ է աշխարհի, մարդկության, մահվան և հավերժության, աստծո՝ որպես ամենաբարձրյալի և միակ արարչի, մարդու և ալլահի փոխհարաբերությունների և համանման այլ հարցերի վերաբերյալ:

Մինչդեռ երկրորդ դեպքում՝ քաղաքական իսլամի պարագայում, խոսքը որոշակի քաղաքական և կրոնական ուժերի կողմից իսլամը քաղաքական նպատակներով օգտագործելու, շահարկելու մասին է: Այդ երկու մոտեցումների միջև չի կարելի հավաստություն նշան դնել: Ուստի և իրավացի է Ֆայեզ ալ-Ղոսեյնը, երբ նա իսլամը որպես կրոն տարանջատում է ցփհաղից, որը իսլամական դրույթներն ու դոգմաները քաղաքական նպատակներին ծառայեցնելու մի դասական օրինակ է:

Կարծում ենք, որ ցփհաղի հարցի լուսաբանությունը արաբական պատմագիտության մեջ և արաբ հեղինակների արտահայտած քննա-

266 Տե՛ս Ֆայեզ ալ-Ղոսեյն, Ֆարսերը Հայաստանի մեջ:





Արաբ հեղինակների աշխատություններում հանգամանորեն, բնախնդրության հասնող մանրամասնություններով տրված է հայերի ցեղասպանության սարսափելի պատկերը, որը դահձային դաժանությանը իրականացվել է ինչպես հայկական վեց վիլայաթներում՝ Էրզրումում, Խարբեռդում, Ավասում, Բիթլիսում, Վանում և Դիարբաքրում, այնպես էլ Օսմանյան կայսրության տարբեր մարզերում, չրջաններում, քաղաքներում և գյուղերում բնակվող հայերի նկատմամբ: Եվ քանի որ այդ հարցը հայ, ռուսական, եվրոպական և ամերիկյան պատմագրության մեջ լուսաբանված է բավականաչափ հանգամանորեն, ուստի և հարկ չենք համարում կանգ առնել այդ իրադարձությունների նկարագրության վրա, մանավանդ որ արաբ հեղինակների աշխատությունները սկզբունցորեն, այդ բնագավառում, չեն պարունակում նորություններ:

Ասկայն, այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում անդրադարձալ արաբական պատմագիտության մեջ տեղ գտած մի քանի հարցերի լուսաբանությանը, որը, ինչպես կարծում ենք, ունի սկզբունքային նշանակություն: Խոսքը երիտթուրքերի տակտիկայի մասին է:

Երիտթուրքերի ղեկավարությունը մեծազույն լրջությամբ էր վերաբերվել Չայոց ցեղասպանության նախապատրաստմանը և իրագործմանը: Շատ հստակ էր սահմանված կարևոր քաղաքական և ռազմական քայլերի հերթականությունը:

Արաբ հեղինակները նախ և առաջ ընդգծում են հայկական քաղաքական և ազգային գործիչների, մտավորականության և հոգևորականության ներկայացուցիչների ձերբակալությունը և ոչնչացումը: Դրանով գլխատվեց հայկական ազգային-քաղաքական ղեկավարությունը, նրա սնրուցքը, և հայերը մնացին առանց կազմակերպող և ուղղություն տվող կենտրոնի:

Երկրորդ՝ նրանց տեսադաշտում իր արժանի տեղն է գտել մի այնպիսի առանցքային հարցի լուսաբանությունը, ինչպես հայերին առանց զինական ուժի թողնելու երիտթուրքերի քաղաքականությունը: Ուսման աք-մուրթը գրում է, որ ծրր սկսվեց համաշխարհային պատերազմը, «1914 թ. հայտարարվեց ընդհանուր զորահավաք և բոլորը, 18-ից 45 տարեկան տղամարդիկ, առանց քացառության, բանակ զորակոչվեցին»<sup>303</sup>: Դրանք քվում էին նաև հայ տղամարդիկ, որոնք՝ որ-

պես Օսմանյան կայսրության հպատակներ, մեկնեցին բանակ՝ իրենց պարտքը կատարելու: Այսպիսով՝ հայ տղամարդիկ, ինչպես այդ մասին վստահեցրել էին հայ ազգային գործիչները երիտթուրքական դեկավարությանը, ծառայում էին թուրքական բանակում՝ հեռու իրենց գյուղերից ու քաղաքներից: Այգրմական շրջանում նրանց օգտագործում էին շինարարական աշխատանքներում: Սակայն նախքան ցեղասպանության իրագործման անցնելը, օսմանյան կառավարության որոշումով, հայ զինվորները, ինչպես նշում է Մուսա Պրենսը, զինաթափ արվեցին և ոչնչացվեցին<sup>304</sup>:

Ղրա հետևանքով՝ արևմտահայությունը քաղաքական և ռազմական առումով զլխատվեց և մնաց անպաշտպան: Ինչպես նշում են ասուր հեղինակները, քաղաքներում և գյուղերում մնացել էին հիմնաբար հեղինակները, քաղաքներում և գյուղերում մնացել էին հիմնականում կանայք, ծեղերը, երեխաները և հիվանդները: Նրանք իրավակամորեն մասամբ դրանով են բացատրում երիտթուրքների հաջողությունների պատճառները իրենց ծրագրերը՝ արմենոցիդը, իրականացնելու գործում:

Արմենոցիդը կամ հայասպանությունը մի քանի կողմերով տարբերվում է հետագայում այլ երկրներում և այլ ժողովուրդների նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունից և արդյունքներից:

Առաջին՝ Հայոց ցեղասպանությունն իրագործվեց հայերի բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում:

Երկրորդ՝ նրա իրագործողները եղան ոչ բնիկները, եվկոորները՝ թուրքերը, որոնք գրավել էին Հայաստանի արևմտյան մասը:

Երրորդ՝ Հայոց ցեղասպանությունն Արևմտյան Հայաստանում ոչ թե օջախային էր կամ սահմանափակ՝ տարածքային և բնակչության բնակաբնակի առումով, այլ ամբողջական, տոտալ բնույթ էր կրում, որն ընդգրկում էր համայն Օսմանյան կայսրությունը՝ հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք:

Չորրորդ՝ ցեղասպանության հետևանքով արևմտահայությունը հայրենիք կորցրեց, զրկվեց իր բնօրրանից: Արևմտյան Հայաստանը հատարվեց իր բնիկ ազգաբնակչությունից՝ հայերից, որոնց տեղում՝ նրանց հայրենիքում, հաստատվեցին օտարները՝ թուրքերը և քրդերը:

Հինգերորդ՝ հայությանը մնաց նրա պատմական հայրենիքի ընդամենը մեկ տասներորդը:

Վեցերորդ՝ ցեղասպանությունից փրկված հայերը, հանգրվանելով աշխարհի տարբեր երկրներում, դրեցին ժամանակակից հայ սփյուռքի կազմավորման հիմքը: Դրա հետևանքով առաջացավ յուրահատուկ իրողություն՝ սփյուռքահայությունը բվաքանակով այսօր գերազանցում է ամենայն հայոց պետությունում՝ Հայաստանի Հանրապետությունում, քնակվող հայությանը:

Այսպիսին է այսօրվա դաժան իրողությունը, որն ուղղակիորեն բխում է Հայոց ցեղասպանությունից:

Այս բոլորը միասին վերցված՝ հիմք է տալիս ասելու, որ «Արմենոցիդը աննագեևոցիդային զենցիդն է»<sup>305</sup>:

305 Արմենոցիի քվանցայլիցն այս սահմանում ստարգրված է Օնր Կոչմիք տն'ս Ռ. Ռովհաննէյան. *The Armenian Genocide. Armenocide*, Yerevan, 2002.



Չայ գաղթականներին արտրելով արաբական երկրներ՝ երիտ-թուրքների ղեկավարությունը վստահ էր, որ հայերի սպանող շարունակելու գործում իրենց կունենան երկու քնական և վստահելի դաշնակից: Առաջինը՝ մահմեդական արաբներն էին, որոնք, ինչպես համոզված էին Ստամբուլում, զերմեռանդորեն պետք է արծազանքեին քիհադի կոչին և տարված սրբազան պատերազմի մուլուցքով՝ կշարունակեին այն արյունալի նախճիրը, որը իրենք սկսել էին Անատոլիայում: Երկրորդը՝ անապատն էր: Թալեաքը և նրա գործընկերները կասկած չունեին, որ հայերը կույ կզնային անապատի ավազուտներին՝ չդիմանալով կիզի արևին, անխուսափելի սուլին ու ծարավին:

Այդ երկու հարցերին էլ արաբ հեղինակներն այս կամ այն չափով անդրադարձել են իրենց աշխատություններում: Սահարայի՝ անապատի հարցը մշտապես շոշուփում է արաբ հեղինակների աշխատություններում<sup>306</sup>:

Սակայն երիտթուրքական ղեկավարության հույսերը չարդարացան: Այստեղ իրենց դերը խաղացին մի շարք հանգամանքներ: Նախ և առաջ՝ այն քարեկամական համագործակցությունը, որ արաբ և հայ մտավարականության, ազգային-քաղաքական գործիչներ միջև ձևավորվել էր XIX դարի վերջերից՝ այն թանի գիտակցությամբ, որ հայերի ու արաբների հակասակորդը միևնույն՝ օսմանական դաժան լուծն է: Դա հատկապես շեշտված է Մալիի Ջահր ադ-Ղիմի աշխատության մեջ: Այդ կապակցությամբ նա գրում է, որ «ինքը լրիվ համամիտ է պրոֆ. Ն. Ջովհաննիսյանի այն տեսակետին, որ «Դեռևս XIX դարի վերջին — XX դարի սկզբին արաբական և հայկական քաղաքական միտքը հանգեց այն եզրակացության, որ արաբների և հայերի ազգային շահերը հանդերձանում են, որ նրանք տառապում են միևնույն օսմանական լծից և ունեն մի ընդհանուր թշնամի՝ օսմանյան բռնապետությունը, հետևաբար՝ նրանք բախտակից ժողովուրդներ են»<sup>307</sup>: Ամենայն հավանականությամբ, կարելի է ենթադրել, որ մեր այս տեսակետն ընդունելի տեսակետ է արաբական պատմագիտության մեջ:

Երկրորդ՝ արաբները, ինչպես նշվեց, շատ սառն ընդունեցին քիհադի կոչը և, ի վերջո, մերժեցին միանալ այսպես կոչված սրբազան պատերազմին, ապա իրաժարվեցին կատարել Ստամբուլի իրամանները

306 Տե՛ս նաև նաև ար-Պուրք, էյնե հայ ազդի պատմությունից, էջ 243 և այլն: Մրվան ալ-Մուդալիսի, Չալեղը պատմության ընթացքում, էջ 408 և այլն:

307 Մալիի Ջահր ադ-Ղիմ, Օսմանյան կառավարության քաղաքականությունը կրոնական հայտատանում և մեծ տիրությունների քաղաքականությունը հայկական հարցում, էջ 28-29:

հայերին կոտորելու վերաբերյալ: Ընդհակառակը, նրանք, ինչպես վկայում են արար պատմագրության մեջ բերված փաստերը, իրենց հնարավորության սահմաններում, հաճախ վտանգելով իրենց՝ օգնության հասան հայ որբերին, կանանց, ծերունիներին, հիվանդներին ու սովյալներին: Ուսման արձույթը, անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ արարները, կանայք և տղամարդիկ իրենց օգնության ձեռքը մեկնեցին հայ գաղթականներին, «իրենց սրտերը և տները բացեցին բոլոր հայերի համար»<sup>308</sup>: Եւ հատկապես շեշտում է այն հոգատար վերաբերմունքը, որ արար կանայք ցուցաբերել են հայ որբերի նկատմամբ՝ ապաստան տալով և պատասխարելով նրանց: Այդ կապակցությամբ նա անդրադառնում է այն վտանգին, որ սպառնում էր արարներին՝ հայերին օգնություն ցույց տալու համար: Սպառնալիքը, հասկանալի է, գալիս էր քուրդական իշխանություններից, որոնք խստով արգելել էին արարներին որևէ օգնություն, անգամ ցուր կամ հաց տալ հայ տարազիրներին<sup>309</sup>: Սակայն արարները, ինչպես ցույց է տալիս Ուսման արձույթը, անտեսում էին այդ սպառնալիքները և շարունակում իրենց օգնությունը հայ գաղթականներին, որոնց նա անվանում է «մեր հայ եղբայրներ» («իխվանունա ալ-արման»)՝<sup>310</sup>:

Միաժամանակ նա գոհունակությամբ է նշում, որ հայերն իրենց չեզվով հրատարակված գրքերում և գեղարվեստական ստեղծագործություններում մինչև օրս քարծր են գնահատում «ազնիվ արար ժողովրդի դիբորոշումը»<sup>311</sup>:

Արարների կողմից հայ գաղթականների նկատմամբ դրսևորված մարդասիրական վերաբերմունքի մասին, հարկավ, տեղյակ էին երիտթուրքական պարագլուխները: Դրա մասին են վկայում ներքին գործերի նախարար Թալեաթի մի շարք գաղտնի հեռագրերը Չալեթի նահանգապետին և այլ տեղական կառավարիչներին:

Սիւս դրանցից մի քանիսը. «Չալեթի նահանգապետին, 9 սեպտեմբերի, 1915 թ.: Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը կատարելապես չեղյալ է հայտարարվում: Այս կապակցությամբ կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է նույնիսկ չխնայել օրորոցի մանուկներին: Այս

308 Ուսման արձույթը, էջեր հայ ազգի պատմությունից, էջ 247:

309 Լույս տեղում:

310 Լույս տեղում:

311 Լույս տեղում:

իրամանի իրագործումն արդեն տվել է իր արդյունքը մի շարք նահանգներում: Չակատակ դրան՝ մեզ անհայտ պատճառներով բացառություններ են եղել մի շարք մարդկանց նկատմամբ, փոխանակ պարտալալար ուղարկելու, նրանց պահել են Չալեբում: Այս հանգամանքը կառավարությանը կանգնեցնում է ավելի դժվարին կացության առջև: Առանց ուշադրություն դարձնելու նրանց առարկություններին, այդտեղից հեռացրեք բոլորին, ով ուզում է լինի, քե՛ կանանց և քե՛ երեխաներին, նույնիսկ նրանց, ովքեր ի վիճակի չեն շարժվելու: Թույլ մի տվեք, որ մարդիկ պաշտպանեն նրանց: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»<sup>312</sup>:

Մեկ շաբաթ անց՝ 1915 թ. սեպտեմբերի 16–ին, Թալեաթը կրկին Չալեթի նահանգապետին է ուղարկում մեկ այլ հեռագիր. «Չեզ արդեն հաղորդվել է այն մասին, որ կուսակցության որոշմամբ իրահանգված է ամբողջապես ոչնչացնել թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր դեմ կկանգնեն այս որոշմանը, չեն կարող մնալ կայսերական պատասխանատու պաշտոններում: Ինչքան էլ որ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, նրանց գոյությանը վերջ է տրվելու: Ուշադրություն մի դարձրեք նրանց ո՛չ տարիքին, ո՛չ սեռին և ո՛չ էլ խղճի խայթ զգացքը: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»<sup>313</sup>:

Եվ, վերջապես, ևս մեկ գաղտնի իրահանգ Չալեթի նահանգապետին՝ քվազոված 1915 թ. սեյեմբերի 23–ին. «Արևելյան վիլայաթներից ձեր ձեռքն անցած հայերին ոչնչացրեք գաղտնի ձևով: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»<sup>314</sup>:

Եթե այս բարձրագույն իրահանգներին ավելացնենք հայերի «Տեղահանության մասին օրենքը», որն ընդունել էր թուրքական կառավարությունը դեռևս 1915 թ. մայիսի 14 (27)–ին, որով թուրքական կորպուսների, բանակների և դիվիզիաների իրամասնատարներին հրամայված էր զենքով պատժել բոլոր նրանց, ովքեր որևէ ձևով կհակառակվեն հայերի տեղահանման մասին օրենքի կատարմանը<sup>315</sup>, ապա ավելի հասկանալի կդառնա ոչ միայն այն, քե՛ ինչպիսի դաժանությամբ էր օսմանյան կառավարությունը ձեռնամուխ եղել հայերի տոտալ ոչնչացմանը, այլև, քե՛ ինչպիսի սպառնալիքների էին կախված բոլոր այն արաբների զլխին, ովքեր համարձակվում էին չկատարել վերոնշյալ իրահանգները:

312 Ցե՛ և. Չովհաննեսյան, Արաբական երկրների պատմություն, 7, II, էջ 563:

313 Լույժ սեյուն, էջ 563–564:

314 Լույժ սեյուն, էջ 564:

315 Լույժ սեյուն:





վաղ-քեյը դրա համար թալեաքի կողմից հեռացվում է իր պաշտոնից և նրա փոխարեն Դեյր ազ-Չորի հաքիմ նշանակվում Ջաքի քեյը, որը, ինչպես նշում են Մովան ալ-Մուդավարը, Ուսման աք-Թուրքը և Մուսա Դրեմը, «հայտնի էր որպես արյունախում անծնավորություն»:

Եվ Մովան ալ-Մուդավարը լրիվ հիմք ունի հայերի նկատմամբ արարների գրաված մարդասիրական դիրքորոշման համար իր ժողովրդին անվանել «արար վեհանձն և ազնիվ ժողովուրդ»<sup>320</sup>: Համենայն դեպս, հայերն ազգովին կարող են իրենց ստորագրությունը դնել նման մի «կայազգի տակ»:

Դրա մասին է խոսում նաև այն իրողությունը, որ Ալի Սուվաղ-քեյի օրինակը եզակի չէր: Նույն կերպ է իրեն դրսևորում Դիարքաքրի վիլայաքի ալ-Բաշիր գավառի գավառապետ Սաքի քեյ աս-Սուվեյդին, որը, Ստամբուլից ստանալով հայերին ոչնչացնելու հրամանը, հրաժարվում է այն կատարելուց և օսմանյան կառավարությանն իր հրաժարականը ներկայացնում պատճառաբանելով, որ «իդ խիլճը թույլ չի տալիս նման գործ կատարել»<sup>321</sup>: Նրա հրաժարականն ընդունվում է, սակայն շուտով սպանվում է թուրք զինվորների կողմից, որպեսզի դա դաս ծառայեր մյուսներին համար, ովքեր կհրաժարվեին կատարել երիտթուրքական դեկավարության հրամանները հայերին ոչնչացնելու մասին և կշարունակեին մարդասիրական օգնություն ցույց տալ արաբական նրկրների միջով անցնող հայերի քարավաններին:

Սակայն արաբ առանձին պաշտոնյաներ շարունակում են դրսևորել քարյացական վերաբերմունք հայ գաղթականների նկատմամբ: Այդպես է վարվում Դիարքաքրի վիլայաքի Լիջանի գավառապետը, որին թուրք զինվորները նույնպես սպանում են<sup>322</sup>:

Ամենայն գովեստի է արժանի Սիրիայի Համա քաղաքի մուսուլմանական կրոնական գործիչ Աբուլլահի Մուսավին (Մասսահին), որն իր սեփական միջոցներով չորս ամսվա ընթացքում կառուցել էր որքանոց հայ որքերի համար, ապահովելով նրանց սնունդով ու հագուստով<sup>323</sup>: Երախտագիտությանը պետք է նշել նաև Դիարքաքրի նահանգապետ Ջալիլ-քեյի, և այդ պաշտոնում նրան փոխարինած Սամի-քեյի անունները<sup>324</sup>:

320 Մովան ալ-Մուդավար, Դեյրը պատճառային ընթացքում, էջ 406:

321 Սալիհ Ջաիր ալ-Դիլ, Օսմանյան կառավարության քաղաքականությունը կրճատյան Դեյրը ստանում և մեծ տերությունների դիրքորոշումը Կազակյան հարցում, էջ 30:

322 Նույն տեղում:

323 Նույն տեղում, էջ 31-320

Մովան ալ-Մուդավար, Դեյրը պատճառային ընթացքում, էջ 406:

324 Նույն տեղում, էջ 30:

Իրենց արժանապատվությամբ պահեցին Մոսուլի արաբ երևելիները: Երբ նրա արաբ նահանգապետը Մտամբուլից հրաման ստացավ Մոսուլում գտնվող և Մոսուլի միջով անցնող հայերի քարավանները ոչնչացնելու մասին, նա, փոխանակ այդ հրամանը կատարի, խորհրդակցության է հրավիրում քաղաքի երևելիներին՝ քննարկելու այդ հարցը: Խորհուրդը միաձայն որոշում է մերժել թուրքական կառավարության պահանջը՝ հայտարարելով, որ «իրենց խիղճը թույլ չի տալիս, որ իրենց ձեռքերը թաթախվեն հայերի արյան մեջ և թուրքերի նման դառնան ոճրագործ»<sup>325</sup>:

Աղծավանջային այդ տարիներին հայերի նկատմամբ արաբների մարդասիրական վերաբերմունքի մի անմոռանալի դրսևորում հանդիսացավ եգիպտացիների՝ թե՛ ժողովրդի, և թե՛ կառավարության, անգնահատելի օգնությունը Մուսա լեռան հայերին: Մուսալեռացիների հերոսական ինքնապաշտպանությանն անդրադարձել են համարյա բոլոր արաբ հեղինակները՝ չկարողանալով զսպել իրենց անկեղծ հիացմունքը հայերի դիմացկունության և հերոսական պատվածքի հանդեպ: Այդ մասին քավականին հանգամանորեն են գրել Մրվան ալ-Մուղավարը, Ուսման աթ Թուրքը, Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամը և այլք: Մուսալեռացիների գործողությունները հերոսական է կոչում եգիպտացի պատմաբան Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամը՝ ընդգծելով նրանց վճռականությունը թույլ չտալ թուրքերին իրենց կոտորել: Լա հատկապես քարծր է գնահատում ճիշտ ստրատեգիական դիրքեր գրավելու նրանց ունակությունը<sup>326</sup>: Արաբ հեղինակները ընդգծում են այն կարևոր հանգամանքը, որ ֆրանսիական նավերի օգնությամբ փրկված մուսալեռացիներին սրտաբացությամբ ընդունեցին եգիպտոսում, որոնք տեղավորվեցին Պորտ Սաիդում<sup>327</sup>: Այստեղ նրանց համար պատրաստվել էր հատուկ ճամբար: Արժանի է հիշատակության այն հանգամանքը, որ եգիպտոսի սուլթան Գուսեյն Բամիլը մուսալեռացիներին պահելու ծախսերի մի զգալի մասը հոգաց ինքը:

Արաբների հայանպաստ դիրքորոշման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցավ Զիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Գուսեյն իբն Ալի ալ-Ֆաշիմիի մոտեցումը երիտթուրքերի ոճրագործությանը և հայերի ցեղասպանությանը: Լա ամբողջ մուսուլմանական աշխար-

325 Լույն տեղում, էջ 30-31:

326 Մուհամմադ Բիֆաթ ալ-Իմամ, Գայլական հարցը օսմանյան պրոսոպոնում, 1878-1923, էջ 65:

327 Լույն տեղում:

հում մեծ հեղինակություն էր վայելում, որը պայմանավորված էր երկու գլխավոր հանգամանքներով: Առաջին՝ նա ուղղակիորեն սերում էր իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեի Կուրբչ ցեղի Քաշիմի տոհմից, և երկրորդ՝ նրա հակողության ներքո էին գտնվում մուսուլմանական աշխարհի երկու կարևոր սրբակենտրոնները՝ Մեքքան և Մադինան: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Յուսեյն իբն Ալին իր որդիների հետ միասին գլխավորեց հակաբուլղքական ապստամբությունը, որը նշանակալի դեր խաղաց Օսմանյան կայսրության կործանման և օսմանյան տիրապետությունից արաբների ազատագրման գործում:

Յուսեյն իբն Ալին 1916–1917 թթ. մուսուլմանական աշխարհին հասցեագրված իր ուղեմներում խստորեն քննադատում էր երիտթուրքական կուսակցությանը և կայսրության ղեկավարությունն իրենց ձեռքը վերցրած առաջնորդներ Թալեաթին, Էնվերին և Չեմալին, որոնք, նրա կարծիքով, սխալ քաղաքականություն էին վարում<sup>328</sup>: Նա հատկապես սուր քննադատության էր ենթարկում նրանց քաղաքականությունը արաբների և կայսրության մյուս ոչ բուրք ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ: Այդ առնչությամբ, նա մատնանշում էր երեք հանգամանք՝ կայսրության բոլոր ժողովուրդներին թուրքացնելու երիտթուրքերի փորձերը, քչնամական ղիբոթոշումը արաբների և արաբերեն լեզվի նկատմամբ, որը մուսուլմանների սուրբ զոքի՝ Կորանի լեզուն էր, և պատերազմի տարիներին հայերի զանգվածային սպանոց: Մեքքայի շերիֆի կարծիքով, երիտթուրքերի քաղաքականությունը հակասում էր իսլամի սկզբունքներին և նրանք իրենց կատարած ոճիրներով «կապեղը խզել են իսլամական աշխարհի, սրբազան Կորանի և սուլեմայի հետ»<sup>329</sup>:

Նման հետևությունների Յուսեյն իբն Ալին հանգել էր նաև Քայկական հարցում երիտթուրքերի վարած քաղաքականության հետևանքով: Եվ նա այդ մասին քաջահայտ ասում է 1916 թ. իր որդուն՝ Էմիր Ֆեյսալին և Էմիր Աբդ ալ-Ազիզ ալ-Ջաբրային ուղղված նամակներում: Այդ Էմիրները ղեկավարում էին արաբական ապստամբական բանակի գործողությունները սիրիական ռազմաճակատում: Յուսեյն իբն Ալին պահանջում է նրանցից ամեն տեսակի օգնություն ցույց տալ հայ զաղթականներին և «պաշտպանել նրանց այնպես, ինչպես դուք

328 Մանուր առ մին շարիֆ Մաքքա վա ամիրուհա իյա իմնի ինվաննի ալ-մուսլիմն, 1916 հունիսի 28 — Օնիանուր դիմում Մեքքայի շերիֆից և Օրա կուսակցից իրեր մուսուլման երաջաններին, 1916 թ. հունիսի 28 — Արաբական ազդուրները հայերի ցեղասպանության մասին, էջ 11–12:

329 Նույն տեղում:

պաշտպանում եք ձեր անձը, ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը, որովհետև նրանք (հայերը — Ն. Գ.) մուսուլմանների գիմմիներն (իսլամ-նավորյալները — Ն. Գ.) են»<sup>320</sup>։ Մեքքայի շնորհքը նկատի ուներ այն հանգամանքը, որ ըստ Կորանի դրույթների և մուսուլմանական իրավունքի՝ քրիստոնյաները համարվում էին մուսուլմանների հովանավորյալները։

Ցեղասպանությունից հայ վերապրողները երախտագիտությամբ են հիշում արաբներին, հասարակ մարդկանց և պաշտոնյաներին, որոնք, շատ հաճախ իրենց կյանքը վտանգի ենթարկելով, արհամարհելով թուրքական ասկարների սպառնալիքները, կարողանում էին օգնություն ցույց տալ հայ գաղթականներին։ Եվ հայերը վստահում էին արաբներին։ Քիչ չեն եղել դեպքերը, երբ հայ մայրերը ճարահատյալ արաբ կանանց էին հանձնում իրենց զավակներին՝ հուսալով փրկել նրանց կյանքը։ Այդ կերպ հազարավոր հայ մանուկներ փրկվեցին մահվան ճիղաններից ու թուրքական զորքերի գազանություններից։

1919 թ. մայիսի 9-ին Դամասկոսի քաղաքային սրահում տեղի ունեցավ էմիր Ֆեյսալի հանդիպումը օսմանյան տիրապետությունից ազատագրված Սիրիայի, Լիբանանի, Գորդանանի և Պաղեստինի արաբ ղեկավար գործիչների ու հասարակության ներկայացուցիչների հետ։ Այդ պատմական նիստին ներկա էր և Ելույթ ունեցավ նաև Դամասկոսում, Գալեբում և Սիրիայի այլ վայրերում հաստատված հայ գաղթականների հոգևոր աջաբնորոգը։ Իր խոսքում նա, պաշտպանելով արաբներին ազգային անկախության համար մղվող նրանց ազատագրական պայքարում, առիթից օգտվելով, ամբողջ հայության անունից շնորհակալություն է հայտնում արաբներին նրանց բարի ու ազնիվ վերաբերմունքի համար հայ գաղթականների հանդեպ, որոնք արդեն չորս տարի է գտնվում էին Սիրիայի տարբեր քաղաքներում ու շրջաններում։ Հայ պատվիրակը ներկաների որոտընդոստ ծափահարությունների տակ հայտարարում է. «Արաբների անունը հայերի պատմության մեջ կգրվի ոսկե տառերով»<sup>321</sup>։

Հայերի դիրքորոշումն այդ հարցում չի փոխվել մինչև օրս։

320 Տե՛ս Ն. Գոլիանցի պատմություն, Գ. Բ. էջ 568.  
321 Documents on British Foreign Policy, 1919-1939, 1st Series, vol. IV, London, 1962, p. 271.

«XX ԴԱՐԻ ՍԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՈՒ-  
ԹՅԱՆ ՍԵՎ ԷՏԸ»

**Ա**րմենոցիդի՝ հայասպանության առանձին հիմնախնդիրը քննարկելու հետ միասին արարական պատմագրության մեջ տրված է նաև Հայոց ցեղասպանության ընդհանուր զննատեսականը՝ ելակետ ունենալով նրա նշանակությունը ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ համայն մարդկության համար:

Արաբ հեղինակները նախ և առաջ գտնում են, որ 1915 թ. իրադարձություններն Արևմտյան Հայաստանում ունեն միայն մեկ անուն՝ ցեղասպանություն: Նրանք շատ հատակ կերպով տարբերություն են տեսնում մի կողմից՝ սովորական ջարդերի ու կոտորածների և մյուս կողմից՝ ցեղասպանության միջև: Նրանց աշխատություններում ակնհայտորեն այդ երկու տերմիններն ունեն միանգամայն տարբեր իմաստ: Ջարդերը, դատելով նրանց մոտեցումներից, տեղական, սահմանափակ մասշտաբների երևույթ են, որոնք երբեմն կարող են կատարվել անգամ տեղական այս կամ այն կառավարողի նախաձեռնությամբ: Իսկ ցեղասպանությունը էթնիկական ոչնչացում է, սովալ ժողովրդի ամբողջական, տոտալ սպանդ, որն իրականացվում է որպես պետական քաղաքականություն՝ քոլոր միջոցներով ու մեթոդներով՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, քարոզչական, քարոյահոգեբանական և այլն՝ հիմնված օտաաշականության գաղափարի վրա:

Այս մոտեցումն ամենախտացված ձևով իր արտահայտությունն է գտել Մուսա Գրեմսի՝ մեր կողմից արդեն նշված «Արմենոցիդը ամենագեոցիդային զենոցիդն է» քանաձևում: Բովանդակությամբ, այսինքն՝ նրա անկրկնելիության և ամենադաժանը լինելու առումով այդ քանաձևին է հարում արաբ պատմաբանների, մասնավորապես Ֆուադ

Չասան Չաֆիզի<sup>332</sup> և Սամիր Արբաշի<sup>333</sup> կողմից տրված սահմանումը՝ «Չայոց ցեղասպանությունը XX դարի սև էջն է»:

Արաբ պատմաբանները միակարծիք են այն հարցում, որ Չայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունն է: Արաբական պատմագիտության մեջ այդ հարցը վիճաբանության և տարբեր մեկնաբանությունների առարկա չի հանդիսանում:

Արաբական պատմագիտության կողմից հայերի դեմ երիտթուրքերի իրագործած հանցագործությունն ընկալվում և մեկնաբանվում է որպես հանցանք համայն մարդկության դեմ: Ստորև, հայցելով հարգելի ընթերցողի ներողամտությունը, թվարկելով ներկայացնելու ենք արաբ պատմաբանների կարծիքներն այդ հարցի վերաբերյալ:

Մուսա Պրեմսը Չայոց ցեղասպանությունը, բացի այն, որ նա դա դիտում է ամենազենցիղային զենցիղը, միաժամանակ համարում է «հանցագործություն ընդդեմ մարդկության»<sup>334</sup>: Ուսման աթ-Յուրջը, Չայոց ցեղասպանությունը համարելով բարբարոսական արարք, գտնում է, որ նա «հարուցեց անբողջ քաղաքակիրթ մարդկության գայլոսթը»<sup>335</sup>: Նույն տեսակետն է արտահայտում Սալիհ Չահր ադ-Ղինը. «Այն, ինչ կատարվեց 1915 թ. և հետագա տարիներին, ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանություն: Դա հայ ժողովրդի պատմության մեջ մտել է «Մեծ եղեռն» անունով և հանդիսանում է հանցագործություն՝ ուղղված ոչ միայն հայերի, այլև համայն մարդկության դեմ»<sup>336</sup>: Այդ խնդրին բավականին հանգամանորեն է անդրադարձել Ֆուադ Չասան Չաֆիզը: Նրա համար հայկական ցեղասպանությունը հանդիսանում է «միջազգային իրավունքի քոլոր նորմերի և հումանիզմի սկզբունքների խախտում»<sup>337</sup>: Չենց այս կապակցությամբ է, որ նա, Չայոց ցեղասպանությունը դիտելով որպես մարդկության նորագույն պատմության առաջին ցեղասպանություն, այն համարում է XX դարի սև էջը<sup>338</sup>:

Կարծում ենք, որ արաբ տարբեր հեղինակներից բերված այդ կարծիքները միանգամայն բավարար են՝ հաստատելու համար, որ արաբ պատմագիտությունը Չայոց ցեղասպանությունը չի գնահատում մեկու-

332 Ֆուադ Չասան Չաֆիզ, Չայ ժողովրդի պատմությունը, էջ 297:

333 Սամիր Արբաշ, Չայասան. Չոյ և ժողովուրդ, էջ 166:

334 Moussa Prince, L'Armenocide, p. 13.

335 Ուսման աթ-Յուրջ, էջեր հայ ազգի պատմությունից, էջ 247:

336 Սալիհ Չահր ադ-Ղին, Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Չասանում և մեծ տեղությունների դիրքերումը Չայկական հարցում, էջ 26:

337 Ֆուադ Չասան Չաֆիզ, Չայ ժողովրդի պատմությունը, էջ 9:

338 Նույն տեղում, էջ 297:

սի, որպես միայն հայ ժողովրդի ողբերգություն, այլ դիտարկում է համայն մարդկության քաղաքական ճակատագրի տեսանկյունից, և հանգում այն միակ ճիշտ եզրակացությանը, որ Հայոց ցեղասպանությունը ընդդեմ մարդկության ուղղված հանցագործություն է:

Արաք պատմաբանները Հայոց ցեղասպանությունը դիտարկում են նաև նրան հաջորդած մյուս ժողովուրդներ ցեղասպանության համաշխարհային՝ նկատելով որոշակի զենտիկական կապ: Այդ զիծը հստակ կերպով դրսևորվում է, երբ նրանք, հատկապես Մուսա Պրենսը, Ֆուադ Հասան Հաֆիզը, Մրվան ալ-Մուդալսարը և մյուսները, հաջորդություն են տեսնում Հայոց ցեղասպանության և Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ելրուպական ժողովուրդների նկատմամբ Հիտլերի վարած ցեղասպանության քաղաքականության միջև: Մուսա Պրենսն ուղղակի ընդգծում է, որ հայերի նկատմամբ երիտթուրքերի արածը քառորդ դար անց կրկնեց Հիտլերը<sup>339</sup>: Նա իր գրքում ֆրանսերեն քարգմանությամբ քերում է Հիտլերի 1939 թ. օգոստոսի 22-ին Ջալցրուրգում արտասանած ելույթի այն հատվածը, որտեղ հիշատակություն կա Հայոց ցեղասպանության մասին: Գիտական աշխարհին լավ հայտնի այդ ելույթում, Գերմանիայի ֆյուրերը՝ դիմելով հանդիպմանը հրավիրված գերմանական քանակի քարծրագույն հրամանատարությանը և մյուս ներկաներին, և նրանց տեղյակ պահելով, որ հրաման է արձակել ոչնչացնել լեհական ծագում ունեցող բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաներին, քացականչում է. «Ո՛վ է, վերջիվերջո, այսօր հիշում հայերի ոչնչացման մասին»<sup>340</sup>: Եվ չի կարելի չհամաձայնել Մուսա Պրենսի հետ, երբ նա նշում է, որ «արմենոցիդը ելակետային փուլ էր նացիստների կողմից իրականացված գենոցիդի ճանապարհին»<sup>341</sup>:

Համանման մտքերի ենք մենք հանդիպում նաև Ֆուադ Հասան Հաֆիզի մոտ: Դրա ապացույցն է հանդիսանում նրա աշխատության այն հատվածը, որտեղ նա զուգահեռներ է անցկացնում երիտթուրքերի իրագործած Հայոց ցեղասպանության և Հիտլերի իրագործած ցեղասպանության միջև: «Երբ Ադոլֆ Հիտլերը գործեց իր գենոցիդը, — գրում է Ֆուադ Հասան Հաֆիզը, — նա հիշեցրեց Հայոց ցեղասպանության մասին որպես օրինակ և նմուշ»<sup>342</sup>: Շատ դիպուկ է ասված՝ հենց նմուշ:

339 Moussa Prince, L'Armenocide, p. 36:

340 Նույն տեղում, էջ 7:

341 Նույն տեղում, էջ 60:

342 Ֆուադ Հասան Հաֆիզ, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 297:



եվ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ երիտթուրքերը հանդիսացել են գերմանական նացիստների ուսուցիչը, որոնք որպես աշակերտներ իրենց չարագործություններով ոչ միայն արժանի եղան իրենց ուսուցիչներին, այլև ինչ—որ տեղ գերազանցեցին նրանց:

Սակայն արաբ հեղինակները հաջորդությունը ցեղասպանության բնագավառում դիտարկում են ոչ միայն գերմանացիների կողմից երիտթուրքերին ընդօրինակելու մեջ և ոչ միայն «երիտթուրքեր—նացիստներ» շրջանակներում: Նրանց կարծիքով, այդ հաջորդությունը դրսևորվում է նաև պաղեստինցի արաբների նկատմամբ սիոնիստների որդեգրած քաղաքականության մեջ: Այս հարցը, անշուշտ, և՛ շատ քաղոք է, և՛ մրքին, ու նա կարող է հատուկ քննարկման ատարկա դասնալ: Մենք այստեղ անդրադռնում ենք դրան այնքանով, որքանով որ արաբական պատմագիտության մեջ այդ հարցը չոչափվում է Գայոց ցեղասպանության հիմնախնդիրները քննարկելիս, որի ընթացքում քացահայտվում են նոր շերտեր:

Այսպես, օրինակ, դոկտոր Շաֆիկ Ռախս այն կարծիքն է հայտնում, որ իսրայելական կառավարության քաղաքականությունը պաղեստինյան հարցում «կարելի է համեմատել քուրքական կառավարության քաղաքականության հետ, որը համոզված էր, որ որպեսզի վերջ տալ Գայկական հարցին, անհրաժեշտ է ոչնչացնել հայերին»<sup>343</sup>:

Այդ հարցին բավականին մանրամասն անդրադարձել են Աալիի Չահր ադ—Դինը, Նաիմ ալ—Ցաֆին, Ֆուադ Գասան Գաֆիզը, Սամի Արբաշը և արաբ այլ հեղինակներ, որոնք, ինչպես Շաֆիկ Ռախսը, համոզված են, որ սիոնիստական դեկավարները ծգտում են Պաղեստինի արաբների հետ վարվել ճիշտ այնպես, ինչպես երիտթուրքերը վարվեցին հայերի հետ: Լիբանանի համալսարանի պրոֆեսոր, հայտնի մտավորական, փիլիսոփա, արաբական փիլիսոփայությանը նվիրված մի քանի արժեքավոր հատորների հեղինակ Գուսնյն Մուրուվան, որը Լիբանանում ծավալված քաղաքացիական պատերազմի զոհը դարձավ, իր «Թուրանիզմի... և սիոնիզմի միջև» հոդվածում ուղղակի կապ է տեսնում հայերի դեմ երիտթուրքերի չարագործությունների և պաղեստինցի արաբների դեմ սիոնիստների կիրառած չարագործությունների միջև: Ուսումնասիրելով XX դարում ցեղասպանության քուրք դրսևորումները և Գայոց ցեղասպանությունը համարելով մեղ դարաշրջանի

առաջին ցեղասպանությունը՝ Չուսեյն Մուրուվան նկարագրել է համաշխարհային քաղաքականության մեջ զենցիղի զարգացման և անցումային փուլերի շրջափակումները: Նրա պատկերացմամբ այդ շրջան հետևյալ կերպ է ներկայանում. քուրդական քուրանիզմ-գերմանական մազդան-խալաֆական ֆաշիզմ-սիոնիզմ<sup>344</sup>:

Ելակետայինը զենցիղի համաշխարհային այդ շրջայում Չուսեյն Մուրուվան համարում է քուրանիզմը կամ քուրջիզմը, որի զոհերը դարձան հայերը և որի զոհերը կարող էին դառնալ արաբները, իսկ եզրափակիչ փուլը՝ սիոնիզմը, որի գործողություններն ուղղված են պաղեստինցի արաբների դեմ: Նրանք քուրդի համար ընդհանուրը Չուսեյն Մուրուվան համարում է ռասայականությունը, որը գործնականում իրականացվեց ժողովուրդների ամբողջ խմբերի ոչնչացման ձևով<sup>345</sup>:

Այսպիսով՝ արաբական պատմագիտության մեջ Չայոց ցեղասպանությունը՝ արմենցիից, ընկալվում է որպես XX դարի առաջին ցեղասպանություն, որը եթե հայերի համար ողբերգություն էր, ապա համայն մարդկության համար ոճրագործություն, որը պետք է համարվի հանցանք՝ ուղղված ընդհանրապես մարդկության դեմ:

Մյուս կողմից՝ արաբ հեղինակները, հենվելով Չայոց ցեղասպանության փորձի վրա, կարողացել են նկատել այն զենետիկական կապը, որ կա արմենցիի և նրան հաջորդած մյուս քուրդ ցեղասպանությունների միջև, որոնք իրագործվել են աշխարհի տարբեր երկրներում:

Կարծում ենք, որ միանգամայն համոզիչ է ինչևս արաբական պատմագիտության կողմից առաջ քաշված այն թեզը, որ այդ քուրդի համար ելակետային է նդել քուրդական քուրանիզմը՝ երիտթուրքերի իրագործած հայերի ցեղասպանությունը, իսկ ավելի լայն իմաստով՝ ռասիզմը:

344 Չուսեյն Մուրուվան, *Բաշնա քուրանիզմ... Հա սիոնիզմ — Երուսաղեմ... և սիոնիզմի միջև*, Քեյթոսք, 1986, էջ 86-87:

345 Նույն տեղում, էջ 87:

ՀԱՅ ԿՐԻՃԱՌՈՒՆԵՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ  
ԳՆԱԿԱՏԱԿԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱ-  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՏ

**Ա**րարական պատմագիտության մեջ կենտրոնական տեղ է զբա-  
վում արմենոցիդի համար պատասխանատվության և նրա կազ-  
մակերպիչների դատապարտման հարցը: Ենթադրում ենք, որ հարցադրումը միանգա-  
մայն օրինական է, քանի որ յուրաքանչյուր ցեղասպանություն ինքնին  
մարտահրավեր է ամբողջ մարդկությանը և հանցանք ոչ միայն կոնկրետ  
տվյալ էթնոսի հանդեպ, այլև համայն մարդկության նկատմամբ:

Այդ հարցը քննարկելիս արար պատմաբանները ելնում են նաև այն  
տեսադրույթից, որ ցեղասպանության պատժելիությունը միջազգային  
իրավունքի տեսակետից վաղեմություն չունի, ժամանակային առումով  
նա սահմանափակված չէ, ուստի և նշանակություն չունի, քե երբ և ում  
կողմից է այն կատարվել: Դա բոլոր ժամանակների համար մնում է  
հանցագործություն ընդդեմ մարդկության, ուստի և անվերապահորեն  
ենթակա է պատժի:

Երբ արար հեղինակներն այս տեսակետից են մոտենում Հայոց  
ցեղասպանության խնդրին, ապա նրանք գտնում են, որ Հայոց  
ցեղասպանության՝ որպես երևույթի դատապարտումը համայն մարդ-  
կության կողմից դեռևս չի կատարվել: Արմենոցիդը դեռևս չի գտել մի-  
ջազգային ճանաչում: Եվ ահա, արար պատմաբանները՝ Մովսես  
ալ-Մուղավարը, Սամիր Արբաշը, Սալիհ Չաիր աղ-Դինը, Մուհամմադ  
Ռիֆաթ ալ-Իմամը, Ամին Սաիրը, Ֆուսուլ Հասան Հաֆիզը, Մասուդ Դա-  
հիրը, Հուսեյն Մուրտալան և այլն, և այլն, խստորեն՝ դատապարտում են  
համաշխարհային հանրությանը, միջազգային կազմակերպություննե-  
րին և մեծ տերություններին, որոնք մինչև օրս չեն դատապարտել

նրանց, ովքեր իրագործեցին այդ հանցագործությունը»<sup>346</sup>։ Այդ հանցանքը Իլյաս Չամանիդին համարում է «խայտառակություն ազատ աշխարհի համար»<sup>347</sup>։ Նման դրակումներ և քննադատություններ կարելի է գտնել համարյա արաբական բոլոր հետազոտողների մոտ։ Այդուհանդերձ, ամենադիպուկ, ամենատարողունակ և ամենախիստ ու արդարագի ձևակերպումը դարձյալ կարելի է գտնել Մուսա Պրեմսի մոտ։ «Արմենոցիդը,— գրում է նա,— չունեցավ իր Նյուրնբերգը»<sup>348</sup>։ Նյուրնբերգում տեղի ունացած դատավարության ժամանակ, ինչպես հայտնի է, միջազգային դատարանը մահվան դատապարտեց նացիստական Գերմանիայի բոլոր պարագլուխներին նրանց գործած հանցագործությունների համար, այդ թվում և հրեաների դեմ կիրառած հոլոկոստի և ելրուպական մի շարք ժողովուրդների դեմ կատարած ոճրագործությունների համար։

Ցավոք, ո՛չ իր ժամանակին, ո՛չ էլ այժմ, միջազգային նման մի ատյանում չի քննարկվել հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության երիտթուրքական պարագլուխների հանցագործության հարցը, որը նախորդել էր հրեական հոլոկոստին։ Դա, անշուշտ, քաղոյական հարված է հայ ժողովրդի սպասումներին, որոնք արդարություն են պահանջում։ Մյուս կողմից, միջազգային հանրության այդ անհեռատես քայլի դիմաց միջազգային հանրությունն ինքը, աշխարհի ժողովուրդները վճարում են շատ բանկ, որի գինը մի շարք նորանոր ցեղասպանություններն են եղել անբողջ XX դարում։

Սակայն այստեղ պարագրեսայինն այն է, որ ժամանակին՝ 1919 թ., Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո, սուլթան Մեհմեդ VI Վահիդդինի հրամանով ստեղծվեց արտակարգ զինվորական ատյան օսմանյան կառավարությանը և երիտթուրքերի ղեկավարությանը դատելու համար։ Չերեկալվեցին և օազմական ատյանի առջև կանգնեցին Մեծ վեզիր (1913–1916 թթ.) Մաֆդ Յալիմ փաշան, երիտթուրքական կուսակցության առաջին քարտուղար Միդհատ Շուքրի-բեյը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ջիա Գյուկալպը, մեջլիսի նախագահ Իբրահիմ-բեյը, սենատի նախագահ Ռիֆաթ-բեյը, շեյխ ուլ-խլամ Մուսա Յազգիմ էֆենդին, արդարադատության, արտաքին գործերի, ներքին գործերի, կրթության և այլ նախարարները։

346 «Պաշտի», Երևան, 1995, № 4, էջ 27–33։

347 Իլյաս Չամանիդի, ժողովրդի ողբերգությունը, էջ 60։

348 Moussa Prince, L'Armenocide, p. 51.

Իսկ ինչ վերաբերում է գլխավոր հանցագործներին՝ Թալեաթին, Էն-վերին, Ջեմալին, Լազիմին, Շաքիր Բեհաեդդինին և Մյուսնեբին, ապա նրանք դատարան չներկայացան, քանի որ բացակա էին: Երանք գերմանական սուզանավով զադունի լքել էին Թուրքիան և Գերմանիայի կառավարության օգնությամբ և բուլղոսլոթյամբ հանգրվանել Գերմանիայում:

Երանք բացակայությամբ, սուլթանական դատարանը, քննարկելով երիտթուրքական ղեկավարության քաղաքականությունը պատերազմի տարիներին և քրիստոնյաների, առաջին հերթին հայերի դեմ կատարած հանցագործությունները՝ զանգվածային սպանություններ, բռնազաղթ և այլն, երիտթուրքական պարագլուխներին և ակամավոր գործիչներին, թվով 11 մարդ, դատապարտեց մահվան: Մահվան դատապարտվածների մեջ էին՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Լազիմը, Շաքիր Բեհաեդդինը, Ջեմալ Ազմի-բեյը, որը Տրապիզոնի մահանգապետն էր, Լաիմ-բեյը, Բեմալ-բեյը և այլն: Այդ դատավարության փաստաթղթերը և նյութերը վաղուց հայտնի են հանրությանը, որոնք տալագրվել են ոչ միայն հայերեն, այլև արաբերեն, անգլերեն և այլ լեզուներով<sup>349</sup>:

Բայց բուրքական դատարանի որոշումը մնաց քղթի վրա և ի կատար չածվեց, քանի որ գլխավոր հանցագործները չէին գտնվում Թուրքիայում:

Ստեղծված պայմաններում, Թուրքիայի դատարանի օրինական որոշումը կատարելու առաքելությունը և ծանրությունն իրենց վրա վերցրեցին հայ ժողովրդական վրիժառուները:

1921 թ. մարտի 15-ին Սողոմոն Թնիկեյանը Բեռլինում սպանեց Թալեաթին և ինքնակամ հանձնվեց գերմանական դատարանին, որը, քննարկելով այդ հարցը և սպանության դրդապատճառները, անվարտ ճանաչեց նրան և ազատ արձակեց: 1921 թ. դեկտեմբերի 6-ին Յոնմուս հայ վրիժառու Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվեց Ասիդ Քալիմը, 1922 թ. ապրիլի 7-ին, դարձյալ Բեռլինում, Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի գնդակներից ընկան Շաքիր Բեհաեդդինը և Ազմի-բեյը, իսկ նույն տարվա հուլիս 21-ին Թիֆլիսում սպանվեց Ջեմալ փաշան, որն իրականացրին Պետրոս Տեր-Պողոսյանը և Ստեփան Ծաղիկյանը<sup>350</sup>; Արդար պատժից չխուսափեց նաև երիտթուրքական եռապետության երրորդ անդամը՝ Էնվերը, որը սպանվեց Կենտրոնական Ա-

349 Տե՛ս Պալերի ցեղասպանությունը լիակատարությամբ հաստատելով: Արաբական, բուլղոսնապոլսյան, ծանրությունները՝ Յ. Գ. Փափաջյանի, Երևան, 1968:

350 Nikolay Movsesian, *The Armenian Genocide, Armenia, p. 102-103.*

սիայում՝ կարծիք բանակի զորախմբի հրամանատար Չակոբ Մելքունովի կողմից:

Չայ վրիժառուների կողմից երիտթուրքական հանցագործներին վերացնելու հարցը հատուկ քննարկման առարկա է դարձել արաբական պատմագիտության մեջ:

Ինչպե՞ս են արաբ պատմաբանները գնահատում այդ երևույթը:

Արաբ հեղինակները մեծազույն համակրանքով են արտահայտվում հայ վրիժառուների մասին և նրանց սխրանքը գնահատում որպես հերոսություն: Լիբանանյան հանրագիտարանում նրանց այդպես էլ կոչում են՝ հերոսներ, ֆիդայիներ, ծարդիկ, որոնք իրենց նվիրաբերել են արդար և սուրբ գործի<sup>351</sup>: Ամին Սաիդը քննվ գարձացած չէ, որ հայ երիտասարդության ներկայացուցիչները պատերազմից հետո, ինչպես ինքն է թվարկում, ապանեցին եմիր Սաիդ Չալիմին, Սիմադ Ջեմալ փաշային, Յալեթ փաշային<sup>352</sup>: Դա նրա համար միանգամայն տրամաբանական և բնական քայլ էր: Նույն տեսակետն է արտահայտել Ֆուադ Չասամ Չաֆիզը, որը երիտթուրքերի սպանությունն իրականացրած հայ կտրիճներին համարում է ֆիդայի: Եւ մուսուլման, նշելով, թե վրիժառուներից ով երիտթուրքական դահիճներից ողին, որտեղ և երբ է վերացրել, նպատակահարմար է գտել իր գրքում մեկամեկ թվարկել թուրք այն հայ երիտասարդների անունները, որոնք կատարել են այդ սխրանքը<sup>353</sup>: Այդպես վարվում են, երբ խոսք է գնում հերոսների մասին: Նրանց ուղղակի հերոսներ է անվանում Սաադ Դադիրը<sup>354</sup>: Չայ վրիժառուներին նույն գնահատականն է տալիս նաև լիբանանյան հասարակական գործիչ Տուսուֆ Խաթթար Չելուն՝ «Չայը մերժեց ծով գլուխը» իր հոդվածում, որը հայ-արաբական բարեկամական հարաբերությունները գնահատելու մի հաջողված փորձ է: Եւ գտնում է, որ նրանք «հայ ժողովրդի հերոսներն են, որոնք զոհի գնացին բասնեթորդ դարու սկզբնավորության ֆաշիզմի ու նացիզմի կազմակերպած ցեղասպանության»<sup>355</sup>:

Արաբական պատմագիտությունը հայ վրիժառուների հարցին չի մոտենում լուկ հայկական ցեղասպանության մեղավորներին պատժելու տեսանկյունից: Նրանում այդ հարցը լուսաբանվում է նաև արաբ ժողովրդի հետ կատարված ողբերգության տեսանկյունից: Ինչպես նշվել

351 Դաիդա ալ-Մաարիֆ, 1. X, էջ 310:

352 Амин Саид, Восстание арабов в XX в., с. 60.

353 Ֆուադ Չասամ Չաֆիզ, Չայ ժողովրդի պատմությունը, էջ 316:

354 Սաադ Դադիր, Արաբական պատմություններ, էջ VII:

355 Տուսուֆ Խաթթար Չելուն, Չայը մերժեց ծով գլուխը, Բարուս, «Կակ», ծածուկ 23, 1990:

